Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ախալցխայի և Ախալքալաքի գավառների մահմեդականները ռազմական գործողություններ սկսեցին հարևանությամբ բնակվող հայկական և վրացական բնակավայրերի դեմ: Չինված ջոկատները ենթարկվում էին թուրքական հրամանատարությանը: Այդ մասին է վկայում Ախալքալաքի գավառի դրոշման մասին գեներալ Թ. Նազարբեկյանի 1918 թ. ապրիլի 15-ի նամակը, որտեղ հաղորդվում էր, որ «թաթարները հայ տարարեցին, որ իրենց ռուսահպատակ չեն համարում, իսկ թուրքական կառավարությունից բանակցությունների սկսման կամ ռազմական գործողությունների դադարեցման մասին հաղորդագրություն չեն ստացել, ուստի իրենք հարկ չեն համարում վերադառնալ խաղաղ աշխատանքին և հարևան ժողովուրդների հետ համակեցությունը, հետևաբար հայերի հետ պատերազմի մեջ են գտնվում»²¹²: Նույն խնդրի շուրջ է խոսվում նաև Վեհիբ փաշային ուղղված գեներալ Ի. Օդիշելիձեի նամակում²¹³: Գավառների տարածքներ խուժած թուրքական զորքերի հետ տեղացի մահմեդականները իրականացրին քրիստոնյաների,

²¹² Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, Типография Правительства Грузинской Республики, 1919, с. 256.
²¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 256-257:

մասնավորապես հայերի ջարդեր²¹⁴: Հայկական բնակչությունը մեծ կորուստներ կրեց նաև Բակուրիանի և Ճակայի բարձրադիր լեռնային շրջաններում, որտեղից Վրաստանի իշխանությունները դեպի երկրի խորքեր թռչել էին տեղափոխվել փախստական հայերին²¹⁵:

1918 թ. մայիսին Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականների պատվիրակները Բաթումի կոնֆերանսի ժամանակ ցանկություն հայտնեցին միանալ Թուրքիային²¹⁶: Պատերազմի ավարտից և թուրքական զորքերի Ախալցխայից հեռանալուց հետո Օմար Ֆայիկ Կիփիանիի ղեկավարած Մեսխեթիի մահմեդականների «ազգային կոմիտեն» սկզբից ստիպված ընդունեց Վրաստանի իշխանությունը, սակայն շուտով վրացական զինված ուժերի հետ բախումները վերսկսվեցին²¹⁷: Արդյունքում տեղի մահմեդականները նախընտրեցին ենթարկվել «Հարավ-արևմտյան Կովկասի ժամանակավոր կառավարությունը» (Կարսի «Շուրա»), որի զինված ջոկատները հարձակվեցին վրացական կայազորների վրա: ²¹⁸ Այդ ընթացքում Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականներին գլխավորած Օմար Ֆայիկ Կիփիանին (Նեմանզադե), Ահմեդ Պեպինովը (Պիպինաշվիլին), Սերվեր-բեգ Ջադելին, Ալի-բեգ Ավալիաշվիլին, ժամանակակից վրացի հեղինակի գնահատմամբ, «պանթուրքիստների կողմից դաստիարակված մեսխեդատատերերի ժռանգներն էին», որոնք «թուրքական իշխանությունների ուղղորդմամբ 1918-1919 թվականներին Մեսխեթիում մահմեդական և քրիստոնյա բնակչության միջև

²¹⁴ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 272-285:

²¹⁵ **Маилян Б. В.**, Краткий очерк изгнания армян из Джавахка в 1918 году, - Седьмая Годичная научная конференция, Российско-Армянский (Славянский) университет, 3-7 декабря 2012, 2013, с. 77-83.

²¹⁶ Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 310-312.

²¹⁷ **Մաիլյան Բ.**, Ազգային հարցը և հայերի կացությունը Վրաստանի Հանրապետությունում (1918-1921 թթ.), Երևան, «Գիտություն», 2016, էջ 62-70:

²¹⁸ Տե՛ս նաև նշվ. աշխ., էջ 62-63:

արյունալի բախումներ կազմակերպեցին»²¹⁹: Ի վերջո, Վրաստանին հաջողվեց Ախալցխայի գավառում հաստատել իր իշխանությունը: Դրան մեծապես նպաստում էր առաջ քաշված ինքնավար «Մահմեդական Վրաստանի» գաղափարը, որն այդպես էլ չիրագործվեց²²⁰: Մահմեդականների առաջնորդներից Օմար Ֆայիկ Նեմանզադեն ու Ահմեդ Պեպինովը ապաստան գտան Ադրբեջանում²²¹:

Ինչպես տեսնում ենք, XIX դարի սկզբին արդեն գավառի մահմեդականները ընդգծված թուրքամետ կողմնորոշում ունեին, թեև, ինչպես նշում է Բ. Մախլյանը, բնակչության մի մասը ինքնավարություն ստանալու պայմանով դեմ չէր Վրաստանին միանալուն²²²: Ենթադրաբար, դա մահմեդականների այն հատվածն էր, որը դեռ հիշում էր իր ոչ մահմեդական նախնիների մասին:

1921 թ. փոլշևիկների իշխանության հաստատումից հետո իրավիճակը հանդարտվեց: Խորհրդային իշխանությունները սկսեցին վարել Ա. Օսիպովի գնահատմամբ «ազգերի և ազգություններին կառուցման» քաղաքականություն՝ միավորելով լեզվով և մշակույթով մոտ խմբերին²²³: Այդ քաղաքականությունը խորհրդային հանրապետություններում միատարր տիտղոսային ազգերի ձևավորման նպատակ էր հետապնդում²²⁴: Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականներին դիտարկում էին որպես ապագա Ադրբեջանական ազգի մի մաս: 1923 թ. խորհրդային իշխանությունները համատարած սկսեցին փոխել մահմեդականների ազգանունները և անձնագրերում նրանց որպես

²¹⁹ ზღუაშვილი უ., დას. ნაშ., გვ. 18.

²²⁰ **Маилян Б.**, Между Грузией и Турцией: особенности ирредентизма на примере Аджарии и Самцхе-Месхетии (1918-1921 гг.), Историческое пространство. Проблемы истории стран СНГ, Москва, 2015, с. 142-143; **Մախլյան Բ.**, նշվ. աշխ., էջ 60-62:

²²¹ **Юнусов А.**, указ. соч., - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_20_junusov.shtml (15.10.2018).

²²² **Մախլյան Բ.**, նշվ. աշխ., էջ 70:

²²³ **Симоненко В.**, указ. соч., с. 79.

²²⁴ **Баберовски Й.**, Враг есть везде. Сталинизм на Кавказе, с. 305-337.

«Թյոլրք», իսկ 1930-ականների վերջերից որպես «ադրբեջանցի» գրանցել ²²⁵: Այս ընթացքում բացվում է ինդյանց ներդրումը դասավանդվում էր Ադրբեջանի ԽՍՀ-ում տարածված լեզվով, իսկ ուսուցիչները և կուսակցական կադրերը ընտրվում էին Ադրբեջանից ²²⁶: Ախալցխայում բացվում է ադրբեջանական թատրոն և տպագրվում են միջարթ թերթեր՝ ադրբեջաներեն լեզվով. Ադիգենում՝ «Ադըգյունս կոլխոգչունսու» (Ադիգենի կոլտնտեսական) և «Ղըզըլ ռենջբեր» (Կարմիր ռանչպար), Ախալցխայում՝ «Կոմունիստ», Ասպինձայում՝ «Բադբան» (Այգեպան) և «Սոսիալիզմ կենդի» (Սոցիալիստական գյուղ)²²⁷: Այս ամենի իրագործման մեջ կարևոր դեր են խաղացել մեզ արդեն հայտնի Օմար Ֆայիկ Կիպիանին, Ահմեդ Պեպինովը, Օսման Սերվեր-բեկը և այլն ²²⁸:

1930-ականների վերջերիս և 1940-ականների սկզբին Վրաստանի ԽՍՀ իշխանությունները փորձեցին դպրոցներում ուսուցումն իրականացնել վրացերենով, ինչպես նաև վրացական ազգանուններ տալ մահմեդականներին ²²⁹:

Խորհրդային իշխանությունների կողմից այս ընթացքում անցկացվեց երկու մարդահամար, որոնք էլ թույլ են տալիս դատել բնակչության թվի և էթնոկրոնական կազմի փոփոխություններին:

1926 թ. համախորհրդային մարդահամարի տվյալների համաձայն երկու գավառների բնակչության ընդհանուր թիվը կազմել է 175,9 հազար մարդ: Ախալցխայի գավառում բնակվում էր 96973 մարդ, այդ թվում 49170 «Թյոլրք» (50,7%), 24353 վրացի (25,1%), 15565 հայ (16,1%), 3094 քուրդ (3,2%), 586 օսմանյան թուրք (0,6%):

²²⁵ Мамулия Г., указ. соч., - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (22.12.2018).

²²⁶ ღლუამვილი უ., დას. ნაშ., გვ. 18-19; Джапаридзе А., Месхети: мусульманизация грузин, Тбилиси, Изд-во «Универсал», 2008, с. 38.

²²⁷ Гаджиев А., Ахалцхские турки: история, этнография фольклор, - «IRS Наследие», 2007, № 2(26), с 9.

²²⁸ Տե՛ս նոյն տեղում:

²²⁹ Khazanov A. M., op. cit., p. 3; Симоненко В., указ. соч., с. 83.

Բնակչության 4,3%-ը կազմում էին ռուսները, ուկրաինացիները, հրեաները, հոլանդները, լեհերը և այլ ազգերի ներկայացուցիչները: Յարկե նշել, որ վրացիներից 11658 մարդ, այսինքն վրացական բնակչության շուրջ 12%-ը թուրքախոս էին: Ախալքալաքի գավառում բնակվում էր 78937 մարդ, այդ թվում՝ 57791 հայ (73,2%), 7565 վրացի (9,6%), 6940 «թյուրք» (8,8%), 930 թուրք (1,2%) և 7,2% այլ ազգերի ներկայացուցիչներ²³⁰:

1897 թ. մարդահամարի տվյալների համեմատ «թյուրքեր»-ի թիվը և տեսակարար կշիռը կտրուկ ավելացել է, ինչը պայմանավորված է նաև նրանով, որ «թյուրքեր» անվան տակ նախկին «թաթարների», թարաքամների, կարափափախների, թուրքմենների, թուրքերի (օսմանյան թուրքերի) և մահմեդական վրացիների հետմիասին տվյալներում ներառվել են այլ թուրքախոս խմբեր: Վրացիների թիվը 1897 թ. համեմատ նվազել է առաջին աշխարհամարտի տարիների իրադարձությունների, ինչպես նաև վրացախոս հրեաներին չներառելու պատճառով: Ախալքալաքի գավառում հայերի թիվն ավելացել է 1897 թ. մարդահամարի տվյալների հետ համեմատած, սակայն կտրուկ նվազել է 1914 թ. տվյալների դիմաց՝ պայմանավորված Առաջին աշխարհամարտի տարիների նկրած կորուստներով:

1939 թ. համախորհրդային մարդահամարի անցկացման ժամանակ Սամցխեի և Ջավախքի վարչատարածքային բաժանումն արդեն փոխվել էր: Նախկին Ախալցխայի և Ախալքալաքի գավառների փոխարեն ներկայացված են Ադիգենի, Ախալցխայի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների տվյալները: Ադիգենի շրջանը, Ախալցխայի շրջանը և Ասպինձայի շրջանի մեծ մասը նախկինում կազմում էին Ախալցխայի գավառը, իսկ Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանները՝

²³⁰ Всесоюзная перепись населения 1926 г., т. 14, отд. I, Москва, ЦСУ СССР, 1929, с. 84-91.

Նախկին Ախալքալաքի գավառը: Նախորդ տարիների հետ համեմատությու անցկացնելու նպատակով պետք է հաշվել այդ շրջանների բնակչությունը: Այսպես, Ադիգենի, Ախալցխայի և Ասպինձայի շրջանների բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 129448 մարդ, որից 82947 «ադրբեջանցի» (64.1%), 19137 հայ (14,8%), 17802 վրացի (13,8%), 3472 քուրդ (2,7%), և մնացած 4,7%՝ ռուսներ, հրեաներ, ուկրաինացիներ, հոլանդներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Նշենք, որ հայերի մեծ մասը՝ 16454 մարդ բնակվում էր Ախալցխայի շրջանում: Ախալքալաքի և Բոգդանովայի շրջաններում բնակվում էր 99230 մարդ, որից 81457 հայ (82,1%), 5024 «ադրբեջանցի» (5,1%), 4950 վրացի (5.0%), 386 քուրդ (0,4%) և 7,4%-ը՝ ռուսներ, հոլանդներ, հրեաներ և այլ ազգերի ներկայացուցիչներ ²³¹:

1939 թ. մարդահամարը, նախորդ երկու մարդահամարների հետ համեմատած, ավելի սահմանափակ տեղեկություն է հաղորդում: Բացի այդ, ինչպես երևում է, քրդերից բացի շրջանների բոլոր մահմեդականներին գրանցել են որպես «ադրբեջանցիներ»:

Այսպիսով, հանրագումարի բերելով վիճակագրական տվյալները, կարելի է հանգել հետևյալ եզրակացության (տե՛ս աղյուսակներ №1 և №2).

Աղյուսակ №1. Ախալցխայի գավառի բնակչության կազմը 1873-1939 թթ.

²³¹ Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения районов, городов и крупных сел союзных республик СССР - http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=777 (05.01.2019).

Տարեթիվը	Բնակչության թիվը	Ընդամենը	Չափեր	Վրացիներ	Մահմ. վրացիներ ²³²	Թաթարներ ²³³	Քրդեր	Այլ ազգեր
1873	մարդ	43377	15415	3239	19000	2200	451	3072
	%	100	35,5	7,5	43,8	5,1	1,0	7.1
1886	մարդ	58791	15042	8285	14900	16125	1226	3213
	%	100	25,6	14,1	25,3	27,4	2,1	5.5
1897	մարդ	68837	15144	10900 ²³⁴	24137 ²³⁵	12370	1396	4890
	%	100	22,0	15,8	35,1	18,0	2,0	7.1
1914	մարդ	95975	27149	7893	-	50851	1993	8089
	%	100	28,3	8,2	-	53	2,1	8.4
1926	մարդ	96973	15565	24353	-	49170	3094	4791
	%	100	16,1	25,1	-	50,7	3,2	4.9
1939	մարդ	129448	19137	17802	-	82947	3472	6090
	%	100	14,8	13,8	-	64,1	2,7	4.7

Ինչպես տեսնում ենք, Ախալցխայի գավառում մահմեդականների (ժամանակակից մեսխեթցի թուրքերի) ընդհանուր թիվը 1873-1939 թթ. ընթացքում 21,2 հազարից հասել է շուրջ 83 հազարի, իսկ տեսակարար կշիռը 48,9%-ից 64.1%-ի: Ոչ մահմեդական վրացիների թիվը նույնպես էական աճ է գրանցել 3,2 հազարից

²³² Նշված խմբի համար նախընտրել ենք այս տարբերակը, քան ի որ XIX դարի ռուսական աղբյուրներում այն առավել շատ է կիրառվել: Բացի այդ, ինչպես արդեն գիտենք, այս խմբի ներկայացուցիչների մեծ մասը մահմեդականացած վրացիների հետնորդներն էին:

²³³ Այս անվանումը պայմանական է և 1873-1897 թթ. ընթացքում գլխավորապես թարաքամներին է ներառում: Չետագա տարիներին նաև նրանց թվում են մահմեդական վրացիները, քանի որ վիճակագրական տվյալները թուրքի չեն տալիս հաշվարկել նրանց թիվը:

²³⁴ Այդ թվում մվրացախոս կաթոլիկները:

²³⁵ Սա շրջանի «թուրքերի», այսինքն թուրքախոս մահմեդականների թիվն է, որոնք, ի տարբերություն «թաթարների» խոսում էին թուրքերենի արևելյան բարբառներից մեկով:

հասնելով 17,8 հազարի: Աճել է նաև նրանց տեսակարար կշիռը, 7,5%-ից հասնելով 13,8%-ի: Հայերի թիվը Ախալցխայի գավառում համեմատաբար կայուն էր և կազմում էր մոտ 15,5 հազար մարդ՝ աճ գրանցելով միայն վերջին տարիներին: Սակայն այլ էթնիկ խմբերի բնակչության թվի աճի պայմաններում, հայերի տեսակարար կշիռը շարունակաբար նվազել է՝ 35,5%-ից հասնելով 14,8%-ի: Քրդերի մոտ գրանցվել է կայուն բնական աճ:

Աղյուսակ № 2. Ախալքալաքի գավառի բնակչության կազմը 1873-1939 թթ.

Տարեթիվը	Բնակչության թիվը	Ընդամենը	Հայեր	Վրացիներ	Թաթարներ ²³⁶	Քրդեր	Այլազգեր
1873	մարդ	49909	36163	2809	4404	292	6241
	%	100	72,5	5,6	8,8	0,6	12.5
1886	մարդ	63799	46384	3741	6091	694	6889
	%	100	72,7	5,9	9,5	1,1	10.8
1897	մարդ	72709	52539	6451 ²³⁷	6569 ²³⁸	810	6340
	%	100	72,3	8,9	9,0	1,1	8.7
1914	մարդ	104946	81014	6905	5839	731	10457
	%	100	77,2	6,6	5,6	0,7	10.0
1926	մարդ	78937	57791	7565	6940	930	5711
	%	100	73,2	9,6	8,8	1,2	7.2
1939	մարդ	99230	81457	4950	5024	386	7413
	%	100	82,1	5,0	5,1	0,4	7.5

Ախալքալաքի գավառում նույն ժամանակահատվածում թաթարների թիվը տատանվել է 4,4 հազարից մինչև 6,9 հազար, իսկ տեսակարար կշիռը

²³⁶ Այս դեպքում թաթարների թիվը գլխավորապես ներառում է թարաքամներին և թուրքմեններին:

²³⁷ Այդ թվում վրացախոս կաթոլիկները:

²³⁸ Ներառված չեն 296 «թուրքերը», որոնք, ըստ էության մահմեդականացած վրացիներն էին:

8,8%-ից նվազել մինչև 5,1%: Վրացիների թիվը 2,8-7,5 հազարի սահմաններում է տատանվել, իսկ տեսակարար կշիռը՝ 5,0%-9,6%: Հայկական բնակչության թիվը կայուն աճ է գրանցել 36,1 հազարից հասնելով մոտ 81,4 հազարի, իսկ հայերի տեսակարար կշիռը 72,5%-ից հասել է 82,1%-ի: Քրդերի թիվը եղել է աննշան:

Այսպիսով, Ռուսական տիրապետության հաստատման արդյունքում մահմեդական բնակչության մի մասը տեղափոխվեց օսմանյան կայսրություն: Արևմտյան Հայաստանից տեղի ունեցավ հայերի և հույների ներգաղթ: Հայերի ներգաղթն ընդամենը համալրեց շրջանի հայկական բնակչության թիվը, այլ ոչ թե «հայկականացրեց» այն: Գլխավոր տարբերությունը տեղի և գաղթական հայերի միջև դավանանքն էր: Գաղթականները հայ առաքելական եկեղեցու հետևորդներ էին, իսկ տեղի հայերի զգալի մասը մահմեդականացումից խուսափելու համար ընդունել էր կաթոլիկություն՝ որոշ չափով բարելավելով իրենց կարգավիճակը Հռոմի Պապի և եվրոպական տերությունների երաշխիքների հաշվին: Հետագա տարիներին հայերը կազմեցին Ախալքալաքի գավառի բնակչության հիմնական մասը, իսկ Ախալցխայի գավառում նրանց տեսակարար կշիռը հետզհետե նվազեց:

Ռուսական կայսրության տիրապետության տարիներին իշխանությունների քաղաքականությունն անհետևողական էր, և դրա արդյունքում շարունակվեց մահմեդականացած բնակչության էթնիկ ինքնության կորստի գործընթացը և ստեղծվեցին նախադրյալներ խորհրդային իշխանությունների կողմից նրանց նորաստեղծ «ադրբեջանական ազգի» կազմում ընդգրկելու համար: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մահմեդականների մի մասը շարունակում

Էր մնալ երկլեզու և պահպանել իրենց նախնիների ինքնուրույնը:

Վիճակագրական տվյալների վերլուծությունից երևում է, որ Սամցխեում և Ջավախքում բնակվող մահմեդականները, որոնք հետագայում կազմեցին մեզ հայտնի մեսխեթցի թուրքերի էթնոկրոնական խումբը, մեկ դարի ընթացքում բնակչության 1/5 մասից կազմեց նրա 2/5 մասը: Այդ գործընթացին մասնակցություն ունեցան մահմեդական վրացիները (այդ թվում՝ հայերը), թարաքամները, թուրքմենները, թուրքերը: Թարաքամները և թուրքմեններն ընդհանուր առմամբ կազմել են նրանց մոտ 1/3 մասը: 2/3-ում գերակշռում են մահմեդական վրացիները: Թուրքերը և օսմանյան տիրապետության տարիներին մահմեդականացած հայերը նույնպես մտել են «մահմեդական վրացիների» թվի մեջ, սակայն նրանց տեսակարար կշիռը պարզել հնարավոր չէ:

1.3 ՄԵՍԽԵԹՑԻ ԹՈՒՐԹԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՇՐՋԱՓՈՒԼ Ը ԵՎ ՆՐԱՆՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Մեսխեթցի թուրքերի կազմավորման և ինքնուրույն ձևավորման վերջին փուլն ընթացավ միջինասիական խորհրդային հանրապետություններում, որոնք նրանք արտաքսվեցին 1944 թ. վերջին: Տեղահանման պատճառներն ու հետևանքները ավելի մասնրամասն կքննարկվեն հաջորդ գլխում, իսկ այստեղ կանդորադառնանք նրանց ինքնուրույն ձևավորման խնդրին: Միայն նշենք, որ 1944 թ. պաշտոնական

փաստաթղթերում նրանք արդեն անվանվում էին «թուրքեր», այլ ոչ թե «ադրբեջանցիներ»²³⁹:

Միջինասիական հանրապետություններ արտաքսված փոքրաթիվ թուրքախոս ժողովուրդը, հայտնվելով միմիջավայրում, որտեղ մշակութային և լեզվական խոչընդոտների գրեթե չկային, պետք է տարալուծվեր տեղի ժողովուրդների շրջանում, սակայն դատեղի չունեցավ: Պատճառների թվին են դասվում «տեղացի-եկվոր», սոցիալ-հոգեբանական հակադրությունը, ինչպես նաև մարդաբանական տարբերությունները²⁴⁰: Ավելին, որոշ հետազոտողների կարծիքով՝ հենց արտաքսումը նպաստեց մեսխեթցի թուրքերի համախմբմանն ու ինքնուրույն ձևավորմանը²⁴¹:

Վրաստանի հարավային շրջաններից արտաքսված ժողովուրդներից թարաքամաներն ու թուրքմենները հետզհետե սկսեցին ձուլվել մեծամասնություն կազմող թուրքախոսների հետ²⁴²: Թեև, հարկ է նշել, որ թերեքեմենների միմասը դեռ չին ունենալով մեսխեթցի թուրքերի հետ: Աջարիայից արտաքսված թուրքերը նույնպես ձուլվել են Մեսխեթցի թուրքերի հետ²⁴³: Մահմեդական համալսարանները (հեմշինները) և քրդերը, չնայած առանձին դեպքերի, մեծ մասամբ մինչ այժմ պահպանում են իրենց ինքնուրույնը²⁴⁴: Այսպիսով, մեսխեթցի թուրքերի կազմավորման վերջնական փուլում որոշ թյուրքական ցեղախմբեր մասնակցություն ունեցան այդ գործընթացում: Եթե հաշվի առնենք մեր կողմից արդեն վերլուծված

²³⁹ **Бадурашвили И., Цуладзе Г., Анчабадзе Г.**, Проблемы репатриации месхов в Грузию, - «Центральная Азия и Кавказ», 2000, № 1(7) - https://www.ca-c.org/journal/2000/journal_rus/cac_07_2000/21.badurashv.shtml (20.02.2019).

²⁴⁰ **Арис Казинян:** Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

²⁴¹ **Sverdlov S.**, Reflections on Transitional Minorities and Human Rights: Meskhetians and Hemshins in Georgia and Krasnodar, - Anthropology, Minorities, Multiculturalism, Krasnodar, 2004, Vol. 5, p. 8; **Khazanov A. M.**, op. cit., p. 7.

²⁴² **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, op. cit., p. 15-17; **Осипов А.**, указ. соч., с. 115.

²⁴³ **Полян. П.**, Не по своей воле... История и география принудительных миграций в СССР, Москва, «ОГИ-Мемориал», 2001, с. 141.

²⁴⁴ **Sverdlov S.**, op. cit., p. 9; **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, op. cit., p. 20-21, 24-25.

վիճակագրական տվյալները, ապա թարաքամաներն ու թուրքմենները պետք է կազմեին արտաքսված թյուրքախոս բնակչության մինչև 1/3 մասը:

Մինչ արտաքսումը, այս հանրույթի ներկայացուցիչներն էթնիկ ինքնուրույն՝ որպես այդպիսին չունեին: Նրանց ինքնուրույն առանցքը կրոնն էր, թեև պակաս կարևոր չէր նաև բնակության վայրի ու տոհմի դերը²⁴⁵: XX դարում ձևավորված էթնիկ ինքնուրույնը հարուրամյակի երկրորդ կեսին եղել է փոփոխական: Արտաքսումից մինչև 1960-ական թվականների վերջը գերակշռում էին թուրքական ինքնուրույն ունեցողները, թեև քչերն էին Թուրքիա արտագաղթելու կողմ արտահայտվում²⁴⁶: 1970-1980-ական թթ.ի հայտեկան զգալի թվով մարդիկ, ովքեր ընդունում էին իրենց վրացական ծագման վարկածը: Նրանք պահպանել էին արդյոք վրացական ինքնուրույնը, թե ոչ՝ դժվար է ասել, քանի որ նման վարքագիծը կարող էր պայմանավորված լինել ՎԽՍՀ իշխանությունների դիրքորոշմամբ²⁴⁷, որպեսզի իրենց թուրքլի տրվեց վերադառնալ նախկին բնակության վայրեր: Ինքնուրույն փոփոխությունը բացատրվում է նաև խորհրդային իշխանությունների կողմից հետապնդումներով²⁴⁸: Անկախ պատճառներից, կարելի է եզրակացնել, որ մեսխեթցի թուրքերի մի մասը հայրենադարձության հարցն ավելի բարձր էր դասում, քան իրենց ինքնուրույն հարցը, որը բավականին հեշտուրույն կարող էր փոխվել՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

²⁴⁵ **Aydingün A.**, *Creating, recreating and redefining ethnic identity: Ahıska/Meskhetian Turks in Soviet and post-Soviet contexts*, - *Central Asian Survey*, 2002, Vol. 21(2), p. 188.

²⁴⁶ **Khazanov A. M.**, *op. cit.*, p. 8; **Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.**, *op. cit.*, p. 15-16.

²⁴⁷ ՎԽՍՀ իշխանությունները ոչ պաշտոնապես առաջ էին քաշում հայրենադարձների կողմից իրենց վրացական ծագման ընդունման և ազգանվան փոփոխության պահանջը: Ավելի մանրամասն այս հարցը կքննարկվի հաջորդ գլխում:

²⁴⁸ **Թուրքմենները**, նշված խ., թ. 88-89.

Ներկայումս այս հանրություն անվանված քաղաքային ինչպես՝ ազիտական շրջանակներում, այնպես՝ էլ հենց իրենց մեսխեթցի թուրքերի շրջանում ընդհանուր մոտեցում չկա: Վրացի և միջարք այլազգի հետազոտողներ նախընտրում են նրանց անվանել «մեսխեթ», «մեսխեթցիներ», «մահմեդական մեսխեթ»²⁴⁹: Թուրք, ադրբեջանցի և միջարք օտարազգի հետազոտողները նախընտրում են «թուրքեր» կամ «ահըսկա թուրքեր» (ahıska türkləri) եզրույթները²⁵⁰: Վերջինս ծագում է նրանց նախկին բնակության վայրի՝ Օսմանյան կայսրության Չըլդըրի էյալեթի (Ախալցխայի փաշայության) կենտրոնը հանդիսացող Ախալցխա քաղաքի թուրքերեն անվանումից:

Ռուսալեզու գրականությունում առավել տարածված է «թուրք-մեսխեթցիներ» (турки-месхетинцы) եզրույթը, որը մեր կարծիքով այնքան էլ ճիշտ չէ, քանի որ այս դեպքում մեսխեթցիները (մեսխեթը) ընկալվում են որպես թուրքեր, ուստի այս տարբերակում կողմնակալ ձևով խեղաթյուրվում է իրականությունը, և վրացական ազգագրական խմբերից մեկը ներկայացվում է որպես թուրքական:

Գիտական գրականության մեջ առավել հաճախ հանդիպում է «մեսխեթցի թուրքեր» եզրույթը: Այս անվանումը նաև փոխզիջումային տարբերակ է համարվում²⁵¹: Տվյալ դեպքում «մեսխեթցի» բառը մատնանշում է խմբի կազմավորման վայրը: Յարկ է նշել, որ «մեսխեթցի թուրքեր» եզրույթն ի հայտ է եկել 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին, բայց լայն տարածում է գտել միայն 1980-

²⁴⁹ Վրացական պաշտոնական փաստաթղթերում կիրառվում է «1944 թ. Վրաստանի հարավային շրջաններից արտաքսված բնակչություն» եզրույթը, հաշվի առնելով արտաքսվածների ոչ միատարր գնդակազմը ինքելը: Այս եզրույթն են նախընտրում նաև վրացի հետազոտողներից ոմանք: Ավելի մանրամասն տե՛ս Գրիգորյան Թ., Վան. համ., թ. 155.

²⁵⁰ Akkaya A., Ahıska/Meskhetian Turks' diaspora, sense of belonging, and identity, - Turkish Review, 2013, Vol. 3 (3), p. 254.

²⁵¹ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 37-38; Pentikäinen O., Trier T., op. cit., p. 31-32.

ականներին²⁵²: Այն առաջացել է միջնադարյան Վրաստանի հարավային շրջաններից մեկի՝ Մեսխեթի անվանումից: Մեսխեթցի թուրքերից շատերը չեն կիրառում այդ անվանումը, ինչի մասին վկայում է այն, որ 2010 թ. ՌԴ-ում անցկացված մարդահամարի տվյալներով, այնտեղ բնակվող մոտ 100000 մեսխեթցի թուրքերից միայն 4825 մարդ է գրանցվել որպես «մեսխեթցի թուրք»²⁵³, մինչդեռ գերակշիռ մասը գրանցվել են որպես «թուրք»: ԱՄՆ-ում հաստատված մեսխեթցի թուրքերի մի մասը նույնպես իրենց կոչում են «թուրք»²⁵⁴: Ղազախստանում և Ուզբեկստանում անցկացված ուսումնասիրության ժամանակ զգալի թվով մարդիկ հրաժարվել են «մեսխեթցի թուրք» անվանումից՝ նախընտրելով կոչվել «ահըսկա թուրք»²⁵⁵: Փաստորեն, «մեսխեթցի թուրքեր» եզրույթը հանդիսանում է տվյալ խմբի առավել տարածված և, միևնույն ժամանակ, առավել չեզոք արտանունը (էկզոթենոնիմը): Այդ իսկ պատճառով աշխատանքում նախընտրել ենք հենց այս տարբերակը:

Ինչ վերաբերվում է նրանց ինքնանվանմանը (էնդոթենոնիմին), ապա մեսխեթցի թուրքերի միջնչին մասն է անվանում իրենց «մեսխեթ», ընդունելով իրենց վրացական ծագումը, ինչը, սակայն շատերի համար անընդունելի է: Մեծ մասը նախընտրում են «թուրքեր» կամ «ահըսկա թուրքեր»²⁵⁶ տարբերակները՝ ընդգծելով իրենց թուրքական ինքնությունը: Վերջին տարբերակը հետզհետե ավելի լայն տարածում է գտնում մեսխեթցի

²⁵² **Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.**, Meskhetian Turks An Introduction to their History, Culture and Resettlement Experiences, Washington DC, Central Applied Linguistics, 2006, p. 2.

²⁵³ **Ахметьева В., Карастелев В., Юдина Н.**, Жизнь без прав. Положение ахыска-турок на юге России в 2015 году, Доклад центра «Сова» и Московской Хельсинкской группы, Москва, 2015, с. 6.

²⁵⁴ **Akkaya A.**, op. cit., p. 254.

²⁵⁵ **Oh Ch. J.**, Comparative analysis of the Ahiska (Meskhetian) Turks and Koreans in post-soviet Kazakhstan and Uzbekistan: the making of diaspora identity and culture, - Millî Folklor, 2012, Cilt 24, Sayı 94, s. 14.

²⁵⁶ **Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S.**, op.cit., 2006, p. 2.

թուրքերի շրջանում²⁵⁷, ինչը խոսում է այն մասին, որ նշված հանրույթի շրջանում ձևավորվում է իրենց ինքնուրույն խմբի գաղափարը: Այս տեսակետն ապացուցվում է 2016-2017 թթ. Թուրքիայում բնակվող մեսխեթցի թուրքերի շրջանում անցկացված հարցման արդյունքներով: Իրենց ինքնուրույն ընտրելու հարցին հարցվածների 28,9%-ն ընտրել է «մեսխեթցի թուրք» (ահըսկաթուրք), 8,3%-ը «մահմեդական թուրք», 7,2%-ը «թուրք», իսկ 1 մարդ «մահմեդական» տարբերակները: Յարգվածների 13,3%-ը անհրաժեշտ է համարել նման ինքնորոշումը, իսկ 37,8%-ն ընտրել է բոլոր տարբերակները²⁵⁸:

Այսպիսով, ինքնանվանման հետ կապված հետաքրքիր պատկեր է ստեղծվում: Գտնվելով իրենցից եականորեն տարբերվող հանրույթներում, մեսխեթցի թուրքերը հակված են իրենց նույնացնել թուրքերի հետ, մինչդեռ հայտնվելով թուրքական միջավայրում, ավելի են հակված իրենց առանձնացնել թուրքերից: Այս երևույթը, թերևս, բացատրվում է մեսխեթցի թուրքերի մշակութային առանձնահատկություններով:

Ըստ Ա. Խազանովի, արտաքսված մեսխեթցի թուրքերի կրթված ության աստիճանը շատ ցածր էր, նրանցից միայն 63 հոգի ուներ բարձրագույն կրթություն, իսկ մեծահասակների 62%-ը կրթություն չուներ: Առանձին փոքր խմբերով նրանց բնակեցված լինելը հանգեցրեց նյութական մշակույթի միմասի կորստին՝ հագուստի, տների կահավորման, գյուղատնտեսության, անասնապահության և այլ բնագավառներում նրանք ընդօրինակեցին միջինասիական ժողովուրդներից²⁵⁹:

²⁵⁷ **Осипов А. Г.**, Обзор публикаций по месхетинской проблеме, - Археология и этнография понтийско-кавказского региона, Вып. 3, Краснодар, Кубанский гос. университет, 2015, с. 202.

²⁵⁸ **Karaman Z. T., Mursül D.**, Meskhetian (Ahiska) Turks in Turkey and Their Perception of Spatial Belonging, - Open Journal of Social Sciences, 2018, Vol. 8, p. 94.

²⁵⁹ **Khazanov A. M.**, op. cit., p. 6-7.

მეუხეშეგები პირობების მახინჯი ან ანგამან დარკადი
ოგთის:

აქამ დრავებენ გრებენი მხედრე ზიხონომ,
აქსორითარისებრი უნაგებომ ჯათენს ან მონაგებ
ენ, ისე ბრითაუარისებრი ან ზენს დიორელი: სმან
ყათებრ ენიუნისი ან მეუხეშეგები პირობების
უნთახიხებრიომ, ირინგ სახისისებრი მიხე
ართაქსომი ჯარონსაკიომ ეის მსალ დრავაქსო:
ქრასთან დერაფარბად მეუხეშეგები პირობების
მიჯადარიომ კათარად ხეტაგითიქიონსი გიუნგ
ე თქელი, ირ სრანქ თანღ გერაფასომ ენ
ხაღორისგველი პირობების, მიხეგი ხეტონსიქიონს
არველი, ირ ხაქრისაფარბიქიონს ხამარ იქიომსენ
სებრკაქსიუნსი, ბრე სქველი ე, ირ ბრენქ
თირაქსთომ ენ დრავებენის, უნამენსი ქრასთან
ქქანსიქიონსისებრი ხამარ აქელი უნდონსელი
კებრაროდ სებრკაქსიონსიყათასენიონსიგელი²⁶³:

მეუხეშეგები პირობების ქედიონსიონსი სას აქ
ქედიონსის ადრეგონსიონსი: რეღისასებრი
ხამად ანსიქიონსი ზენს გაქიონსი მეუხეშეგები პირობების
ქედიომ ირანს, მასსადიორაქს, დრავებენის ბებრი
ქიონსი: მი ჯარქ ხეტაგითიონსის აქიომამქ, ან
ყარონსაკიომ ე მებქვი დრავებენს რანბრ
ართახაქსთიქიონსისებრი²⁶⁴: S. ფონსიარადენს
სიუნსიყს აქ კარბიქს ე ართახაქსთომ ს
აყაგონსიომ ე რამეუხეშეგები პირობების ქედიომ
«ქრავასან მებქრანაქაქარისიონსიუნსისებრი (ბ,დ,კ,
თ, ყ, «ყ»²⁶⁵)» ანსიქიონსამქ, ირინქ ზენს კარნი
ქიონსიქსან ბადიომიონსისაქ²⁶⁶: ირიქ ხეღისასებრი
ასიონსი, ირ იქ პირობასან რანაქაქარე ზსეის

²⁶³ ბერიძე მ., კობაძე მ., ეთნიკური ჯგუფის ჩამოყალიბების მცდელობა (ვინაობის ცვლის დინამიკა მესხთა
გამუსლიმების მაგალითზე), - იბერიულ-კავკასიური ენათმეცნიერება, 2008, № 36, გვ. 66.

²⁶⁴ Панеш Э. X., Ермолов А. Б., Турки-Месхетинцы (историко-этнографический анализ проблемы), - Советская этнография,
1990, № 1, с. 16; Бараташвили А., Бараташвили К., указ. соч., с. 116; მოდებაძე ვ., დას. ნაშ., გვ. 152.

²⁶⁵ დრავებენს ქედიომ ანსი «ყ» ისექიონსი ხაქრისიომ
ხამარქსექიონსი:

²⁶⁶ ფუტყარაძე ტ., დას. ნაშ., გვ. 157.

Է²⁶⁷: Ա. Կուլզնեցովը նշում է, որ արտաքսման տարիներին մեսիտեթցի թուրքերը առանձին բառեր և նույնիսկ արտահայտություններ են փոխառել միջինասիական լեզուներից՝ հատկապես ուզբեկերենից²⁶⁸:

Մեսիտեթցի թուրքերի լեզվի հետազոտությունը միջարք ժամանակակից ուսումնասիրությունների միջոցով թույլ է տալիս պարզել նրա կապը տարածաշրջանի այլ լեզուների հետ:

Ըստ լեզվաբան Ֆ. Ալիևի ձևաբանական և հնչյունաբանական առումներով լեզուն նման է թուրքերենի արևելյան շրջանների բարբառներին: Այն ունի 39 հնչյուն՝ 29 բաղաձայն և 10 ձայնավոր (ժամանակակից թուրքերենում կա 29 հնչյուն): Լեզվում առկա են 8 հազագային (կոկորդային խուլ պայթական) հնչյուններ, որոնք բնորոշ են վրացերենին, ինչպես նաև, ի տարբերություն ժամանակակից թուրքերենի, նրա ավելի հնամենաձև (արխայիկ) բարբառներում պահպանված հնչյունները: Ֆ. Ալիևի հաշվարկներով Մեսիտեթցի թուրքերի բառապաշարը բաղկացած է 70-75% թյուրքական ծագում ունեցող բառերից, արաբիզմները կազմում են 7,5-8%, իրանիզմները՝ 2,5-3%, իսկ վրացական և հայկական ծագում ունեցող բառերը՝ 1,5-2%²⁶⁹: Ընդ որում, հեղինակը ոչ թյուրքական ծագմամբ բառապաշարը համարում է փոխառություններ, իսկ հնչյունները՝ վրացերենի ու հայերենի ազդեցություն: Արաբիզմներն ու իրանիզմներն, ըստ հեղինակի, ներթափանցել են թուրքերենի կամ վրացերենի միջոցով և գերազանցապես վրացական հասկացություններ են:

²⁶⁷ Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S., op. cit., p. 23:

²⁶⁸ Kuznetsov A., op. cit., p. 216.

²⁶⁹ Алиев Ф. Ф., Очерки по лексике языка турок Казахстана, Алма-Ата, Гылым, 1978, с. 57-70.

Նման եզրակացություն կարելի է հանգել նաև վերջերս թուրք հեղինակների կողմից հրապարակված Թուրքիայի կենտրոնական շրջաններում բնակվող մեսխեթցի թուրքերի խոսվածքներից մեկի բառապաշարի ուսումնասիրությունից²⁷⁰: Թեև աշխատանքի հենց սկզբում հեղինակները տեղեկացնում են, որ վրացերեն և հայերեն ծագում ունեցող բառերի մի մասը չի նշված, քանի որ իրենք այդ լեզուների վերաբերյալ բավարարող բյուրոներ չունեն: Այդ աշխատանքում ընդգրկված վրացերեն և հայերեն բառերը մեծ մասամբ առնչվում են գյուղատնտեսության բնագավառին, թեև կան նաև այլ ոլորտների բառեր: Մեսխեթցի թուրքերի լեզվում ոչ գյուղատնտեսական բնագավառի հայկական ծագմամբ բառերն են՝ *andır* (անտեր), *ciri* (ջրի), *diğa* (տղա) և այլն:

Այսպիսով, մեսխեթցի թուրքերի կազմավորման և ինքնուրույն ձևավորման գործընթացը բավականին տևական գործընթաց է եղել, որը սկսվել է դեռևս XVII դարում և ավարտվել է միայն XX դարում: Դրանում մասնակցություն են ունեցել տարբեր էթնիկ խմբեր, ինչի հետևանքով մինչև այժմ մեսխեթցի թուրքերի շրջանում միասնական մոտեցում չկանշված հարցի շուրջ: Գլխավոր միավորող գործոնը ինչպես նախկինում, այնպես էլ այժմ շարունակում է մնալ կրոնը, թեև նրանց մշակույթի և կրոնի ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողները, ինչպես նաև Ռուսաստանում բնակվող մեսխեթցի թուրքերի շրջանում անցկացված հետազոտությունը փաստում են, որ նրանց մեծ մասը բավականաչափ տեղեկացված չէ իրենց կրոնի՝

²⁷⁰ Çınar Ü., Kurt T., Mâcirce-1 (A sub-dialect of the Meskhetian Turkish), 2019 - https://www.academia.edu/38601340/Mâcirce_a_sub-dialect_of_the_Meskhetian_Turkish_2019 (01.04.2019).

ի ս լ ամ ի մ աս ի ն ²⁷¹: Կ ա զ մ ա վ ո Ր մ ա ն վ ե Ր ջ ի ն փ ո լ լ Ե Ր ո լ մ
հ Ե տ զ հ Ե տ Ե ա վ Ե լ ի մ Ե ծ դ Ե Ր ս կ ս Ե ց խ ա դ ա լ ն ա ն
լ Ե գ ո լ ն : Ա յ ս ա մ Ե ն ը ն պ ա ս տ Ե ց ն Ր ա ն ց մ ո տ հ Ե ն ց
թ ո լ Ր ք ա կ ա ն ի ն ք ն ո լ թ յ ա ն ձ և ա վ ո Ր մ ա ն ը : Մ ի ն ն ո լ յ ն
Ժ ա մ ա ն ա կ վ Ր ա ց ա կ ա ն , հ ա յ կ ա կ ա ն , մ ի ջ ի ն ա ս ի ա կ ա ն
մ շ ա կ ո լ յ թ ն Ե Ր ի ա զ դ Ե ց ո լ թ յ ո լ ն ը մ Ե ս խ Ե թ ց ի
թ ո լ Ր ք Ե Ր ի մ ի մ ա ս ի ն հ ի մ ք Ե տ ա լ ի ս դ ի տ ա Ր կ Ե լ ի Ր Ե ն ց
ո Ր պ Ե ս ա ռ ա ն ձ ի ն , ո լ Ր ո լ յ ն հ ա ն Ր ո լ յ թ : Ա յ ս ա մ Ե ն ը
թ ո լ յ լ Ե տ ա լ ի ս դ ի տ ա Ր կ Ե լ մ Ե ս խ Ե թ ց ի թ ո լ Ր ք Ե Ր ի ն
ո Ր պ Ե ս ա ռ ա ն ձ ի ն Ե թ ն ո կ Ր ո ն ա կ ա ն խ ո լ մ ք Ե թ ն ո ս ի
հ ա յ Ե ց ա կ ա Ր գ Ե Ր ի և տ Ե ս ո լ թ յ ո լ ն ն Ե Ր ի
կ ա ռ ո լ ց ո դ ա կ ա ն (կ ո ն ս տ Ր ո լ կ տ ի վ ի ս տ ա կ ա ն) մ ո տ Ե ց մ ա ն
հ ի մ ա ն վ Ր ա :

²⁷¹ Kuznetsov A., op. cit., p. 217.

Գեղմանիայի հարձակումից հետո հարավկովկասյան հանրապետությունների հետ սահմանային գոտում Թուրքիան կենտրոնացրեց 30 դիվիզիա²⁷⁴: Ստեղծված իրավիճակում Թուրքիային սահմանակից շրջանների մահմեդական բնակչությունը ընկալվում էր որպես «հինգերորդ շարասյուն» և մտավախություն կար, որ թուրքական ներխուժման դեպքում այն կմիանար թշնամուն: Ինչպես արդեն գիտենք, ոչ վաղ անցյալում դեպքերի նման զարգացման նախադեպ արդեն կար: Սակայն երկրորդ աշխարհամարտի ավարտական փուլում նման զարգացումներն այլևս իրատեսական չէին:

ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի (այսուհետև՝ ՊՊԿ) 1944 թ. հունիսի 31-ի № 6279 որոշման մեջ որպես տեղահանության պատճառ էր նշվում Վրաստանի ԽՍՀ պետական սահմանի ապահովությունը²⁷⁵: Իսկ արտաքսումից հետո ՊՊԿ ուղարկված զեկուլցարում նշվում էր, որ բնակչության զգալի մասը՝ ունենալով Թուրքիայի սահմանամերձ շրջանների բնակիչների հետ ազգակցական կապեր, Թուրքիա արտագաղթելու ցանկություն ուներ, զբաղվում էր մաքսանենգությամբ և լրտեսությամբ՝ ի օգուտ թուրքական հետախուզության²⁷⁶:

Ինչպես երևում է վերոգրյալից, արտաքսման պաշտոնական պատճառը սահմանի անվտանգության ամրապնդումն էր: Նկատենք, որ մեսխեթցի թուրքերի, քրդերի ու մահմեդական համշենահայերի տեղահանությունը տեղի է ունեցել, երբ արդեն

հարաբերությունները. Չայկական հարցը, սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947 թթ.), Երևան, 2013, էջ 21-63:

²⁷⁴ **Бугай Н. Ф.**, Л. Берия – И. Сталину: «Согласно вашему указанию...», Москва, «Аиро-XX», 1995, с. 164; **Полян П.**, указ. соч., с. 128.

²⁷⁵ **Бугай Н. Ф.**, Турки из Месхетии: долгий путь к реабилитации (1944–1994), Москва, Изд. дом «РОСС», 1994, с. 69-70.

²⁷⁶ **Бугай Н. Ф.**, Иосиф Сталин – Лаврентию Берия: «Их надо депортировать...»: документы, факты, комментарии, Москва, «Дружба народов», 1992, с. 155-156; **Бугай Н. Ф.**, Турки из Месхетии: долгий путь к реабилитации (1944–1994), с. 76-77; **Гольдберг Г.**, указ. соч., - https://www.ca-c.org/journal/14-1998/st_09_goldberg.shtml (29.11.2018).

պատերազմի ընթացքը վաղուց բեկվել էր, դաշնակիցները մոտ էին հաղթանակին, իսկ Թուրքիայի հարձակման վտանգն արդեն անցել էր: Ելնելով նշվածից, որոշ հեղինակներ բռնագաղթի պատճառ են համարում Թուրքիայի վրա ԽՍՀՄ-ի հարձակման նախապատրաստումը և թույլ զարգացած միջինասիական շրջաններում գյուղատնտեսությունը զարկ տալու ծրագրերը²⁷⁷:

Գ. Մամուլիան պնդում է, որ Վրաստանի խորհրդային իշխանությունները փորձում էին ամեն կերպ խոչընդոտել արտաքսմանը²⁷⁸: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունը հակառակ պատկերն է ստեղծում: Այսպես, ՎԽՍՀ կոմկուսի ԿԿ-ի քարտուղար Կ. Չարկվիանիի և Ժողովրդական կոմիսարիատի խորհրդի նախագահ ՆԳ կոմիսարիատի ղեկավար Վ. Բաքրաձեի 1944 թ. մայիսի 5-ին Քաղբյուրոյի անդամ Լ. Բերիային ուղղված նամակում խոսվում էր միայն Ախալցխայի, Ադիգենի, Ասպինձայի և Ախալքալաքի շրջաններից 14860 «թուրքերի» տնտեսություններ (77500 մարդ) Վրաստանի արևելյան շրջաններ տեղափոխելու մասին²⁷⁹: Իսկ արդեն հունիսի 3-ին Լ. Բերիային ուղարկված նամակում առաջարկվում էր տեղափոխել 16630 տնտեսություն (86600 մարդ) և նշվում.

«Քանի որ հատուկ կոնտինգենտը տեղափոխվում է Վրաստանի սահմաններից դուրս, հարկ ենք համարում վտարել.

ա) քրդերին՝ թվով 1030 տնտեսություն, Ախալցխայի, Ասպինձայի և Ադիգենի շրջաններից և թուրքերին՝ թվով 250 տնտեսություն Բոգդանովկայի շրջանից,

²⁷⁷ Թուրքաձեյ Յ., ճան. նամ., թ. 76-77; Гольдберг Г., указ. соч., - https://www.ca-c.org/journal/14-1998/st_09_goldberg.shtml (29.11.2018); Khazanov A. M., op. cit., p. 3.

²⁷⁸ Мамулия Г., указ. соч., - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (22.12.2018).

²⁷⁹ Гольдберг Г., указ. соч., - https://www.ca-c.org/journal/14-1998/st_09_goldberg.shtml (29.11.2018).

բ) Աջարիայի ԻԽՍՅ-ում բնակվող քրդերին և հեմշիններին, որոնք խուսափում են անդամակցել կոլտնտեսություններին, անասունների հետքոչում են սահմանային շրջաններ և հաճախ գործակցում են լրտեսների հետ»²⁸⁰:

Ինչպես տեսնում ենք, ՎԽՍՅ ղեկավարությունը տեղեկանալիորով այն մասին, որ տեղահանվողներն ուղարկվելու են հանրապետության սահմաններից դուրս, հենց ինքը հանդես եկավ այլ մահմեդական խմբերին նույնպես տեղահանելու նախաձեռնություններով:

Թուրքիայի հետ սահմանային շրջաններից տեղահանումից խուսափեցին միայն Աջարիայի մահմեդական վրացիներն ու լազերը: Վերջիններից մի քանի ընտանիք սխալմամբ էին արտաքսվել Միջին Ասիա, սակայն հայտնաբերվելուց հետո նրանք անհապաղ վերադարձվել են նախկին բնակություն վայրեր և ստացել իրենց թողած ունեցվածքը ²⁸¹:

Ինչ վերաբերում է արտաքսվածների թվին, այս հարցում նույնպես աղբյուրների ու հետազոտողների հաղորդած տվյալները չեն համընկնում: Տեղահանությունից հետո ՊՊԿ ուղարկված գեկուցագրի համաձայն բռնագաղթվածների ընդհանուր թիվը կազմել է 91095 մարդ ²⁸²: Միջինասիական խորհրդային հանրապետություններ հասած և տեղաբաշխվածների թիվն, ըստ այն տեղից ուղարկված գեկուցագրի, եղել է 92307 մարդ (18923 տղամարդ, 27399 կին, 16 տարեկանից փոքր 45985 երեխա), որոնցից 53163 մարդ բնակեցվել է Ուզբեկստանի ԽՍՅ-ում, 28598 մարդ Ղազախստանի ԽՍՅ-

²⁸⁰ Տե՛ս նույն տեղում:
²⁸¹ **Бугай Н. Ф.**, Иосиф Сталин – Лаврентию Берия: «Их надо депортировать...», с. 163-165.
²⁸² **Бугай Н. Ф.**, Иосиф Сталин – Лаврентию Берия: «Их надо депортировать...», с. 155-156; **Бугай Н. Ф.**, Турки из Месхетии: долгий путь к реабилитации (1944-1994), с. 76-77; **Гольдберг Г.**, указ. соч., - https://www.ca-c.org/journal/14-1998/st_09_goldberg.shtml (29.11.2018).

ու մ և 10546 մարդ Ղրղզստանի ԽՍՀ-ում²⁸³: Ադրբեջանցի
 և թուրք հետազոտողները տեղահանվածների ավելի
 մեծ թիվ են նշում²⁸⁴, իսկ ներառյալ բանակում
 ծառայողներին՝ մինչև 145000 մարդ²⁸⁵: Առանձին
 հեղինակներ, պաշտոնական տվյալները համարելով
 ոչ հավաստի և հենվելով «լուրջ աղբյուրների» (ըստ՝
 1989 թ. գերմանական «Der Spiegel» թերթում գետեղված
 հոդվածի) վրա արտաքսվածների թիվը հասցնում են 180
 հազարի²⁸⁶: Այդ թվերը հակասում են 1897, 1926 և 1939
 թվականներին մարդահամարների տվյալներին:

1897 թվականի Ռուսական կայսրության առաջին
 համընդհանուր մարդահամարի տվյալներով
 վերոնշյալ 5 շրջաններն ամբողջությամբ
 ընդգրկող Ախալցխայի և Ախալքալաքի գավառներում
 «թուրքեր» և «թաթարներ» անվան տակ գրանցված էին
 համապատասխանաբար 24433 և 19299, ընդամենը՝ 43732
 մարդ²⁸⁷: 1926 թվականի համախորհրդային
 մարդահամարի տվյալներով «թյուրքերի»
 ընդհանուր թիվը կազմում էր 56110 մարդ²⁸⁸: 1939 թ.
 համախորհրդային մարդահամարի տվյալների
 համաձայն Ադիգեների, Ախալցխայի, Ասպինձայի,
 Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում
 բնակվում էր 87971 «ադրբեջանցի»²⁸⁹: Այսպիսով, շուրջ
 30 տարվա ընթացքում նրանց բնական աճի միջին
 ցուցանիշը չի գերազանցել 2500-ը: Ուստի, մինչև
 հասուն տարիքի տղամարդկանց գորակոչվելը, 1941
 թվականին նրանց թիվը պետք է լիներ մոտ 92-94 հազար:
 Աջարիայում բնակվող թուրքերի թիվը 2201 էր²⁹⁰: Ըստ

²⁸³ Бугай Н. Ф., Иосиф Сталин – Лаврентию Берия: «Их надо депортировать...», с. 157; Гольдберг Г., указ. соч., -
https://www.ca-c.org/journal/14-1998/st_09_goldberg.shtml (29.11.2018).

²⁸⁴ Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S., op. cit., p. 6.

²⁸⁵ Гаджиев А., указ. соч., с. 10.

²⁸⁶ Zeyrek Y., Ahıska ve Ahıska Türkleri - <https://www.tarihtarih.com/?Syf=26&Syz=358721&/Ah%C4%B1ska-ve-Ah%C4%B1ska-T%C3%BCrkleri-/-Yunus-Zeyrek-> (27.12.2018).

²⁸⁷ Первая всеобщая перепись населения Российской империи 1897 года, с. 90-93.

²⁸⁸ Всесоюзная перепись населения 1926 г., с. 84-91.

²⁸⁹ Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения районов, городов и крупных сел союзных республик СССР - http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=777 (05.01.2019).

²⁹⁰ Տե՛ս նույն տեղում:

Պ. Պոլյանի և Ա. Յունունովի բանակում ծառայողների թիվը կազմել է 40 հազ. մարդ, որից 26 հազարը գոհվել են, իսկ մնացածն արտաքսվել իրենց ընտանիքների մոտ²⁹¹: Ավելի հավաստի են թվում (մարդահամարների տվյալներով կանանց և տղամարդկանց հարաբերակցության հաշվին) Թ. Թրիերի, Գ. Մամուլիայի հաշվարկները, որոնց համաձայն՝ գորակոչվածների թիվը պետք է կազմեր մոտ 20 հազ., իսկ վերադարձվածներինը՝ մոտ 10 հազ.²⁹²: Աքսորվածների թվում են եղել նաև 8694 քուրդ²⁹³ և 1385 հեմշին²⁹⁴: Այս ամենից հետևում է, որ պաշտոնական տվյալներն այնքան էլ հեռու չեն իրականությունից և բանակում ծառայողների հետ տեղահանված բնակչությանը կազմում էր մոտ 100 հազար մարդ: Յեղիսկաների մի մասի ներկայացրած թվերը համընկնում են մեր կատարած հաշվարկի հետ²⁹⁵:

Ինչպես և նախատեսվում էր ՊՊԿ-ի №6279 որոշման 11 և 12 կետերով, լքված գյուղերի զգալի մասում իշխանությունները բնակեցրեցին երկրի այլ շրջաններից (գերազանցապես Իմերեթի և Ռաճայի լեռնային շրջաններից) 25-30 հազար վրացիների (ըստ պաշտոնական տեղեկությունների՝ 27 հազ. մարդ²⁹⁶), որոնց մի մասն անսովոր և անբարենպաստ

²⁹¹ Полян П., указ. соч., с. 103-104; Aydingün A., Aydingün İ., Ahıska Türkleri ulusötesi bir topluluk - ulusötesi aileler, s. 42; Юнусов А., указ. соч., - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_20_junusov.shtml (15.10.2018); Devrisheva Kh., Ahıska Türklerinin bitmeyen göçü, - Selçuk Üniversitesi Türkiyat Araştırmaları Dergisi, 2019, Sayı 45, s. 335.

²⁹² Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 12; Мамулия Г., указ. соч., - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (22.12.2018).

²⁹³ Մեր հաշվարկներով, Ադիգեների, Ախալցխայի, Ասպինձայի, Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններում 1944 թ. պետք է բնակվեր մոտ 4-4,5 հազար քուրդ:

²⁹⁴ Бугай Н. Ф., Л. Берия – И. Сталину: «Согласно вашему указанию...», с. 170; Бугай Н. Ф., Депортации народов, - https://scepis.net/library/id_1237.html (07.02.2019).

²⁹⁵ Khazanov A. M., op. cit., p. 4; Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S., op. cit., p. 6; Modebadze V., op. cit., p. 115; Tetradze M., op. cit., p. 130; Devrisheva Kh., Ahıska Türklerinin bitmeyen göçü, s. 335; Swerdlow S., Understanding Post-Soviet Ethnic Discrimination and the Effective Use of U.S. Refugee Resettlement: The Case of the Meskhetian Turks of Krasnodar Krai, - California Law Review, 2006, Vol. 6 (94), p. 1834.

²⁹⁶ მოდებაძე ვ., დას. ნაშ., გვ. 307.

արտաքսված բնակչությունը հանվեց «հատուկ վերաբնակներին» կարգավիճակը: Սակայն Վրաստան վերադառնալ թույլ չտրվեց³⁰⁴: Մի շարք հեղինակներին կարծիքով՝ դա պայմանավորված էր Թուրքիայի ՆԱՏՕ-ին 1952 թ. անդամակցությունամբ, ինչի հետևանքով վերջինիս հետսահմանակից շրջանները (այդ թվում՝ նաև Ախալցխան և հարակից տարածքները) ռազմավարական նշանակություն ստացան³⁰⁵:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության 1957 թ. №161/29 որոշմամբ՝ ՎԽՍՀ-ի ցարտաքսված անձինք, ում անձնագրում ազգությունը գրված էր «ադրբեջանցի», կարող էին տեղափոխվել Ադրբեջանի ԽՍՀ³⁰⁶: 1950-1960-ական թվականներին մեսխեթցի թուրքերը փոքր խմբերով տեղափոխվեցին Ադրբեջանի ԽՍՀ և Հյուսիսային Կովկաս: Այդ ընթացքում Ադրբեջանում հաստատվեց մոտ 25-30 հազար մեսխեթցի թուրք, որոնց փաստաթղթերում գրված էր «ադրբեջանցի»³⁰⁷: Պետք է ենթադրել, որ նրանց զգալի մասը թարաքամներն ու թուրքմեններն էին, որոնց լեզուն ավելի մոտ է ադրբեջանի պաշտոնական լեզվին, քան թուրքերենին:

Որոշ սահմանափակումներից ազատվելուց հետո, 1950-ական թվականներին միջինասիական հանրապետություններ բռնագաղթած մեսխեթցի թուրքերի շրջանում սկսում է ձևավորվել իրենց նախկին բնակության վայրեր վերադարձի գաղափարը: 1962 թ. Տաշքենդի մարզի Բուկինյան շրջանում գաղտնի պայմաններում անցկացվեց մեսխեթցի թուրքերի առաջին հիմնադիր

³⁰⁴ **Бугай Н. Ф.**, Иосиф Сталин – Лаврентию Берия: «Их надо депортировать...», с. 274-275.

³⁰⁵ **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, op. cit., p. 18; **Pentikäinen O., Trier T.**, op. cit., p. 11-12; **Sverdlov S.**, Understanding Post-Soviet Ethnic Discrimination..., p. 1836, **Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Sverdlov S.**, op. cit., p. 7; **Modebadze V.**, op. cit., p. 117; **Zeyrek Y.**, Ahıska bölgesi ve Ahıska Türkleri, s. 59; **Nissman D.**, The return of the Meskhetians, - Prism, 1995, Vol. 1, Issue 17, - <https://jamestown.org/program/the-return-of-the-meskhetians/> (10.01.2019).

³⁰⁶ **Keskin S., Anaç Ö.**, Ahıska Türklerinin 1944 sürgününden günümüze Gürcistan'a geri dönüş mücadelesi ve 2007 yılına kadar dönenlerin durumu, - Gürcistan'daki Müslüman Topluluklar: Azınlık Hakları, Kimlik, Siyaset, Ankara, Avrasya İncelemeleri Merkezi, 2016, s. 279.

³⁰⁷ **Modebadze V.**, op. cit., p. 116; **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, op. cit., p. 19.

համագումարը, որտեղ քննարկվեց հայրենադարձության ազգային շարժման հարցը: Շարժումն ավելի կազմակերպված դարձնելու նպատակով ընտրվեց հայրենիք վերադարձի «ժամանակավոր կազմակերպչական կոմիտե»³⁰⁸: Այս համագումարից սկսած մեսխեթցի թուրքերի հայրենադարձության շարժումը կարելի է համարել ձևավորված: Մինչև 1989 թ. տեղի է ունեցել 10 համագումար: Կոմիտեն բազմաթիվ դիմումներ է հասցեագրել պաշտոնական Մոսկվային, ինչպես նաև ՎԽՍՀ իշխանության ներքին: Մինչև 1989 թ. հիմնախնդրի լուծման հարցում այդպես էլ որևէ եական փոփոխություն տեղի չունեցավ:

1968 թ. և 1974 թ. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության որոշումներով 1940-ական թվականներին Վրաստանի հարավից և Աջարիայից տեղահանված մեսխեթցի թուրքերին, քրդերին, հեմշիններին և ադրբեջանցիներին իրավունք տրվեց բնակվել ամբողջ ԽՍՀՄ տարածքում³⁰⁹: Սակայն որոշման երկրորդ կետում նշվում էր, որ նշված քաղաքացիներն արդեն «հաստատվել» են միջինասիական հանրապետություններում, որոնց ղեկավարություններին խորհուրդ էր տրվում նրանց համար ստեղծել համապատասխան պայմաններ³¹⁰: Փաստորեն, այդ կետը հայրենադարձության միայն ձևական հնարավորություն էր տալիս: Խորհրդային Միությունում կիրառվող մշտական բնակության վայրում գրանցման համակարգը նույնպես խնդիրներ էր առաջացնում: Բացի այդ, Վրաստանի ԽՍՀ իշխանությունները մեսխեթցի թուրքերի

³⁰⁸ Панеш Э. Х., Ермолов Л. Б., Турки-месхетинцы..., с. 18-19.

³⁰⁹ Усманов А. О., К вопросу о конституционно-правовой реабилитации месхетинских турок: политико-правовой аспект, - Гуманитарные и юридические исследования, 2017, № 3, с. 160; Бугай Н. Ф., Проблемы возвращения «плановых переселенцев» в районы прежнего проживания до 1940-ых гг., - Вестник Калмыцкого института гуманитарных исследований РАН, 2015, № 4, с. 50.

³¹⁰ Khazanov A. M., op. cit., p. 5.

վերադարձն անհնար էին համարում, քանի որ այդ տարածքներն արդեն բնակեցվել էին քրիստոնյա վրացիներով, իսկ մահմեդականների վերադարձը կարող էր ապակայունացնել իրավիճակը ³¹¹:

1968 թ. մոտ 7 հազ. մեսխեթցի թուրք մեկնեցին Թբիլիսի և Կառավարության շենքի առջև պահանջեցին ընդունել իրենց: Վրաստանի կոմկոլսի ԿԿ-ի առաջին քարտուղար Վ. Մժավանաձեն համաձայնվեց ընդունել տարեկան 100 ընտանիք և բնակեցնել հանրապետության տարբեր շրջաններում ³¹²: Ինչպես դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց, այդ խոստումը նույնպես եական փոփոխությունների չբերեց: 1960-1970-ական թվականներին Վրաստանի արևմտյան շրջաններում հաստատվեց ընդհանուր առմամբ 1211 մարդ ³¹³: Յետաքրքրական է, որ Վրաստանում մեսխեթցի թուրքերը կարողացան ապաստան գտնել նաև Աբխազիայի ինքնավար հանրապետության տարածքում: 1969 թվականին շուրջ 250 ընտանիք (Ա. Յունուսովի հաղորդմամբ՝ 400 ընտանիք) հաստատվեցին Գալիի շրջանում, մասնավորապես՝ Աչիգվարաբնակավայրում ³¹⁴:

1970 թ. ապրիլին մի խումբ մեսխեթցի թուրքեր դիմեցին Մոսկվայում Թուրքիայի դեսպանատուն՝ արտագաղթի թույլտվության խնդրանքով: Յաջորդ տարի դեսպանատուն փոխանցվեցին արտագաղթելու ցանկություն հայտնաձևերի ցուցակները: Այս քայլը տարածայնության պատճառ դարձավ շարժման անդամների միջև: Շարժման անդամների մեծ մասը

³¹¹ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 18.

³¹² Полян П., указ. соч., с. 176; Keskin S., Anaç Ö., Ahıska Türklerinin 1944 sürgününden günümüze Gürcistan'a geri dönüş mücadelesi ve 2007 yılına kadar dönenlerin durumu, s. 281.

³¹³ Панеш Э. Х., Ермолов Л. Б., Турки-месхетинцы..., с. 23.

³¹⁴ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 26; Юнусов А., указ. соч., - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_20_junusov.shtml (15.10.2018); Keskin S., Anaç Ö., Ahıska Türklerinin 1944 sürgününden günümüze Gürcistan'a geri dönüş mücadelesi ve 2007 yılına kadar dönenlerin durumu, s. 288.

պարտավորվում էր հանրապետության տարբեր
շրջաններում վերաբնակեցնել 300 ընտանիք,
ցուցաբերել ֆինանսական աջակցություն և լուծել
ներանց աշխատանքի ընդունման հարցը:
Արտաքսվածների առաջնորդներին հանձնարարվեց
կազմակերպել հայրենադարձման գործընթացը,
սակայն պարզվեց, որ մեսխեթցի թուրքերը
համաձայնվում էին վերադառնալ այն պայմանով, որ
բնակեցվեին միայն իրենց նախկին գյուղերում և
հրաժարվեցին այլ շրջաններում վերաբնակվելուց,
ինչի հետևանքով վերոհիշյալ իրավական ակտի
դրույթները մնացին միայն թղթի վրա³¹⁸:

Այս ամենի հետևանքը եղավ այն, որ մեսխեթցի
թուրքերի շրջանում ձևավորվեց երկու
խմբակցություն: Մի մասն ընդունում էր իրենց
վրացական ծագման վարկածը և համաձայն էր
վերադառնալ Վրաստանի ցանկացած շրջան, մյուս
մասն էլ յուրացրել էր թուրքական ինքնություն և
որպես հայրենիք դիտարկում էր ոչ թե ամբողջ
Վրաստանն, այլ հենց Ախալցխայի նախկին
փաշայության տարածքը: Թուրքական ինքնություն
ունեցողների մի մասը որպես հայրենիք ընդունում
էր նաև Թուրքիան³¹⁹:

1988 թ. հունիսի 28-ին Կաբարդինա - Բալկարիայի
ինքնավար հանրապետության Փսիկոդ շրջանում
տեղի ունեցավ մեսխեթցի թուրքերի իններորդ
համագումարը, որն առանձնացավ երկու հակադիր
խմբակցությունների միջև սուր պայքարով: Երկար
բանավեճերից հետո պատվիրակների մեծ մասն
աջակցեց «թուրքական ծագման» կողմնակիցներին և
վրացական ուղղության ներկայացուցիչների
դիրքորոշումը գնահատվեց որպես «ազգային շահերի

³¹⁸ Թոգոբաձյե՝, լաս. ԵՏՄ., թ. 111-112.

³¹⁹ Modebadze V., op. cit., p. 120.

դավաճանություն»³²⁰: Արդյունքում համագումարը որոշեց հասնել հայրենադարձության՝ իրենց թուրքական ազգային ինքնությունն ընդունելու պայմանով: Համագումարից մի քանի ամիս անց տեղի ունեցան Ֆերզանայի դեպքերը:

Մինչ 1989 թ. մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը, որպես այդպիսին, խորհրդային իշխանությունները չէին ճանաչում: Իրավիճակը փոխվեց 1989 թվականի մայիս-հունիս ամիսներին Ուզբեկստանի Ֆերզանայի շրջանում³²¹ տեղի ունեցած ջարդերի արդյունքում, որոնց թիրախը մեսխեթցի թուրքերն էին: Նրանց թիրախավորելու պատճառները մինչ այժմ մասնագիտական շրջանակներում միանշանակ գնահատական չեն ստացել: Որոշ հետազոտողներ դրանք դիտարկում են ուզբեկների և տաջիկների միջև լարված հարաբերություններին համատեքստում³²²: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ այդ դեպքերը կազմակերպել էին խորհրդային իշխանությունները մի շարք խնդիրներ լուծելու՝ ուզբեկ ազգայնամոլների ու շադրուկությունը սլավոններից շեղելու, մեսխեթցի թուրքերին Ռուսաստանի կենտրոնական շրջաններ տեղափոխելու և այնտեղ գյուղատնտեսության զարգացումը խթանելու, ինչպես նաև ստեղծված դրուկամբ Վրաստանում սկսված անկախական շարժումը կանխելու համար³²³: Գ. Գոլդբերգը համեմատական է անցկացնում Սումգայիթի և Ֆերզանայի ջարդերի միջև՝ նկատելով, որ երկու դեպքում էլ ջարդարարները նախապես տեղեկացված

³²⁰ **Панеш Э. Х., Ермолов Л. Б.,** Турки-месхетинцы..., с. 19-20.

³²¹ Նշենք, որ Ուզբեկստանում էին բնակվում մեսխեթցի թուրքերի կեսը: 1989 թ. մարդահամարի տվյալներով նրանց թիվը ԽՍՀՄ-ում 207,5 հազար էր, որից միայն 106 հազարը բնակվում էին Ուզբեկստանի ԽՍՀ տարածքում: Տե՛ս **Полян П.,** указ. соч., с. 178; **Юнусов А.,** указ. соч., - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_20_junusov.shtml (15.10.2018).

³²² **Панеш Э. Х., Ермолов Л. Б.,** Турки-месхетинцы..., с. 17-18; Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

³²³ **Modebadze V.,** op. cit., p. 118; **Seferov R., Akış A.,** Sovyet Döneminden Günümüze Ahıska Türklerinin Yaşadıkları Coğrafyaya Göçlerle Birlikte Genel Bir Bakış, s. 400-401; **Гаджиев А.,** указ. соч., с. 11.

Է ի ն զ ո հ եր ի բ ն ա կ ու թ յ ա ն վ ա յ ր եր ի մ ա ս ի ն , ի ն չ ի ց
 Ե զ ր ա կ ա ց ն ու մ Է , ո ր ա յ ն ն ա խ ա պ Ե ս կ ա զ մ ա կ եր պ վ ա ծ Է ր
 և ի բ ր ու ղ ղ վ ա ծ Է ր Վ ր ա ս տ ա ն ի դ Ե մ ` ա յ ն տ Ե ղ
 ծ ա վ ա լ վ ո ղ ա զ գ ա յ ի ն շ ա ր ժ մ ա ն հ ա կ ա խ ո ր հ ր դ ա յ ի ն
 ծ ր ա գ ր ե ր ը կ ա ն խ Ե լ ու հ ա մ ա ր ³²⁴: Յ Ե տ ա զ ո տ ո ղ Մ .
 Կ ա լ ի շ և ս կ ի ն ա ր դ ա ր ա ց ի ո ր Ե ն ն կ ա տ ու մ Է , ո ր
 Ֆ Ե ր գ ա ն ա յ ի մ ի ջ ա դ Ե պ ո վ Վ ր ա ս տ ա ն ու մ դ ր ու թ յ ու ն ն
 ա պ ա կ ա յ ու ն ա ց ն Ե լ ը հ ա ր մ ա ր տ ա ր Բ Ե ր ա կ չ Է ր ,
 չ ա փ ա զ ա ն ց Բ ա ր դ Է ր : Շ ա տ ա վ Ե լ ի ա ր դ յ ու ն ա վ Ե տ
 կ լ ի ն Ե ր հ Ե ն ց Վ ր ա ս տ ա ն ու մ հ ր ա հ ր Ե լ ա զ գ ա մ ի ջ յ ա ն
 Բ ա խ ու մ ն Ե ր : Ն ա Ֆ Ե ր գ ա ն ա յ ու մ Բ ա խ ու մ ն Ե ր ի ա ռ ա վ Ե լ
 հ ա վ ա ն ա կ ա ն պ ա տ ճ ա ռ Է հ ա մ ա ր ու մ ո ղ ջ
 հ ա ն ր ա պ Ե տ ու թ յ ու ն ու մ տ ի ր ո ղ մ թ ն ո լ ո ր տ ը ` կ տ ր ու կ
 ք ա ղ ա ք ա կ ա ն փ ո փ ո խ ու թ յ ու ն ն Ե ր ի և վ ա տ թ ա ր ա ց ո ղ
 ս ո ց ի ա լ -տ ն տ Ե ս ա կ ա ն պ ա յ մ ա ն ն Ե ր ու մ պ Ե տ ու թ յ ա ն
 հ Ե ղ ի ն ա կ ու թ յ ա ն ա ն կ ու մ ը և դ ր ա ն ի ց Բ խ ո ղ
 դ Ե ս տ ր ու կ տ ի վ հ Ե տ ն ա ն ք ն Ե ր ը ³²⁵: Ա ն կ ա խ ջ ա ր դ Ե ր ի
 ք ա ղ ա ք ա կ ա ն ն պ ա տ ա կ ն Ե ր ի ց , կ ա ր ծ ու մ Ե ն ք , ո ր դ ր ա ն
 ն պ ա ս տ ո ղ հ ա ն գ ա մ ա ն ք ն Ե ր Ե ղ ա ն մ Ե ս խ Ե թ ց ի թ ու ր ք Ե ր ի
 ի ր ա վ ա կ ա ն պ ա շ տ պ ա ն վ ա ծ ու թ յ ա ն ց ա ծ ր մ ա կ ա ր դ ա կ ը ,
 ն ր ա ն ց հ ա մ ա յ ն ք ն Ե ր ի « փ ա կ » լ ի ն Ե լ ը ` տ Ե ղ ա ց ի ն Ե ր ի ց
 մ Ե կ ու ս ա ց վ ա ծ ու թ յ ու ն ը , հ ա ս ու ն ա ց ա ծ հ ի մ ն ա խ ն դ ր ի
 ն կ ա տ մ ա մ Բ խ ո ր հ ր դ ա յ ի ն ի շ խ ա ն ու թ յ ու ն ն Ե ր ի
 ա ն տ ա ր Բ Ե ր վ Ե ր ա Բ Ե ր մ ու ն ք ը :

Ֆ Ե ր գ ա ն ա յ ի ջ ա ր դ Ե ր ի ա ր դ յ ու ն ք ու մ մ ո տ 100 մ ա ր դ
 զ ո հ վ Ե ց , 1000-ի ց ա վ Ե լ ի մ ա ր դ ս տ ա ց ա ն տ ա ր Բ Ե ր
 ա ս տ ի ճ ա ն ի վ ն ա ս վ ա ծ ք ն Ե ր , ի ս կ Ու զ Բ Ե կ ս տ ա ն ու մ
 Բ ն ա կ վ ո ղ մ Ե ս խ Ե թ ց ի թ ու ր ք Ե ր ի մ Ե ծ մ ա ս ը ս տ ի պ վ ա ծ
 Ե ղ ա վ լ ք Ե լ Ե ր կ ի ր ը ³²⁶: 1989 թ . խ ո ր հ ր դ ա յ ի ն
 ի շ խ ա ն ու թ յ ու ն ն Ե ր ը Ֆ Ե ր գ ա ն ա յ ի ց Ռ ու ս ա ս տ ա ն ի
 Ե վ ր ո պ ա կ ա ն հ ա տ վ ա ծ ի կ Ե ն տ ր ո ն ա կ ա ն շ ր ջ ա ն ն Ե ր

³²⁴ Гольдберг Г., указ. соч., - https://www.ca-c.org/journal/14-1998/st_09_goldberg.shtml (29.11.2018).
³²⁵ Калишевский М., Турки-месхетинцы: из одного изгнания в другое, ч.2 - <https://www.fergananews.com/articles/6281> (11.01.2019).
³²⁶ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 28; Թուրքաթեթի ց., լաս. Եսմ., թց. 83; Zeyrek Y., Ahıska bölgesi ve Ahıska Türkleri, s. 71.

տարհանեցին շուրջ 17 հազ. մեսխեթցի թուրքերի³²⁷: Ուզբեկստանից հեռացած՝ տարբեր տվյալներով 60-90 հազար մեսխեթցի թուրքերը ապաստանեցին Ղազախստանում, Ռուսաստանում (գերազանցապես՝ Յուրուսիսային Կովկասում), Ադրբեջանում, Ղրղզստանում և Ուկրաինայում³²⁸:

Ֆերգանայի դեպքերից հետո մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը հայտնվեց ԽՍՀՄ իշխանությունների ու շարժումների անկենտրոնում և ընդունվեցին մի շարք որոշումներ՝ 1989 թ. նոյեմբերի 14-ի «Բռնի տեղահանման ենթարկված ժողովուրդների դեմ ճնշումներն անօրինական և հանցավոր ճանաչելու և նրանց իրավունքներն ապահովելու մասին» ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հայտարարությունը, 1991 թ. մարտի 7-ի «1989 թ. նոյեմբերի 14-ի Յայտարարության հետ կապված օրենսդրական ակտերի չեղարկման մասին» ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի որոշումը, ինչպես նաև 1991 թ. հունիսի 6-ի «Ճնշումների և բռնի տեղահանման ենթարկված խորհրդային ժողովուրդների նկատմամբ ԽՍՀՄ նախկին Պաշտպանության Կոմիտեի և ԽՍՀՄ Կառավարության որոշումների չեղարկման մասին» ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի որոշումը և այլն³²⁹: Այդ փաստաթղթերը մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցում գործնական նշանակություն չունեցան, քանի որ կարճ ժամանակ անց փլուզվեց Խորհրդային Միությունը: Սակայն իրավական տեսանկյունից այդ օրենսդրական ակտերն ընդունելով, ԽՍՀՄ իշխանությունները ճանաչեցին նաև մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի գոյությունը և նրա կարգավորման անհրաժեշտությունը: Եթե նախկինում այն

³²⁷ Modebadze V., op. cit., p. 118; Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S., op. cit., p. 8.

³²⁸ Pentikäinen O., Trier T., op. cit., p. 11-12; Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 27; Kurt S., Ahıska'nın Türkiye İçin Jeopolitik Önemi s. 205; Ахметьева В., Караселев В., Юдина Н., указ. соч., с. 5-6.

³²⁹ Усманов А. О., указ. соч., с. 160.

անտես սվոլում էր, ապա այժմ հիմնախնդիրը սկսեցին քննարկել տարբեր հարթակներում՝ փնտրելով լուծման տարբերակներ:

Այսպիսով, մեսիտեթցի թուրքերի հիմնախնդիրը, որպես այդպիսին, առաջացավ 1944 թվականին նրանց միջինասիական հանրապետություններ արտաքսելու հետևանքով: Արտաքսման պատճառների մասին գոյություն ունեն բազմաթիվ կարծիքներ, որոնք հարցին մոտենում են ազգական, տնտեսական կամ այլ տեսակետներից: Անկախ պատճառներից, Վրաստանի խորհրդային իշխանությունները, հակառակ վրացի հեղինակների պնդման, գործունե մասնակցություն են ունեցել հիմնախնդրի առաջացման հարցում:

Վրաստանի հարավային շրջաններից արտաքսվածների հիմնախնդրի խորացման հարցում, թերևս, կարևոր դեր խաղաց նաև «սառը պատերազմը»: ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի սահմանի հարևանությունը Սամցխեի գտնվելու հանգամանքը, սակայն, միակ խոչընդոտը չէր: 1970-ական թվականներին արդեն ՎԽՍՀ իշխանություններն առաջ քաշեցին մեսիտեթցի թուրքերի ծագման և ինքնություն հարցը, որն էլ դարձավ հիմնախնդրի կարգավորման շուրջ քննարկումների անբաժան մասը:

Այս ամբողջ ընթացքում խորհրդային իշխանությունների կողմից մեսիտեթցի թուրքերի հիմնախնդրի և իրավունքների անտեսումը հանգեցրին Ֆերգանայում նրանց դեմ ուղղված բռնություններին: Միայն դրանից հետո խորհրդային իշխանությունները ճանաչեցին հիմնախնդրի գոյությունը և փորձեցին կարգավորել այն: Հիմնախնդիրն անցում կատարեց դեպի նոր փուլ, սակայն ԽՍՀՄ փլուզման արդյունքում խնդրի կարգավորման հեռանկարները նորից դարձան մշուշոտ:

2.2 ՄԵՍԽԵԹՅԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՅԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՅԵՏԽՈՐՅՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ֆերգանայի դեպքերից հետո Ուզբեկստանում բնակվող մեսխեթցի թուրքերի մեծ մասը ստիպված է քեց հանրապետության տարածքը: Այդ իրադարձություններից հաջորդած ԽՍՀՄ փլուզումը և քաղաքական անկայուն իրավիճակն է՝ լավելի մեծ ծավալների հասցրին միջինասիական հանրապետություններից մեսխեթցի թուրքերի արտագաղթը: Ընդլայնվեց նաև արտագաղթի ուղղությունների աշխարհագրությունը: Ներկայումս մեսխեթցի թուրքերը հիմնականում բնակվում են Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Ուկրաինայի, Վրաստանի և ԱՄՆ տարածքներում: Մարդահամարների տվյալներում նրանց մասին հստակ և ճշգրիտ տեղեկությունների բացակայության պատճառով ընդհանուր թիվը հայտնի չէ: Մոտավոր գնահատականներով մեսխեթցի թուրքերի ընդհանուր թիվը կազմում է 425-450 հազար մարդ³³⁰:

Այսպիսով, հիմնախնդրի էությունը և նրա քաղկացուցիչ մասերը պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց համայնքների դրությունը, առկա խնդիրները, ինչպես նաև դեռևս 1950-1960-ական թվականներին սկիզբ առած շարժումը: Տարբեր երկրներում հաստատված մեսխեթցի թուրքերն ունեն տարբեր կարգավիճակ և խնդիրներ:

Ուզբեկստանում, ուր մինչև 1989 թ. բնակվում էր մեսխեթցի թուրքերի մոտ 50%-ը, նույնիսկ ջարդերից հետո էլ պահպանվեց համայնքը: Ներկայումս նրանց

³³⁰ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 55.

թիվը հասնում է մոտ 22,5 հազարի³³¹: Անկախության տարիներին համայնքը կարողացավ վերականգնվել և բարելավել սոցիալ-տնտեսական պայմանները: Այնուամենայնիվ, Ֆերգանայի դեպքերը նշանակալի հետք թողեցին համայնքի ինքնուրույն պահպանման վրա: Նախկին ազգամիջյան լարվածությունը նպաստեց մեսխեթցի թուրքերի համայնքի ուժացման գործընթացի արագացմանը: Ծատերը սկսեցին հաղորդակցվել ուզբեկերեն կամ ռուսերեն՝ ձուլվելով ուզբեկական հասարակությանը: Ավելացան նաև ազգամիջյան ամուսնությունները: Ավելին, մեսխեթցի թուրքերի մեծ մասը գրանցված է որպես ուզբեկ, ադրբեջանցի կամ թուրք: Միաժամանակ, այդ հանգամանքը նրանց համար դյուրացնում է աշխատանքի տեղավորման խնդիրը: Ի տարբերություն այլ երկրներում հաստատված մեսխեթցի թուրքերի՝ ուզբեկստանում նրանց համայնքները գլխավորապես քաղաքաբնակ են, ինչն էլ նպաստում է նրանց շրջանում գործարարների թվի աճին: Յաշվի առնելով այս միտումը՝ երկրի իշխանությունները փորձում են ապահովել հարմար պայմաններ համայնքի պահպանման համար³³²:

Ղազախստանում մեսխեթցի թուրքերի մեծ մասն այնտեղ արտաքսվածների հետնորդներն են: Ֆերգանայի դեպքերից հետո համայնքը համալրվեց ուզբեկստանից արտագաղթած շուրջ 17 հազ. մարդկանցով³³³: Ղազախստանում բնակվող մեսխեթցի թուրքերի թիվը մոտավորապես 120-137 հազար է³³⁴: Նրանք գերազանցապես կենտրոնացած են երկրի հարավային շրջաններում՝ գյուղական համայնքներում: Ղազախստանում անցկացված հետազոտության արդյունքում հարցվածների մի

³³¹Տե՛ս նույն տեղում, էջ 56:
³³²Pentikäinen O., Trier T., op. cit., p. 23-24.
³³³Տե՛ս նույն տեղում, էջ 24:
³³⁴Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 54, 56.

մասի մոտ տիրապետում է Թուրքիա արտագաղթելու գաղափարը: Ինչպես հեղինակն է նշում, այդ մոտեցումը հիմնված է Թուրքիայում «ավելի լավ կյանքի» իդեալականացման վրա³³⁵: Թուրքիայում հաստատված մեսխեթցի թուրքերի թվում Ղազախստանի ցագաղթածների թիվը նվազագույնն է³³⁶: 1990-ական թվականների երկրորդ կեսից սկսած արտագաղթողների թիվը կտրուկ նվազել է, որին նպաստեց երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը: Ղազախստանում մեսխեթցի թուրքերը բավականին բարենպաստ պայմաններում են բնակվում, գերազանցապես զբաղված են գյուղատնտեսությամբ կամ ձեռներեցությամբ³³⁷ և համախմբված են 1991 թ. հիմնադրված «Ահըսկա թուրքերի ազգային կենտրոն»-ի շուրջ: Ղազախստանում թուրքերեն, ղազախերեն և ռուսերեն լեզուներով հրատարակվում է «Ահըսկա» հանդեսը³³⁸: Չնայած համեմատաբար լավ պայմաններին, ինտեգրվածություն աստիճանին, նրանցից շատերը Ղազախստանը դեռ չեն ընդունում որպես իրենց հայրենիք: Այդ մասին են վկայում 2005 թ. անցկացված հարցման արդյունքները: Հարցվածների միայն 22,2%-ն է իրենց բնակություն երկիրը ընդունում որպես հայրենիք, մինչդեռ Ախալ-ցխայի շրջանն ընտրել են մասնակիցների 96%-ը³³⁹: 2017 թ. անցկացված ուսումնասիրությունն արդեն փաստում է, որ Ղազախստանում բնակվող մեսխեթցի թուրքերի մեծ մասը չի ցանկանում տեղափոխվել այլ երկիր, նույնիսկ իրենց բնակություն նախկին վայրեր,

³³⁵ **Oh Ch. J.**, op. cit., p. 18; **Aydingün A.**, *Ahıska (Meskhetian) Turks: Source of Conflict in the Caucasus?*, - *The International Journal of Human Rights*, 2002, Vol. 6, Issue 2, p. 51.

³³⁶ **Devrisheva Kh.**, *Ahıska Türklerinin bitmeyen göçü*, s. 337.

³³⁷ **Oh Ch. J.**, op. cit., p. 22-23.

³³⁸ **Yılmaz S.**, *Ahıska Türklerinin vatana dönüşleri üzerine bir araştırma: Kazakistan örneği*, - *International Journal of Academic Value Studies*, 2017, Vol. 3, Issue 11, p. 33.

³³⁹ Հարցվողների թույլ է տրվել ընտրել մեկից ավել պատասխան: Ավելի մանրամասն տե՛ս **Oh Ch.J.**, op. cit., p. 18-19.

գերագանացապետ Բարեկեցիկ կյանքի և լավ պայմանների պատճառով ³⁴⁰:

Ղրղզստանում նույնպես բնակչության մեծ մասը բռնագաղթվածների սերունդներն են: Ուզբեկստանից ներգաղթածների թիվը մոտ 12 հազար է ³⁴¹: Ընդհանուր առմամբ մեսխեթցի թուրքերի թիվը հասնում է մոտ 33 հազարի ³⁴², որոնք հիմնականում բնակվում են Օշի, Ջալալաբադի և Բիշքեքի շրջակայքում և գաղթվում գյուղատնտեսությամբ: Նրանք նույնպես սոցիալ-տնտեսական պայմաններով չեն առանձնանում երկրի բնակչության մեծ մասից, թեև, նշենք, որ այդ պայմաններն այնքան էլ բարենպաստ չեն: Երկրում քաղաքական անկայունությունն և ազգամիջյան լարվածությունը պարբերաբար նոր վտանգներ են ստեղծում երկրի ազգային փոքրամասնությունների համար: 2010 թ. հետհեղափոխական հակամարտության ժամանակ՝ Ղրղզների հարձակման հետևանքով զոհվել է 5 և վիրավորվել 28 մեսխեթցի թուրք, ինչի պատճառով մոտ 400 մարդ լքել են երկրի տարածքը ³⁴³:

Ադրբեջանում դեռևս 1956-1970 թթ. մեծ թվով մեսխեթցի թուրքեր հաստատվեցին: Նրանք հիմնականում նախընտրեցին բնակվել Ջեյրան-չոյ կոչվող դաշտում ³⁴⁴: Ֆերգանայի ջարդերից հետո Մեսխեթցի թուրքերի համայնքը համալրվեց և տարբեր գնահատականներով կազմեց մոտ 80-100 հազար մարդ ³⁴⁵: Վերջիններս հաստատվեցին Սաաթլիի, Սաբիրաբադի, Սալյանի և մի շարք այլ

³⁴⁰ Yılmaz S., Ahıska Türklerinin vatana dönüşleri üzerine bir araştırma: Kazakistan örneği, p. 33-37.

³⁴¹ Pentikäinen O., Trier T., op. cit., p. 25.

³⁴² Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 56.

³⁴³ Devrisheva Kh., Ahıska Türklerinin bitmeyen göçü, s. 337-338; Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 29-30.

³⁴⁴ Калишевский М., указ. соч. - <https://www.fergananews.com/articles/6281> (11.01.2019).

³⁴⁵ Թուրքաբեյ, լաս. ԵՏԹ, թ. 104; Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 56.

շրջաններում³⁴⁶, գյուղական համայնքներում և
 զբաղված են գյուղատնտեսությամբ, թեև առանձին
 խմբեր հաստատվել են նաև Բաքվում և այլ
 քաղաքներում: Նրանց մեծ մասը գրանցված է որպես
 «ադրբեջանցի» և արդեն ստացել է
 քաղաքացիություն: Մի մասը մինչ այժմ
 քաղաքացիություն չունի, սակայն հետազոտող Գ.
 Նոդիայի կարծիքով դա ոչ թե պետական
 քաղաքականության հետևանք է, այլ գյուղացիների
 համար անձնագրի անհրաժեշտության
 բացակայության, ինչպես նաև երիտասարդների
 կողմից գինվորական ծառայությունից
 խուսափելու միջոց է³⁴⁷: Ընդհանուր առմամբ
 Ադրբեջանում հաստատված մեսխեթցի թուրքերը
 բնակվում են բավականաչափ նորմալ պայմաններում,
 բնակլիմայական պայմանները շատ չեն տարբերվում
 Սամցխեի պայմաններից, իսկ լեզվի, մարդաբանական
 տեսակի և մշակույթի նմանությունը նպաստում են
 բնակչության հետ շերմ հարաբերությունների
 հաստատմանը: Այս ամենը նպաստել է ոչ միայն
 հասարակությունում նրանց արագ ինտեգրմանը,
 այլ և ուժացմանը (ասիմիլացիային): Մասնագետների
 կարծիքով Ադրբեջանում մեսխեթցի թուրքերը
 բավականին արագ կկորցնեն իրենց ինքնությունը և
 կձուլվեն ադրբեջանցիների հետ: Դրան է ուղղված
 նաև մեսխեթցի թուրքերի նկատմամբ երկրի
 իշխանությունների վարած
 քաղաքականությունը³⁴⁸:

Համեմատաբար ոչ մեծ թվով մեսխեթցի թուրքեր
 1989-1990 թթ. ընթացքում հաստատվեցին նաև

³⁴⁶ Seferov R., Akış A., Sovyet Döneminden Günümüze Ahıska Türklerinin Yaşadıkları Coğrafyaya Göçlerle Birlikte Genel Bir Bakış, s. 400.

³⁴⁷ Nodia G., Ethnic-Confessional Groups and Challenges to Civic Integration in Georgia: Azeri, Javakheti Armenian and Muslim Meskhetian Communities, Tbilisi, CIPDD, 2002, p. 48.

³⁴⁸ Տե՛ս նաև յ ն տեղում ; მთავრობის განცხადება, დას. ნაშ., გვ. 104-105; Полян П., указ. соч., с. 175; Sumbadze N., The Problem of Muslim Population of Southern Georgia: prospects of deportation and the local resistance - <http://www.policy.hu/sumbadze/Nana--Meskhetians5.html> (03.03.2019).

Ուկրաինայում: Նրանց ընդհանուր թիվը կազմում է մոտ 10 հազար մարդ, որոնք ցրված են երկրի տարբեր շրջաններում, այդ թվում արևելյան հատվածում, գերազանցապես բնակվում են գյուղերում և զբաղված են գյուղատնտեսությամբ: Գրեթե բոլորը ստացել են քաղաքացիություն, սակայն 2001 թ. անցկացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ շուրջ 46,3%-ն այս կամ այն ձևով ենթարկվել է խտրականության: Շատերի գնահատմամբ՝ Ուկրեյնայում իրենց բնակության պայմանները կրկնակի ավելի նպաստավոր էին³⁴⁹: 2014 թ. Ուկրաինայի արևելյան շրջանում ծավալված ռազմական գործողություններն է՛լ ավելի ծանր կացության մեջ դրեցին մեսխեթցի թուրքերին: Ստեղծված իրավիճակում նրանց մի մասը սկսեց արտագաղթել երկրից, հիմնականում՝ դեպի Թուրքիա³⁵⁰:

Մեսխեթցի թուրքերը Թուրքիա են տեղափոխվել երկու ակիբով: Առաջին ակիբն ընդգրկում է XIX դարի սկզբից մինչև 1944 թ. ընկած ժամանակահատվածը, իսկ երկրորդը սկսվեց արդեն ԽՍՀՄ փլուզումից հետո: Առաջին ակիբով արտագաղթածների սերունդները, հիմնականում հաստատվել էին Արևմտյան Յայաստանի տարածքում (Ժամանակակից Ադրը, Իգդիր, Մուշ, Յաթայ և այլ նահանգներում): Նրանց թիվը հայտնի չէ, քանի որ մեծ մասամբ արդեն ամբողջությամբ ձուլվել են թուրքերի հետ³⁵¹: Երկրորդ ակիբով տեղափոխվածները՝ մոտ 35 հազ. մարդ, արտագաղթել են նախկին միոլթեսական հանրապետություններին³⁵²: Նրանք հաստատվել են

³⁴⁹ Pentikäinen O., Trier T., op. cit., p. 20.

³⁵⁰ Turkey welcomes Meskhetian Turks from east Ukraine - <https://www.worldbulletin.net/diplomacy/turkey-welcomes-meskhetian-turks-from-east-ukraine-h167797.html> (14.02.2019); Турки-месхетинцы возвращаются на историческую родину - <https://www.trt.net.tr/russian/turtsia-i-milosierdiie/2016/03/18/turki-mieskhietintsy-vozvrashchaitusia-na-istoricheskuu-rodinu-452959> (14.02.2019).

³⁵¹ Թուրքիայի Գերագույն ընտրական հանձնաժողով, 2016, թ. 196; Devrisheva Kh., Ahıska Türklerinin bitmeyen göçü, s. 343-343.

³⁵² Karaman Z. T., Mursül D., op. cit., p. 94; Trier T., Tarkhan-Mouravi G., Killimnik F., op. cit., p. 55-56.

Բ ու ր ս ա ն Ս տ ա մ ք ու լ ք ա ղ ա ք ն եր ու մ , ի ն չ պ ե ս ն ա ն ո Ր ո շ մ ա ս ը ք ն ա կ ե ց վ ե լ ե ն Արևմտյան Յայաստանի տարածքներում: 2015 թվականից հետո Ուկրաինայից տեղափոխված մեսխեթցի թուրքերին իշխանությունները նույնպես ձգտում են քակեցնել Արևմտյան Յայաստանի տարածքներում (Երզնկայում և Բիթլիսում)³⁵³: Մինչև 1997 թ. ներգաղթած 12 հազար մեսխեթցի թուրքերը ստացել են «ազգային փախստական»-ի կարգավիճակ: Սակայն նրանց զգալի մասը նախատեսված 2 տարվա ընթացքում քաղաքացիություն չստացավ³⁵⁴: Մեսխեթցի թուրքերի մի մասը շարունակում է մնալ անօրինական միգրանտի կարգավիճակում³⁵⁵, թեև նշենք, որ նրանց դեմ որևէ գործողություններ չի իրականացվում: Բացի այդ, թուրքական հասարակությունը բավականին վատ է տեղեկացված մեսխեթցի թուրքերի մասին, ինչը պարզվել է հատուկ անցկացված հետազոտության արդյունքում³⁵⁶: Ընդհանուր առմամբ մեսխեթցի թուրքերի նկատմամբ Թուրքիայում խտրական վերաբերմունք չկա, սակայն նրանք առնչվեցին բազմաթիվ տնտեսական բնույթի խոչընդոտների հետ, ինչի հետևանքով ներգաղթածների մի մասը ժամանակի ընթացքում նախընտրեց տեղափոխվել այլ երկրներ³⁵⁷: Միևնույն խնդիրներին են առչվում նաև վերջերս Ուկրաինայից տեղափոխված մեսխեթցի թուրքերը³⁵⁸: Սոցիոմշակութային նմանությունները Թուրքիայում ևս մեսխեթցի

³⁵³ **Ukrayna'daki çatışmalardan kaçan Ahıska Türkleri Erzincan'a getirildi** - <https://tr.euronews.com/2015/12/26/ukrayna-daki-catismalardan-kaçan-ahıska-turkleri-erzincan-a-getirildi> (24.01.2019); **Ukrayna'dan Van Gölü kıyısına: Yeni Ahıska Ahlat** - <http://www.hurriyet.com.tr/gundem/ukraynadan-van-golu-kiyısına-yeni-ahıska-ahlat-40116688> (24.01.2019).

³⁵⁴ **Sumbadze N.**, op. cit., - <http://www.policy.hu/sumbadze/Nana--Meskhetians5.html> (03.03.2019).

³⁵⁵ **Aydınğün A.**, *Creating, recreating and redefining ethnic identity*, p. 196; **Devisheva Kh.**, *Ahıska Türklerinin bitmeyen göçü*, s. 344; **Ahıska Türklerinin 70 yıllık sürgünü** - <http://www.aljazeera.com.tr/al-jazeera-ozel/ahıska-turklerinin-70-yillik-surgunu> (28.02.2019).

³⁵⁶ **Karaman Z. T., Mursül D.**, op. cit., p. 88-103.

³⁵⁷ **Pentikäinen O., Trier T.**, op. cit., p. 26-27.

³⁵⁸ **Aktepe E., Tekdere M., Gürbüz A. Ş.**, *Toplumsal Uyum ve Bütünleşme Bağlamında Erzincan'a Yerleştirilen Ahıska Türkleri Üzerine Bir Değerlendirme*, - *Göç Araştırmaları Dergisi*, 2017, Cilt 3, Sayı 2, s. 138-169.

թուրքերի ու ծագմանն է տանում, ինչպես դատեղի է ունեցավ մինչև 1944 թ. այնտեղ արտագաղթածների հետ:

Ռուսաստանի Դաշնության տարածքում մեսխեթցի թուրքերի թիվը կազմում է մոտ 80-100 հազ. մարդ³⁵⁹: Ընդհանուր առմամբ նրանց կարելի է բաժանել երեք խմբի՝ ըստ ներգաղթի ժամանակահատվածի և աշխարհագրության: Առաջին խմբի մեջ են մտնում մինչև 1989 թ. Յյուլսիսային Կովկաս տեղափոխված մեսխեթցի թուրքերը, որոնք ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ստացան ՌԴ քաղաքացիություն: Նրանց թիվը մոտ 10 հազար է: Երկրորդ խումբը 1989 թ. Ֆերգանայի դեպքերից անմիջապես հետո Ռուսաստանի կենտրոնական շրջաններ (Կուրսկ, Վորոնեժ, Օրյոլ, Բելգորոդ, Կալինին և Սմոլենսկ) տեղահանված 16-17 հազար մեսխեթցի թուրքերն են, որոնցից մոտ 6-7 հազարը չհարմարվելով բնակչի մայական պայմաններին տեղափոխվել են հարավային շրջաններ, կամ արտագաղթել են երկրից: Յետաքրքրական է, որ Վոլգոգրադի, Կուրսկի և Բելգորոդի երկրամասերում բնակվող մեսխեթցի թուրքերը մեծ մասամբ իրենց մահմեդականացած վրացիներն են համարում³⁶⁰: Երրորդ խումբը Ֆերգանայի շարդերին հաջորդած տարիներին տարերայնորեն Յյուլսիսային Կովկասի տարբեր շրջաններ տեղափոխված մեսխեթցի թուրքերն են, որոնք կազմում են մեծամասնություն և առավել մեծ թվով խնդիրների են առնչվում³⁶¹: Եթե երկրի կենտրոնական շրջաններում և այն վայրերում, որտեղ մեսխեթցի թուրքերի թիվն աննշան էր, նրանց ինտեգրման և իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները համեմատաբար քիչ էին,

³⁵⁹ **Ахметьева В., Карастелев В., Юдина Н.**, указ. соч., с. 6; **Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F.**, op. cit., p. 56.

³⁶⁰ **Pentikäinen O., Trier T.**, op. cit., p. 23.

³⁶¹ **Kuznetsov I.**, op. cit., p. 198-200.

Կրասնոդարի շրջանում մարդու իրավունքների խախտումները հայտնվեցին միջազգային կառույցների ու շաղկերթյան կենտրոնում, որոնց ջանքերով հարցը պարբերաբար բարձրացվում էր տարբեր մակարդակներում: Արդյունքում 2004 թ. մարտին Ռուսաստանում ԱՄՆ-ի դեսպանատունը պաշտոնապես հայտարարեց մեսխեթցի թուրքերի Միացյալ Նահանգներում վերաբնակեցման ծրագրի գործընթացի սկսման մասին³⁶⁷: Ռուսական կողմը չխոչընդոտեց Միացյալ Նահանգներում նրանց վերաբնակեցմանը, նույնիսկ կողմ էր այդ գաղափարին: Մինչև 2007 թվականը ներկայացվել էր ավելի քան 21 հազար դիմում, և մոտ 15 հազ. մարդ ստացել է դրական պատասխան³⁶⁸: Չնայած նրան, որ մարդիկ մեսխեթցի թուրքերի մեծ մասը լքեց երկրի տարածքը և իրավիճակը փոքրիկ չհանդարտվել ու բարելավվել է, սակայն այնտեղ մնացածների կացությունը մինչև այժմ մնում է անմխիթար³⁶⁹:

2007 թ. դրությամբ շուրջ 15 հազար մեսխեթցի թուրքեր տեղափոխվեցին ԱՄՆ և բնակվեցին 33 նահանգներում³⁷⁰: Նահանգների դաշնային իշխանությունները նախկինում էլ էին նման ծրագրեր իրականացրել, օրինակ 1948 թ. ընդունվել էին փախստականներ ետպատերազմյան եվրոպայից, 1950-ականներին՝ Արևելյան եվրոպայի սոցիալիստական ճամբարի երկրներից և Չինաստանից, 1960-1970-ականներին՝ Կուբայից, իսկ 1970-ականներին՝ Վիետնամից, Լաոսից և Կամբոջայից³⁷¹: ԱՄՆ-ում հաստատված մեսխեթցի թուրքերը բնակվում

³⁶⁷ Kuznetsov I., op. cit., p. 226.

³⁶⁸ Swerdlow S., Understanding Post-Soviet Ethnic Discrimination..., p. 1871; Osipov A., Recent Developments Concerning the Meskhetian Turks in Krasnodar Krai. 2006-2007 // Human Right Centre "Memorial", Russia, 2007 - <http://old.memo.ru/hr/discrim/meshi4/MTS%20in%20KK.HTML> (13.01.2019); Aydingün A., Aydingün İ., Ahıska Türkleri ulusötesi bir topluluk - ulusötesi aileler, s. 121-136.

³⁶⁹ Ахметьева В., Карастелев В., Юдина Н., указ. соч., с. 7-26; Meskhetians or Meskhetian Turks - <https://minorityrights.org/minorities/meskhetians-or-meskhetian-turks/> (10.02.2019).

³⁷⁰ Aydingün A., Harding Ç. B., Hoover M., Kuznetsov I., Swerdlow S., ok. cit., p. 26.

³⁷¹ Swerdlow S., Understanding Post-Soviet Ethnic Discrimination..., p. 1862.

են բավականին բարենպաստ պայմաններում և հետզհետե ինտեգրվում հասարակությանը³⁷²:

Ինչպես տեսնում ենք մեսխեթցի թուրքերը ԽՍՀՄ փլուզումից հետո Էլավելի ցրվեցին: Նրանց համայնքների մի մասը համեմատաբար բարվոք վիճակում է, ինտեգրված է երկրի հասարակությանը, էական իրավական և նյութական խնդիրներ չունի: Մինչդեռ համայնքների մի մասը ծանր կացության մեջ է հայտնվել: Նրանց գլխավոր խնդիրը խտրականության դեմ պայքարն ու իրավունքների վերականգնումն է, որից հետո միայն կարելի է խոսել հասարակությանն ինտեգրվելու մասին: Այն համայնքներում, որտեղ տեղի բնակչության հետ սոցիոմշակութային տարբերությունները նվազագույնն են, մեսխեթցի թուրքերը հակված են ուժացման: Ստեղծված պայմաններում հետզհետե անհետանում են նրանց լեզուն և մշակույթը, ինչի հետևանքով կրկին առաջանում է ինքնության պահպանման խնդիր³⁷³:

Մեսխեթցի թուրքերն այս խնդիրների լուծման տարբերակներից մեկը համարում են վերադարձը իրենց նախկին բնակության վայրեր՝ Սամցխե: Խորհրդային Միության կազմալուծումից հետո մեսխեթցի թուրքերի հայրենադարձության շարժումը միասնական ընթացք չունեցավ: Ստեղծվեցին մի շարք կազմակերպություններ, որոնց նպատակները թեև համընկնում են, սակայն մի շարք հարցերում առկա են նաև տարածայնություններ:

³⁷² Տե՛ս նաև Ն. Ա. Գրիգորյան, Էջ 1871-1878; Kurt H., Açıkgöz M. A., ABD’de yaşayan Ahıska Türkleri, - Marmara Türkiyat Araştırmaları Dergisi, 2017, Cilt 4, Sayı 1, s. 110-127.

³⁷³ Pavin E., Population Transfer: The tragedy of the Meskhetian Turks, Cultural Survival Quarterly Magazine - <https://www.culturalsurvival.org/publications/cultural-survival-quarterly/population-transfer-tragedy-meskhetian-turks> (01.03.2019)

1990 թ. հիմնվեց մեսխեթցի թուրքերի «Վաթան»³⁷⁴ միջազգային հասարակական միավորումը: 1991 թ. այն պաշտոնապես գրանցվեց Ռուսաստանում: Գլխավոր գրասենյակը գտնվում է Մոսկվայում, ունի նաև գրասենյակներ Կրասնոդարում, ՌԴ մի քանի այլ քաղաքներում և Ադրբեջանում: «Վաթան»-ը համարվում է մեսխեթցի թուրքերի առավել ազդեցիկ կազմակերպություններից մեկը, որի ղեկավարություն կարծիքով՝ ներկայացնում է մեսխեթցի թուրքերի մեծ մասի շահերը, թեև, հարկ է նշել, որ որոշ համայնքներում այս կազմակերպության մասին նույնիսկ տեղյակ չեն³⁷⁵: Սույն կազմակերպության ներկայացուցիչները մեսխեթցի թուրքերին էթնիկ թուրքեր են համարում և ունեն երկու գլխավոր նպատակ՝ անօրինական ճանաչել 1944 թվականի արտաքսումն ու թույլ տալ մեսխեթցի թուրքերին՝ առանց նախապայմանների վերադառնալ իրենց հայրենիք: Որպես հայրենիք նրանք դիտարկում են միայն նախկին Ախալցխայի փաշայության տարածքը, այլ ոչ թե ամբողջ Վրաստանը³⁷⁶: «Վաթան»-ը նաև Վրաստանի իշխանություններից պահանջում է հայրենադարձությունից հետո մեսխեթցի թուրքերին տրամադրել մշակութային ինքնավարություն, այդ թվում՝ իրենց մայրենի լեզվով (թուրքերեն) կրթության իրավունք³⁷⁷: Մեսխեթցի թուրքերի բնակության վայրերում առկա սոցիալ-տնտեսական դժվարությունները, հասարակություն մեջ ինտեգրվելու հարցը և այլ

³⁷⁴ «Վաթան» (vatan) բառը թուրքերեն նշանակում է «հայրենիք», առաջացել է միևնույն նշանակություն ունեցող արաբերեն وطن (ուատան) բառից:

³⁷⁵ Pentikäinen O., Trier T., op. cit., p. 27; Шакарян А., Турки-месхетинцы: геополитический фактор в регионе, - Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտությունների, IV, Երևան, «Ասոդիկ», 2006, էջ 80:

³⁷⁶ Modebadze V., op. cit., p. 120-121.

³⁷⁷ Թուրքագիտություն, ՎՊ. ԵՊ., 83. 90-91; Pentikäinen O., Trier T., op. cit., p. 28.

ն մ ան ատի պ խնդիրներ հաճախ անտեսվում են³⁷⁸: Այսպիսի կարևոր հարցերում կազմակերպության մոտեցումը կարելի է բացատրել ինչպես գաղափարական հիմքերով (Ռուսաստանում և այլ երկրներում մեսիտեթցի թուրքերի բնակությունը ժամանակավոր համարելով ու խնդրի միակ կողմը տեսնելով հայրենադարձության մեջ)³⁷⁹, այնպես էլ կազմակերպության ֆինանսական միջոցների սակավությունը³⁸⁰, ինչը բավականին բարդացնում է սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների կողմը: Յետևաբար, հենց այդ խնդիրները կողմնակարողությունն է կազմակերպության նպատակների և դիրքորոշումների քաղաքական ուղղվածությունն պատճառը:

1992 թ. Կաբարդինո-Բալկարիայում հիմնվեց 1944 թվականին Վրաստանից աքսորված վրացիների և նրանց սերունդների «Խսնա» կազմակերպությունը³⁸¹: Նույն թվականին այն գրանցեց Վրաստանի արդարադատության նախարարությունը և կազմակերպությունը սերտ կապեր հաստատեց Վրաստանի իշխանությունների հետ³⁸²: «Խսնա»-ն ունեւր վրացամետ դիրքորոշում: Նրա անդամներն իրենց համարում էին մահմեդականացված վրացիներ, որպես հայրենիք ընդունում էին ամբողջ Վրաստանի տարածքը և չէին պահանջում Վրաստանի իշխանություններից մշակութային ինքնավարություն³⁸³: Պետք է նշել, որ մեսիտեթցի թուրքերի շրջանում այս կազմակերպությունն ավելի քիչ թվով կողմնակիցներ ունեւր, քան «Վաթան»-ը: 1999 թվականին

³⁷⁸ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 32; Pentikäinen O., Trier T., op. cit., p. 27;

³⁷⁹ Бугай Н. Ф., Проблемы возвращения «плановых переселенцев»..., с. 50-51.

³⁸⁰ Мавашев Ю., Игры вокруг турок-месхетинцев - <http://www.politrus.com/2015/11/14/ahiska-turks/> (14.01.2019).

³⁸¹ «Խսնա» (ხსნა) վրացերենից թարգմանաբար նշանակում է «փրկություն»:

³⁸² Թուրքերի, Հաս. ԵՏՁ, ԳՅ. 91-92; Aydingün A., Ahiska (Meskhetian) Turks: Source of Conflict in the Caucasus?, p. 57.

³⁸³ Pentikäinen O., Trier T., op. cit., p. 28.

«Խսնա»-ն դադարեցրեց իր գործունեությունը և նրա փոխարեն ստեղծվեց «Վրացի հայրենադարձների միությունը»: Ի տարբերություն «Խսնա»-ի, «Վրացի հայրենադարձների միության» նպատակը ոչ թե մեսխեթցի թուրքերի հայրենադարձության հարցի լուծումն էր, այլ արդեն Վրաստանում բնակություն հաստատած մեսխեթցի թուրքերի վերաինտեգրումը և իրավունքների պաշտպանությունը³⁸⁴:

Վրաստանում գործում են նաև մեսխեթցի թուրքերի միջարքայլ կազմակերպություններ: Այդ կազմակերպություններն են «Մեսխեթի» ասոցիացիան, «Մեսխեթի» Լատիճշահ Բարաթաշվիլիի հիմնադրամը», «Գուրջիստան» Խալիլ Գոգալիշվիլիի անվան մահմեդական վրացիների միջազգային միությունը³⁸⁵: Բոլոր այս կազմակերպությունները մեսխեթցի թուրքերի ծագման հարցում վրացական վարկածի կողմնակիցներ են: Ըստ էության, Վրաստանում գործող կազմակերպություններն ավելի սերտ կապ ունեն Վրաստանի իշխանությունների հետ, քան մեսխեթցի թուրքերի: Յետևաբար կարելի է եզրակացնել, որ այդ կազմակերպությունները ստեղծվել են ի հակակշիռ «Վաթան»-ի և ունեն խիստ ընդգծված քաղաքական դիրքորոշում: Թեև այդ կազմակերպությունները զբաղված են նաև Վրաստանում բնակվող մեսխեթցի թուրքերի առօրյա խնդիրների լուծմամբ ևս, հարկ է նշել, որ նրանց թիվը երկրում շատ քիչ է՝ մոտ 1700 մարդ³⁸⁶:

³⁸⁴ Տե՛ս նաև յնտեղում:

³⁸⁵ Nodia G., op. cit., p. 52.

³⁸⁶ Written statement on repatriation of Meskhetian Turks to Georgia, submitted by the NGO Federal Union of European Nationalities, https://www.ecoi.net/en/file/local/1236549/1930_1443084042_g1520228.pdf (12.01.2019).

1994 թ. ՌԴ Կրասնոդարի մարզի Կրիմսկի շրջանում հիմնվեց «Ումիտ»³⁸⁷ կազմակերպությունը, որն իր գործունեությունը ծավալեց միայն նշված շրջանում: Նրա հիմնադիր Ակրամ Բայրախտարովի կարծիքով՝ մեսխեթցի թուրքերը էթնիկ թուրքեր են և նահամարում էր, որ խնդիրը կլուծվի հայրենիք՝ Թուրքիա տեղափոխվելով³⁸⁸: 1999 թվականին կազմակերպությունը դադարեցրեց իր գործունեությունը:

Նմանատիպ դիրքորոշմամբ մեսխեթցի թուրքերի կազմակերպություններ հիմնվեցին նաև Ղրղզստանում՝ «Ղրղզստանում բնակվող թուրքերի միություններ» ու «ԱՊՅ երկրների ահըսկա թուրքերի միջազգային միություններ»: Տաշքենդում գործում է «Մեսխեթցի թուրքերի մշակութային կենտրոն»-ը:

Թուրքիայում գործում է մեսխեթցի թուրքերի շուրջ 20 կազմակերպություն, որոնցից 15-ը բավականակտիվ գործունեություն են ծավալում: Կազմակերպությունների մեծ մասը կենտրոնացած է Բուրսա քաղաքում, որտեղ բնակվում է Թուրքիայի քաղաքացի մեսխեթցի թուրքերի մեծ մասը: 2003 թ. օգոստոսին այդ կազմակերպություններից ինը ձևավորեցին «Ահըսկա թուրքերի կազմակերպությունների միությունը»³⁸⁹, որն, ըստ էության, Թուրքիայում գործող մեսխեթցի թուրքերի կազմակերպությունների համախմբանուն ավելի համակարգված գործունեությանն ուղղված կարևոր քայլ էր: Միությունը և Թուրքիայում գործող կազմակերպություններից շատերը համարում են, որ բնակվելով Թուրքիայում, իրենք արդեն վերադարձել են իրենց հայրենիք: Նրանց գործունեության շրջանակներում է նաև

³⁸⁷ «Ումիտ» (ümit) թուրքերենից թարգմանաբար նշանակում է «հույս»:

³⁸⁸ Pentikäinen O., Trier T., op. cit., p. 29.

³⁸⁹ Տե՛ս նույն տեղում:

նորեկ մեսխեթցի թուրքերին աջակցություն ցուցաբերելը և թուրքական հասարակության մեջ ինտեգրվելու նպաստելը: Սակայն Թուրքիայում գործող կազմակերպություններից ոչ բոլորն ունեն նման դիրքորոշում: Ստամբուլում գործող «Ահըսկա թուրքերի կրթական, մշակութային և սոցիալական աջակցության կազմակերպություն»-ն իրենց հայրենիքն է համարում ներկայիս Սամցխե-Ջավախեթի տարածքը և հանդես է գալիս այնտեղ վերադառնալու մտադրությամբ³⁹⁰:

2008 թ. նոյեմբերին Անկարայում հիմնվեց «Ահըսկա թուրքերի համաշխարհային միությունը» (DATÜB), որի նպատակն է տարբեր երկրներում բնակվող մեսխեթցի թուրքերի միավորումը և ընդհանուր խնդիրների լուծումը³⁹¹: Չնայած այն հանգամանքին, որ կազմակերպությունը վայելում է Թուրքիայի կառավարության աջակցությունը, այն իր արդյունավետությամբ աչքի չի ընկնում:

2006-2007 թթ. Կրասնոդարի մարզից ԱՄՆ տեղափոխված մեսխեթցի թուրքերը հիմնել են «Ահըսկա թուրքամերիկյան միությունը», որը զբաղվում է նրանց ինտեգրմամբ և այլ խնդիրների կարգավորմամբ³⁹²: Ռուսական կողմն այդ կազմակերպության գործունեությունը դիտարկում է որպես ՌԴ-ի դեմ ուղղված ոտնձգություն և 2015 թ. այն ներառել է իր տարածքում արգելված կազմակերպությունների ցուցակում³⁹³:

Այսպիսով, թեև մեսխեթցի թուրքերն ունեն մեծ թվով կազմակերպություններ և միավորումներ, նրանց գործունեության արդյունավետությունը ցածր է, ինչը պայմանավորված է միջարքօբյեկտիվ և

³⁹⁰ **Modebadze V.**, op. cit., p. 122.

³⁹¹ DATÜB - www.ahiska-gazeta.com/ru/pages/312.html (15.01.2019).

³⁹² **Бугай Н. Ф., Мамаев М. И.**, Международное общественное объединение турок-месхетинцев «Ватан» как институт власти гражданского общества, - Историческая и социально-образовательная мысль, 2015, т. 7, № 8, с. 25-26.

³⁹³ **Мавашев Ю.**, указ. соч., - <http://www.politrus.com/2015/11/14/ahiska-turks/> (14.01.2019).

ս ու բ յ ե կ տ հ վ գ ո Ր ծ ո ն ն ե Ր ո վ : Մ ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե Ր ի մ ի ա ս ն ա կ ա ն ու թ յ ա ն ը խ ո չ ն դ ո տ ո ղ գ ո Ր ծ ո ն ն ե Ր ի ց Ե ա յ ն , ո Ր ն ր ա ն ք ս փ ռ վ ա ծ Ե ն 9 Ե Ր կ Ր ն Ե Ր ի տ ա Ր ա ծ ք ն Ե Ր ու մ : Կ ա զ մ ա կ Ե Ր պ ու թ յ ու ն ն ե Ր ի ց ո չ մ Ե կ ը ն Ե Ր կ ա յ ա ց վ ա ծ չ Ե ա ղ Ե Ր կ Ր ն Ե Ր ի ց գ ո ն Ե մ ի ք ա ն ի ս ու մ , ի ն չ ն Ե Լ ո Ր Լ Ե կ ա զ մ ա կ Ե Ր պ ու թ յ ա ն ը հ ն ա Ր ա վ ո Ր ու թ յ ու ն չ ի տ ա Լ ի ս ս տ ա ն ձ ն Ե Լ մ Ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե Ր ի շ ա Ր ժ մ ա ն ա ռ ա ջ ն ո Ր դ ու թ յ ու ն ը : Ա յ ս պ ա Ր ա գ ա յ ու մ Ե Լ ք կ ա Ր ո ղ Ե հ ա մ ա Ր վ Ե Լ կ ա զ մ ա կ Ե Ր պ ու թ յ ու ն ն ե Ր ի հ ա մ ա գ ո Ր ծ ա կ ց ու թ յ ու ն ը , ս ա կ ա յ ն մ ի շ ա Ր ք հ ա Ր ց Ե Ր ի շ ու ր ջ ն ր ա ն ց մ ո տ Ե ց ու մ ն Ե Ր ի հ ա կ ա ս ու թ յ ու ն ը (օ Ր ի ն ա կ ` մ Ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե Ր ի ի ն ք ն ու թ յ ա ն և հ ա յ Ր Ե ն ի ք ի հ ա Ր ց ը) թ ու յ Լ չ ի տ ա Լ ի ս հ ա մ ա խ մ ք վ Ե Լ ` ը ն դ հ ա ն ու Ր խ ն դ ի Ր ն Ե Ր ի Լ ու ժ մ ա ն ն պ ա տ ա կ ո վ : Բ ա ց ա ս ա կ ա ն դ Ե Ր Ե կ ա տ ա Ր ու մ ն ա ն ա յ ն , ո Ր մ Ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե Ր ի ա ռ ա վ Ե Լ խ ո շ ո Ր կ ա զ մ ա կ Ե Ր պ ու թ յ ու ն ն ե Ր ի դ ի Ր ք ո Ր ո շ ու մ ն Ե Ր ը և ն պ ա տ ա կ ն Ե Ր ը ա վ Ե Լ ի շ ա տ ք ա ղ ա ք ա կ ա ն ք ն ու յ թ ի Ե ն և ա ղ Ե թ ն ո կ Ր ո ն ա կ ա ն խ մ ք ի ն Ե Ր կ ա յ ա ց ու ց ի չ ն Ե Ր ի ա ռ օ Ր յ ա կ յ ա ն ք ու մ ու ն Ե ց ա ծ ք ա զ մ ա թ ի վ խ ն դ ի Ր ն Ե Ր ն ա ն տ Ե ս վ ու մ Ե ն : Ա ղ պ ա տ ճ ա ռ ո վ կ ա զ մ ա կ Ե Ր պ ու թ յ ու ն ն ե Ր ը ժ ո ղ ո վ Ր դ ի կ ո ղ մ ի ց Լ ա յ ն ա ջ ա կ ց ու թ յ ու ն չ Ե ն ս տ ա ն ու մ , ի ն չ ն Ե Լ ս ա հ մ ա ն ա փ ա կ ու մ Ե ն ր ա ն ց հ ն ա Ր ա վ ո Ր ու թ յ ու ն ն ե Ր ը :

Ա մ փ ո փ Ե Լ ո վ վ Ե Ր ո գ Ր յ ա Լ ը , ա կ ն հ ա յ տ Ե դ ա ռ ն ու մ , ո Ր Ե թ Ե ա Ր տ ա ք ս ու մ ի ց հ Ե տ ո մ Ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե Ր ի հ ի մ ն ա խ ն դ ի Ր ա ս Ե Լ ո վ գ Լ խ ա վ ո Ր ա պ Ե ս ն կ ա տ ի ու ն Ե ի ն ք հ ա յ Ր Ե ն ա դ ա Ր ձ ու թ յ ա ն հ ա Ր ց ը , ա պ ա Ֆ Ե Ր գ ա ն ա յ ի դ Ե պ ք Ե Ր ի ց և մ Ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե Ր ի տ ա Ր ք Ե Ր Ե Ր կ Ր ն Ե Ր տ Ե ղ ա փ ո խ վ Ե Լ ու հ Ե տ ա յ ն ա վ Ե Լ ի Ե ը ն դ Լ ա յ ն վ Ե Լ : Ը ն դ հ ա ն Ր ա ց ն Ե Լ ո վ տ ա Ր ք Ե Ր Ե Ր կ Ր ն Ե Ր ու մ ն ր ա ն ց ա ռ ջ ն Ե ղ ա ծ մ ա Ր տ ա հ Ր ա վ Ե Ր ն Ե Ր ը , կ ա Ր ո ղ Ե ն ք ա ս Ե Լ , ո Ր մ Ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե Ր ի հ ի մ ն խ ն դ ի Ր ն ի Ր Ե ն ի ց ն Ե Ր կ ա յ ա ց ու ու մ Ե մ Ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե Ր ի ի Ր ա վ ա կ ա ն և ս ո ց ի ա Լ -տ ն տ Ե ս ա կ ա ն կ ա Ր գ ա վ ի ճ ա կ ի հ ա Ր ց ը ,

բնակչության երկրի հասարակությանն
ինտեգրվելու հարցը, ինքնության պահպանման
հարցը և Վրաստան վերադարձի հարցը: Բոլոր այս
հարցերը այս կամ այն ձևաչափով գտնվում են
մեսխեթցի թուրքերի կազմակերպությունների և
միությունների ուշադրության կենտրոնում,
սակայն առավել մեծ դեր է զբաղեցնում հենց
հայրենադարձության կազմակերպման խնդիրը:
Վրաստանի իշխանությունների վարած
քաղաքականությունը նույնպես գլխավորապես
առնչվում է հիմնախնդրի այս կողմին: Այդ իսկ
պատճառով, հաջորդ գլուխներում քննարկման
գլխավոր առարկան կլինի հենց
հայրենադարձության խնդիրը:

Գ Լ ՈՒ Խ ՈՒՄ

ՄԵՍԽԵԹՅԻ ԹՈՒՐԹԵՐԻ ԻՅՄՆԱԽՆԴԻՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆԵՎԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

3.1 ՄԵՍԽԵԹՅԻ ԹՈՒՐԹԵՐԻ ԻՅՄՆԱԽՆԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Մի նչ ԽՍՀՄ փլուզումը, չնայած առկա խոչընդոտներին, մեսխեթցի թուրքերի մի մասը կարողացել էր վերադառնալ Վրաստան: Անկախությունից հետո երկրում սոցիալ-տնտեսական վիճակի կտրուկ վատթարացման, 2. Գամսախուրդիայի իշխանության օրոք տիրող ազգայնական անհանդուրժողականության մթնոլորտի և ավելի ուշ սկսված քաղաքացիական պատերազմի պատճառով, նրանց մեծ մասը ստիպված եղավ լքել հանրապետության տարածքը³⁹⁴:

Վրաստանի հետխորհրդային կառավարության առջև ծառայած բազմաթիվ խնդիրներից էր նաև միջազգային հանրության կողմից անկախության ճանաչումն ու անդամակցությունը միջազգային կառույցներին: Սակայն այդ նպատակներն իրականացնելու հարցում Գամսախուրդիայի կառավարությունն էական հաջողությունների չկարողացավ հասնել: Այդ շրջանում մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը որևէ կերպ չէր դրսևորվում Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ: Հիմնախնդիրը դեռ որևէ արձագանք չէր ստանում նաև միջազգային հանրության կողմից, վերջինիս ուշադրությունը կենտրոնացած էր նախկին ԽՍՀՄ և սոցիալիստական ճամբարի այլ երկրներում տեղի ունեցող իրադարձությունների վրա:

1992 թ. մարտին երկիրը գլխավորեց Ռազմական խորհրդի հրավերով Վրաստան ժամանած Է. Շևարդնաձեն: Արևմտյան հանրությունը Վրաստանին նոր առաջնորդից ակնկալում էր ազատ ընտրությունների անցկացման պատրաստակամության դրսևորում և հարգանք

³⁹⁴ Swerdlow S., Understanding Post-Soviet Ethnic Discrimination..., p. 1838; Мамулия Г., указ. соч., - https://www.cac.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (22.12.2018); Теймураз Ломсадзе: "80-85% месхетинцев – фактически этнические грузины" - <https://www.ekhokavkaza.com/a/25141402.html> (09.01.2019).

մարդու հրավունքների համընդհանուր
 սկզբունքների նկատմամբ³⁹⁵: Վրաստանում
 ժողովրդավարական կարգեր հաստատելու
 միտումները ցույց տալու համար հենց մարտին էլ
 նրա կարգադրություններում է «Արտաքսված
 մեսիսների հայրենադարձության հանձնաժողովը»,
 որի անդամները Վրասնոդարի մարզի
 ներկայացուցիչների հետ բանակցություններից
 հետո մշակեցին «1944 թ. Վրաստանի ԽՍՀ Մեսիսներից և
 Ջավախներից արտաքսված բնակչության
 հայրենադարձության հայեցակարգային ծրագիրը»³⁹⁶,
 որի համաձայն մեսիսների թուրքերի Վրաստան
 տեղափոխվելու համար կողմերը տարվա երկրորդ
 կեսին պետք է համապատասխան պայմաններ
 ստեղծեին: Այդ փաստաթուղթն ուներ գուտ
 հռչակագրային բնույթ, քանի որ նպատակների
 իրականացման կոնկրետ մեխանիզմներ չէր
 նախատեսում:

Բացի այդ, 1993 թ. Վրաստանի պետխորհրդի
 նախագահի հրամանագրով Թբիլիսիում հիմնվեց
 «Վրացերենի և Վրաստանի պատմության ադապտացիոն
 կենտրոն»-ը, որտեղ երիտասարդ մեսիսների թուրքերը
 կարող էին անհրաժեշտ պատրաստություն անցնել
 երկրի ԲՈՒՅ-երը նդունվելու համար³⁹⁷: Յաշվի
 առնելով դեռ խորհրդային շրջանում որդեգրած
 մոտեցումը մեսիսների թուրքերի ծագման խնդրի
 շուրջ, հավանաբար, այդ քայլով Վրաստանի
 իշխանությունները փորձում էին նպաստել
 երիտասարդ մեսիսների թուրքերի շրջանում
 վրացական վարկածի տարածմանն ու ամրապնդմանը:

³⁹⁵ Шеварднадзе Э., Когда рухнул железный занавес. Встречи и воспоминания, пер. Г. Леоновой, Москва, «Европа», 2009, с. 277.
³⁹⁶ Деловая Грузия. Экономика и связи с Россией в 1999-2001гг., Под. Ред. Г. Н. Вачнадзе, т. 1, Москва, «Пик Винити», 2002, с. 25.
³⁹⁷ Nodia G., op. cit., p. 54.

Խորհրդային իշխանությունների կողմից բռնություն ենթարկված ժողովրդի խնդիրներով զբաղվելու պատրաստակամությունը ևս, անկասկած, նպաստեց միջազգային հանրության աչքում նորանկախ Վրաստանի կերպարի բարձրացմանը: Յաջորդամիսերի ընթացքում Վրաստանը ճանաչվեց բազմաթիվ երկրների կողմից և ընդունեց պատվիրակություններ Գերմանիայից, Ռուսաստանից, Իրանից և այլ երկրներից: Նույն ժամանակահատվածում Վրաստանը դարձավ միջարք միջազգային կազմակերպությունների անդամ. 1992 թ. մարտին նա անդամակցեց ԵԱՀԽ-ին, մայիսին միացավ «Եվրոպայում սովորական գիևված ուժերի մասին պայմանագրին», հուլիս ամսին ընդունվեց ՄԱԿ, սեպտեմբերին դարձավ «Կերակառուցման և զարգացման եվրոպական բանկի» անդամ: Արտաքին քաղաքական նպատակներին հասնելուց հետո Վրաստանի իշխանությունը որոշ ժամանակով մոռացավ մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի մասին և որևէ գործնական քայլ չիրականացրեց այդ ուղղությամբ:

Այդ շրջանում Է. Շևարդնաձեի իշխանությունը երկրի ներսում դեռ վերջնականապես ամրապնդված չէր: 1992-1993 թթ. Արևմտյան Վրաստանում պարբերաբար տեղի էին ունենում վտարանդի նախագահ Զ. Գամսախուրդիայի կողմնակիցների գիևված ելույթները: Աբխազիայում ընթացող անհաջող ռազմական գործողությունները նույնպես բարդ կացություն մեջ դրեցին Է. Շևարդնաձեին: Ստեղծված իրավիճակում իր իշխանությունը պահպանելու համար նա գնաց Ռուսաստանի հետ մերձեցման ճանապարհով և 1993 թ. Վրաստանը դարձավ

ԱՊՅ անդամ, որը վրացական հասարակության կողմից ստացավ բացասական արձագանք ³⁹⁸:

Մինչ 1996 թ. Է. Շևարձաձեի հոլյան ներդրումը ծանցած խնդիրները լուծել Ռուսաստանի օգնությամբ: Եթե ներքին քաղաքական դրությունը հաջողվեց կայունացնել, ապա Աբխազիայի և Յարավայի Օսիայի հարցում Ռուսաստանի հետ մերձեցումը էական փոփոխություններին չբերեց: Առաջին չեչենական պատերազմում Ռուսաստանի կրած անհաջողությունները և դրանց հաջորդած Խասավյուրտի համաձայնագիրը լուրջ հարված հասցրին Ռուսաստանի հեղինակությանը և Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ փոփոխություններին պատճառ դարձան ³⁹⁹: Վրաստանի կառավարությունը նորից փորձեց կապերն ամրապնդել Արևմուտքի հետ:

Դեռ 1996 թ. մայիսին ԵԱՀԿ, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի և Միգրացիայի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ տեղի ունեցած «Փախստականների, տեղահանված անձանց, բռնի տեղահանության այլ ձևերի և վերադարձների խնդիրներով ԱՊՅ երկրների և նրանց հարևան պետությունների տարածաշրջանային կոնֆերանս»-ի հայտարարությունում ճանաչվեց բռնի տեղահանված ժողովուրդների իրենց նախկին բնակավայրեր կամավոր վերադարձի իրավունքը ⁴⁰⁰: Փաստորեն, այս փաստաթղթով սկիզբ դրվեց մեսիսթեթի թուրքերի հարցի միջազգային մակարդակով ճանաչման գործընթացին:

³⁹⁸ **Шеварднадзе Э.**, указ. соч., с. 370-371; **Маилян Б.В.**, Российско-грузинские отношения и вопрос членства Грузии в СНГ, - Научная конференция «Историко-культурные основы социально-политической модернизации», Ереван, Изд-во РАУ, 2012, с. 81-83.

³⁹⁹ **Маилян Б.В.**, Российско-грузинские отношения и вопрос членства Грузии в СНГ, с. 85-86.

⁴⁰⁰ Regional Conference to address the problems of refugees, displaced persons, other forms of involuntary displacement and returnees in the countries of the Commonwealth of Independent States and relevant neighbouring States (Geneva, 30-31 May, 1996) - <https://www.iom.int/jahia/webdav/shared/shared/mainsite/microsites/rcps/cis-conference/CIS%20Declaration%20POA%20Regional%20Conference%201996.pdf> (23.02.2019).

Ս ու ւ փ ս ա ն ա վ թ ա մ ու ղ ը , հ ե տ զ հ ե տ ե ս կ ս ե ց ի ր ա գ ո թ յ է ւ
«Տ Ր Ա Ս Ե Կ Ա» ք ա զ մ ա կ ո ղ մ հ ա մ ա գ ո թ ա կ ց ու թ յ ա ն
ծ ր ա գ ի ր ը : 1996 թ . Վ ր ա ս տ ա ն ի և Ե Մ մ ի ջ և կ ն ք վ ե ց
«Գ ո թ ծ ը ն կ ե թ ու թ յ ա ն և հ ա մ ա գ ո թ ա կ ց ու թ յ ա ն մ ա ս ի ն »
հ ա մ ա ձ ա յ ն ա գ ի ր ը ⁴⁰⁵:

Տ ե ս ն է ւ ղ ո վ Ա ր և մ ու տ ք ի հ ե տ ա ք ր ք ր վ ա ծ ու թ յ ու ն ը
Վ ր ա ս տ ա ն ի հ ա ն դ ե պ , կ ա ռ ա վ ա ր ու թ յ ու ն ը ա ր և մ տ յ ա ն
ք ա ղ ա ք ա կ ա ն , տ ն տ ե ս ա կ ա ն և ռ ա զ մ ա կ ա ն կ ա ռ ու յ ց ն ե թ ի ն
ա ն դ ա մ ա կ ց է ւ ղ ն պ ա տ ա կ ո վ մ ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե թ ի
հ ա յ ր ե ն ա դ ա ր ձ ու թ յ ա ն խ ն դ ր ու մ գ ի ջ ու մ ն ե թ ի
գ ն ա լ ու պ ա տ ր ա ս տ ա կ ա մ ու թ յ ու ն դ ր ս ն ո թ ե ց :

1990-ա կ ա ն թ վ ա կ ա ն ն ե թ ի ն մ ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե թ ի
խ ն դ ի ր ը հ ա յ տ ն վ ե ց ն ա ն պ ա շ տ ո ն ա կ ա ն Ա ն կ ա ր ա յ ի
ու շ ա դ ր ու թ յ ա ն կ ե ն տ ր ո ն ու մ , ո թ ի ջ ա ն ք ե թ ո վ ն ր ա ն ց
հ ա յ ր ե ն ա դ ա ր ձ ու թ յ ա ն հ ա ր ց ը ք ա ր ձ ր ա ց վ ե ց ն ա ն Ե Ա Յ Կ -
ու մ ⁴⁰⁶: 1998 թ . Յ ա ա գ ա յ ու մ և 1999 թ . Վ ի ե ն ն ա յ ու մ Ե Ա Յ Կ և
Մ Ա Կ Փ ա խ ս տ ա կ ա ն ն ե թ ի հ ա ր ց ե թ ո վ գ ե ր ա գ ու յ ն
հ ա ն ձ ն ա կ ա տ ա ր ի գ ր ա ս ե ն յ ա կ ի ն ա խ ա ձ ե ռ ն ու թ յ ա մ ք
մ ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե թ ի հ ա ր ց ո վ ա ն ց կ ա ց վ ե ց ի ն
խ ո թ հ ի ղ ա կ ց ու թ յ ու ն ն ե թ , ո թ ի ն ն ե թ կ ա Ե ի ն
Վ ր ա ս տ ա ն ի , Ռ ու ս ա ս տ ա ն ի , Թ ու ր ք ի ա յ ի , Ա դ ր ք ե ջ ա ն ի ,
Ու կ ր ա ի ն ա յ ի , ա յ դ ե թ կ ը ն ե թ ու մ ք ն ա կ վ ո ղ մ ե ս խ ե թ ց ի
թ ու ր ք ե թ ի և «Վ ա թ ա ն » կ ա զ մ ա կ ե ր պ ու թ յ ա ն
ն ե թ կ ա յ ա ց ու ց ի չ ն ե թ ը : Խ ո թ հ ի ղ ա կ ց ու թ յ ու ն ն ե թ ի
ն պ ա տ ա կ ն Ե թ ` հ ի մ ն ա խ ն դ թ ի ք ն ն ա ր կ ու մ ն ու ա ռ կ ա
խ ն դ ի թ ն ե թ ի կ ա ր գ ա վ ո թ մ ա ն փ ո թ ձ ը ⁴⁰⁷:

Խ ո թ հ ի ղ ա կ ց ու թ յ ու ն ն ե թ ի ա ր դ յ ու ն ք ու մ Ե Խ
ա ն դ ա մ դ ա ռ ն ա լ ու հ ա մ ա ր Վ ր ա ս տ ա ն ի
պ ա ր տ ա վ ո թ ու թ յ ու ն ն ե թ ու մ ն ե թ ա ռ վ ա ծ Ե թ ն ա ն
դ ր ու յ թ մ ե ս խ ե թ ց ի թ ու ր ք ե թ ի
հ ա յ ր ե ն ա դ ա ր ձ ու թ յ ու ն ը կ ա զ մ ա կ ե ր պ է ւ ղ
վ ե ր ա ք ե թ յ ա լ : Ե Խ ա ն դ ա մ ա կ ց ու թ յ ա ն Վ ր ա ս տ ա ն ի

⁴⁰⁵ Partnership and Cooperation Agreement (PCA) - http://smr.gov.ge/Uploads/2_Partner_cce01fcf.pdf (23.02.2019).

⁴⁰⁶ Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-мехетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

⁴⁰⁷ Trier T., Tarkhan-Mouravi G., Killimnik F., op. cit., p. 37-40.

դիմումի 10.2 կետի համաձայն կազմակերպությանը միանալուց հետո, երկու տարվա ընթացքում Վրաստանի խորհրդարանը պետք է ստեղծեր օրենսդրական հիմք մեսխեթցի թուրքերի վերադարձի համար, որից հետո 3 տարվա ընթացքում պետք է սկսեր հայրենադարձության գործընթացը և 12 տարվա ընթացքում ավարտեր այն⁴⁰⁸:

Ես անդամակցությանը գուգահեռ Վրաստանը գնաց հետխորհրդային տարածքում ինտեգրման գործընթացներին չմասնակցելու և Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական կապերի թուլացման ուղղությամբ: Եվրոպական վերազային կառույցների հետ հարաբերությունների խորացումը թույլ տվեց լուծել նաև այդ հարցը: 1999 թ. ապրիլին Վրաստանը հայտարարեց ԱՊՀ-ն լքելու ցանկության մասին⁴⁰⁹, իսկ նոյեմբերին Ստամբուլում անցկացված ԵԱՀԿ գագաթնաժողովում Վրաստանին հաջողվեց իր տարածքից ռուսական զորքերի դուրս բերման շուրջ ծավալված քննարկումներում համաձայնության գալ Ռուսաստանի հետ⁴¹⁰: Ես անդամակցությունից և իր տարածքից ռուսական զորքերի դուրս բերման համաձայնությունը ստանալուց հետո Վրաստանի շխանությունները կրկին «մոռացան» մեսխեթցի թուրքերի խնդրի մասին:

Յետագա տարիներին օրենսդրական բազայի ստեղծումը նախատեսվածից շատ ավելի դանդաղ էր ընթանում: Ես-ին անդամակցելիս ստանձնած պարտավորությունից անմիջապես հետո մշակվեց մեսխեթցի թուրքերի հայրենադարձության վերաբերյալ երկու օրինակածի օրինակ՝ մեկը Գ.

⁴⁰⁸ Georgia's application for membership of the Council of Europe - <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=16669&lang=en> (17.01.2019).

⁴⁰⁹ **Мачавариани Г.Г.**, Внешняя политика Грузии на Южном Кавказе (1991-2016гг.), Дис. канд. ист. наук, Российский университет дружбы и народов, Москва, 2017, с. 56.

⁴¹⁰ OSCE Istanbul Document 1999, p. 49, 252 - <https://www.osce.org/mc/39569?download=true> (25.02.2019); **Маилян Б.В.**, Российско-грузинские отношения и вопрос членства Грузии в СНГ, с. 85.

Մամուլի հայի, իսկ երկրորդը Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից: Երկրորդ տարբերակը դարձավ հետագա օրինագծի հիմքը⁴¹¹: Մշակված օրինագծի օրինակը, իշխանությունների խոստովանելու հակառակ, երկար ժամանակ չէր ներառվում խորհրդարանական քննարկումների օրակարգ:

2001 թ. Վրաստանի պարտավորությունների և պարտականությունների իրականացման մասին բանաձևում ԵԽ-ն կոչ էր անում երկրի իշխանություններին արագացնել մեսխեթցի թուրքերի հայրենադարձության գործընթացը, այդ թվում նաև օրենքի իրավական փորձաքննության իրականացումը⁴¹²:

Թուրքիայի և միջազգային հանրության ճնշման տակ Վրաստանում վերամշակվեց մեսխեթցի թուրքերի հայրենադարձության վերաբերյալ օրինագիծը, որն ընդհանուր առմամբ դրական արձագանք ստացավ Եվրոպայի խորհրդի մասնագետների կողմից⁴¹³: Չնայած դրան՝ Շևարդնաձեի կառավարության օրոք օրինագիծն այդպես էլ չմտավ խորհրդարանի օրակարգ:

Վրաստանի իշխանությունները գործընթացի ձգձգումը պայմանավորում էին երկրի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակով և Աբխազիայի ու Չարվայի Օսիայի հակամարտությունների հետևանքով մեծ թվով ներքին տեղահանվածների խնդրով⁴¹⁴: Այդ հարցերի լուծման համար Թբիլիսիսի ակնկալում էր եվրոպական կառույցների բազմակողմանի ֆինանսական աջակցությունը, ինչի

⁴¹¹ Sumbadze N., op. cit., - <http://www.policy.hu/sumbadze/Nana--Meskhetians5.html> (03.03.2019).
⁴¹² Parliamentary Assembly of the Council of Europe Resolution 1257 (2001) "Honouring of obligations and commitments by Georgia" - <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=16941&lang=en> (22.03.2019).
⁴¹³ Деловая Грузия, с. 25.
⁴¹⁴ Տե՛ս նաև նաև տեղում, էջ 26:

թուրքերի հայրենադարձության հարցն
օգտագործելն չմիայն ներկայանալու համարորպես
ժողովրդավարության և մարդու համընդհանուր
իրավունքների սկզբունքները պաշտպանող երկիր,
այլ նաև նյութական օգնություն ստանալու համար՝
երկրում տնտեսական բարեփոխումներ
անցկացնելու նպատակով:

Վրացի քաղաքական գործիչները նաև
մտահոգություն էին հայտնում, որ մեսխեթցի
թուրքերի վերադարձը Սամցխե-Ջավախեթի կարող է
ապակայունացնել այդ շրջանը և նույնիսկ սպառնալ
երկրի տարածքային ամբողջականությունը:⁴¹⁹
Առանձին հեղինակներ, հատկապես Թուրքիայից և
Ադրբեջանից, նույնիսկ խոչընդոտներից մեկն
անվանում են «հայկական գործոն»⁴²⁰: Որպես
մեսխեթցի թուրքերի վերադարձին խոչընդոտող
հանգամանք վրացի քաղաքական գործիչներն ու
հետազոտողները նշում են, որ մեսխեթցի թուրքերի
նախկին գյուղերի մի մասը զբաղեցրել են
ջավախահայերը և այնտեղ մեսխեթցի թուրքերի
վերադարձը կարող է նոր հակամարտության պատճառ
դառնալ: Որպես խոչընդոտ դիտարկում են նաև
ջավախահայության բացասական վերաբերմունքն
այդ գործընթացի նկատմամբ⁴²¹: Սակայն պետք է նշել,
որ հայերը բնակվում են մեսխեթցի թուրքերի 200-ից
ավելի նախկին գյուղերից միայն մի քանիսում:
Գյուղերի մոտ 2/3 մասը բնակեցված է էթնիկ
վրացիներով, իսկ մնացած մասը լքված է⁴²²:

Բացի այդ, Վրաստանի իշխանությունները
մեսխեթցի թուրքերի Սամցխե-Ջավախեթի

⁴¹⁹ Modebadze V., op. cit., p. 123-125; Оганесян А., указ. соч., с. 173.

⁴²⁰ Bilestka Y., Tuncel T.K., Ahıska Türklerinin Gürcistan'a geri dönüşü ve 'Ermeni Factorü' - Gürcistan'daki Müslüman Topluluklar: Azınlık Hakları, Kimlik, Siyaset, Ankara, Avrasya İncelemeleri Merkezi, 2016, s. 319-341; Seferov R., Akış A., Sovyet Döneminden Günümüze Ahıska Türklerinin Yaşadıkları Coğrafyaya Göçlerle Birlikte Genel Bir Bakış, s. 406-407.

⁴²¹ Modebadze V., op. cit., p. 122; Оганесян А., указ. соч., с. 173.

⁴²² Новикова Г. В., Дашко В. И., Самцхе-Джавахети: в эпицентре интересов, - Грузия: проблемы и перспективы развития, т.2, Москва, 2002, с. 251-252; Калишевский М., указ. соч. - <https://www.fergananews.com/articles/6281> (11.01.2019); Ջարդարյան Ա., նշվ. աշխ., էջ 210:

վերադառնալու հեռանկարն օգտագործում էին որպես լրացուցիչ գործոն տեղի հայու թյան նկատմամբ ճնշում գործադրելու համար և չէին բացառում Սամցխե-Ջավախեթում բնակեցնելու հնարավորությունը⁴²³: Ընդ որում, տեղի բնակչության և մասնավորապես՝ հայերի կարծիքը հաշվի չէր առնվում: Օրինակ՝ այդ մասին էր խոսվում Վրաստանի հակամարտությունների կարգավորման նախարար Գ. Խախնդրավայի Ադրբեջան կատարած այցելության ժամանակ արված հայտարարության մեջ⁴²⁴: Միևնույն ժամանակ, Ադրբեջանում բնակվող մեսխեթցի թուրքերի հետ հանդիպմանը նահայտարարում էր, որ վերջիններիս վերադարձին ընդդիմանում են տեղի հայերը, այդ կերպ փորձելով պատասխանատվությունը գցել ջավախահայության վրա⁴²⁵: Վրացի շխանությունների այդ քաղաքականությունը կապված էր դեռ 1990-ականների սկզբից Ջավախքում կենտրոնական իշխանության բավականին թույլ ազդեցության և շրջանի փաստացի ինքնուրույն կարգավիճակի հետ: Այդ ընթացքում ջավախահայությունը պահանջում էր նաև մշակութային ինքնավարություն, ինչը Թբիլիսին ընդունում էր չափազանց ցավոտ, ելնելով իր նախկին ինքնավար շրջանների հետ ունեցած հակամարտությունների փորձից: Վրացական քաղաքական շրջանակներում մտավախություն և կար, որ Ջավախքում կարող է սկսվել նաև անջատողական շարժում⁴²⁶:

⁴²³ **Վերանյան Կ.**, Վրաստան. մոտեցումներ Ադրբեջանի և Թուրքիայի վրաց համայնքների նկատմամբ - http://www.noravank.am/upload/pdf/125_am.pdf (25.02.2019):

⁴²⁴ **Расуладе З.**, Грузия готова принять турок-месхетинцев - <https://www.kavkaz-uzel.eu/articles/91205/> (13.02.2019).

⁴²⁵ Գեորգի Խախնդրավայ. «Մեսխեթցի թուրքերի վերադարձին դեմ է Վրաստանի հայկական բնակչությունը» - <https://www.azatutyun.am/a/1580310.html> (13.02.2019).

⁴²⁶ **Нодиа Г.**, Грузия: измерения уязвимости, - Государственность и безопасность: Грузия после «революции роз», Лондон, МТИ-пресс, 2005, с. 70-72.

Նման քաղաքականության հետևանքով էլ Ջավախքում մարդիկ բողոքում էին պաշտոնական թբիլիսիի կողմից տեղի հայերի նկատմամբ հարցի շահարկմամբ ճնշումներ իրականացնելու դեմ⁴²⁷: Թեև Յայաստանի և Ջավախահայության համար մեսիտեթցի թուրքերի գանգվածային բնակեցումը Սամցխե-Ջավախեթիում կարող է անցանկալի հետևանքներ ունենալ, Յայաստանի իշխանություններն իրենց դիրքորոշումը պաշտոնապես չեն հայտնել, իսկ տեղի հայերը դեմ չեն նրանց վերադարձին, եթե հայրենադարձները բնակեցվեն այն վայրերում, որտեղից աքսորվել են՝ այսինքն Սամցխեում (Ադիգենի, Ախալցխայի և Ասպինձայի շրջաններում)⁴²⁸: Մեսիտեթցի թուրքերին հայաբնակ շրջաններ տեղափոխելու խոսակցություններն այդպես էլ իրականություն չդարձան: Ըստ էության, թբիլիսիում թուրքիայի կողմից մեսիտեթցի թուրքերին իրենց քաղաքական նպատակներով օգտագործելու վտանգն ավելի սպառնալից էին համարում և, ինչպես ընթացքում ակնհայտ դարձավ, փորձում էին խուսափել մեսիտեթցի թուրքերին այդ տարածաշրջանում բնակեցնելուց:

Սակայն եվրոպական միջազգային կառույցները շարունակեցին ճնշում գործադրել Վրաստանի կառավարության նկատմամբ: 2005 թ. փետրվարին Եվրոպայի Խորհրդի ընդունած բանաձևում ՌԴ Կրասնոդարի շրջանում տեղական իշխանությունների խտրական գործելանձի դատապարտման հետ մեկտեղ, քննադատվում էր նաև Վրաստանի իշխանությունների վարած քաղաքականությունը: ԵԽ-ը կոչ էր անում Վրաստանի կառավարությանը հարգել և

⁴²⁷ Армяне Джавахети обвиняют власти Грузии в противоправных действиях - <https://www.kavkaz-uzel.eu/articles/78636/> (16.01.2019).
⁴²⁸ Калишевский М., указ. соч. - <https://www.fergananews.com/articles/6281> (11.01.2019).

հուլիսի 27-ին Վրաստանի նախագահի կողմից ստորագրված «XX դարի 40-ական թվականներին ԽՍՀՄ կողմից Վրաստանի ԽՍՀ-ից բռնի արտաքսված անձանց հայրենադարձության մասին» օրենքը չի հանդիսանում 1999 թվականին Եւանդամակցության ժամանակ ստանձնած պարտավորությունների կատարում: Օրենքը չի ստեղծում պայմաններ բռնի տեղահանված անձանց հայրենադարձության համար: Օրենքը պարունակում է սահմանափակող և խտրական դրույթներ և ընդհանուր առմամբ ուղղված է արտաքսված ժողովրդի՝ հայրենիք վերադարձի դեմ: Ընդունված օրենքը հակասում է 1999 թվականին մեսխեթի թուրքերի՝ որպես արտաքսված ժողովրդի՝ հայրենիք վերադարձի վերաբերյալ Վրաստանի ստանձնած պարտավորությունների մտքին»⁴³⁶: Վրաստանի ընդիմադիր ուժերը նույնպես քննադատեցին օրենքը, սակայն որպես երկրի շահերին հակասող որոշում ⁴³⁷:

Օրենքի հակասությունների վերաբերյալ պատկերացում կազմելու համար քննարկենք նրա բաժիններից մի քանիսը: 3-րդ հոդվածով սահմանվում էր, թե ով կարող է դիմել հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար. «Հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար համապատասխան դիմում ներկայացնող իրավունք ունեցող անձինք են՝

1. բռնի տեղահանված անձը և նրա անմիջական սերունդները,

2. սույն հոդվածի 1-ին կետում նշված անձանց ամուսինները և անչափահաս երեխաներն այս օրենքով սահմանված կարգով հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար համապատասխան

⁴³⁶ Резолюция 5-ого съезда Международного общества мекхетинских турок «Ватан» - <http://old.memo.ru/hr/discrim/ver1/s-07.html> (16.02.2019).

⁴³⁷ **Հարույթ ունյան Ա.**, նշվ. աշխ., էջ 205-206:

դիմում ներկայացնելու իրավունք ունեն 1-ին կետում նշված անձանց կողմից հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար դիմումի առկայության և նրա համաձայնության դեպքում»⁴³⁸: Այսպիսով, 1-ին կետով նշվում է, որ հայրենադարձի կարգավիճակ կարող են ստանալ բռնագաղթված անձը և նրա սերունդները, սակայն 2-րդ կետով պայման է դրվում ամուսինների և նրա սերունդների համար, այն դեպքում, երբ նրանք պետք է ստանան բռնագաղթվածի համաձայնությունը, հետևաբար նրա մահվան դեպքում 2-րդ կետի անձինք չեն կարող ձեռք բերել հայրենադարձի կարգավիճակ:

Փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներառում էր տասից ավել տարբեր տեղեկանքներ՝ անձը հաստատող փաստաթուղթ, ամուսնության վկայական, իր և երեխաների ծննդյան վկայականները, ինքնակենսագրություն, այլ երկրի քաղաքացիություն ունենալու կամ մշտական բնակություն մասին, դատվածության, ընտանիքի կարգավիճակի, ունեցվածքի և ֆինանսական միջոցների մասին, ինչ քաղաքացիություն ունի, ինչլեզուներով է տիրապետում և այլն:

4-րդ հոդվածի 2-րդ կետով հայրենադարձի կարգավիճակ ստանալու դիմումի հետ միասին անձը պետք է ներկայացնի նաև «բռնի տեղահանումը հաստատող փաստաթուղթ»: Նման հատուկ փաստաթուղթ արտաքսվածներին խորհրդային իշխանությունները չէին տրամադրում և հստակ չէ, թե որ փաստաթղթերը կարող են համարվել «բռնի տեղահանման ապացույց»: Եթե դիմող անձը այս փաստաթղթերից որևէ մեկը չէր կարող ներկայացնել, ապա պետք է հիմնավորել այն

⁴³⁸ Կոզիլի սերժ-ის მიერ XX საუკუნის 40-იან წლებში საქართველოს სსრ-იდან იძულებით გადასახლებულ პირთა რეპატრაციის შესახებ საქართველოს კანონი - <https://matsne.gov.ge/ka/document/view/22558?publication=7> (26.02.2019).

օբյեկտիվ պատճառները, որոնց պայմաններում անհնար էր փաստաթղթի ներկայացումը ⁴³⁹:

Դիմումը պետք է լրացվեր վրացերեն կամ անգլերեն լեզուներով, մինչդեռ մի քանի տասնյակ տարի Միջին Ասիայում բնակված մարդկանց մեծ մասը այդ լեզուներից որևէ մեկին չէր տիրապետում: 7-րդ հոդվածով սահմանվում էր, որ անհրաժեշտության դեպքում կառավարությունը իրավունք ուներ՝ պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր, անցկացնել հարցազրույցներ, անձի քաղաքացիական վերաինտեգրման հետ կապված թեստեր: Եթե կանխամտածված ներկայացվել էին կեղծ տվյալներ, դիմումը չէր քննարկվում և վերադարձվում էր: Առավելություն էր տրվում վրացերեն լեզվին տիրապետող անձանց, սակայն պետք է նշել, որ շատ քչերն էին տիրապետում վրացերենին: Բացի այդ, հայտերի ընդունմանը հատկացվել էր միայն մեկ տարի: Չարկ է նշել, որ եթե փաստաթղթերում թերություններ էր հայտնաբերվում, ապա թույլատրվում էր դրանք ճշտել 4ամսվա ընթացքում, հակառակ դեպքում փաստաթղթերը վերադարձվում էին: Եվս մեկ կարևոր հանգամանք, որ սույն իրավական ակտով սահմանվում էր, որ հայրենադարձների վրա չէր տարածվում «Վրաստանի վարչական օրենսգրքի» պահանջները, այսինքն հայրենադարձի կարգավիճակ ստանալու համար դիմողները այն չստանալու դեպքում չէին կարող բողոքարկել Վրաստանի փախստականների և տարաբնակեցման հարցերի նախարարության կայացրած որոշումները:

9-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հայրենադարձի կարգավիճակ շնորհված անձին քաղաքացիություն է տրվում համաձայն «Վրաստանի քաղաքացիության մասին» օրենքի, սակայն 2-րդ

⁴³⁹Տե՛ս նույն տեղում:

მას ხსნის ორივე მიზნით აღნიშნული 449 ფასით, რომელიც, თუმცა, არაა დადგენილი, არამედ განისაზღვრულია მხოლოდ იმ შემთხვევაში, თუ საჭიროა დადგინდეს, რომელიც უფრო მაღალია, ვიდრე მასზე აღნიშნული 449 ფასით. ამასთან, აღნიშნული 449 ფასით, რომელიც, თუმცა, არაა დადგენილი, არამედ განისაზღვრულია მხოლოდ იმ შემთხვევაში, თუ საჭიროა დადგინდეს, რომელიც უფრო მაღალია, ვიდრე მასზე აღნიშნული 449 ფასით.

მასთან დაკავშირებით, აღნიშნული 449 ფასით, რომელიც, თუმცა, არაა დადგენილი, არამედ განისაზღვრულია მხოლოდ იმ შემთხვევაში, თუ საჭიროა დადგინდეს, რომელიც უფრო მაღალია, ვიდრე მასზე აღნიშნული 449 ფასით. ამასთან, აღნიშნული 449 ფასით, რომელიც, თუმცა, არაა დადგენილი, არამედ განისაზღვრულია მხოლოდ იმ შემთხვევაში, თუ საჭიროა დადგინდეს, რომელიც უფრო მაღალია, ვიდრე მასზე აღნიშნული 449 ფასით.

⁴⁴⁹ Association Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and Georgia, of the other part - [https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:22014A0830\(02\)\(22.03.2019\)](https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/PDF/?uri=CELEX:22014A0830(02)(22.03.2019)).

⁴⁵⁰ საქართველოს მთავრობის განკარგულება ყოფილი სსრკ-ის მიერ XX საუკუნის 40-იან წლებში საქართველოს სსრ-იდან იძულებით გადასახლებულ პირთა რეპატრაციის შესახებ სახელმწიფო სტრატეგიის დამტკიცების შესახებ - <https://matsne.gov.ge/ka/document/view/2509406?publication=0> (22.03.2019).

վերլուծությունը վկայում է, որ մեսիսթեթի թուրքերի հայրենադարձության հիմնախնդիրը Վրաստանի համար կարևոր նշանակություն ունեցող մի քանի առումներով: Նախ, մեծ թվով թուրքախոս և մահմեդական մարդկանց հաստատվելն է՝ ավելի կբարդացներ ժողովրդագրական ոչ այնքան բարվոք վիճակը: Այդ մարդկանց բնակեցումը Թուրքիայի հետ սահմանակից շրջաններում, թերևս, հղի էր այլ վտանգավոր զարգացումներով: Այդուհանդերձ, ճիշտ քաղաքականության դեպքում Վրաստանի իշխանությունները կարող էին այդ հիմնախնդիրն օգտագործել միջազգային հարաբերությունների հարթությունում՝ ի նպաստ արտաքին քաղաքական ոլորտում իրենց դիրքերի ամրապնդման:

Միջազգային կազմակերպությունների օրակարգում հիմնախնդրի հայտնվելուց հետո Վրաստանի արտաքին քաղաքականությանն այդ հարցում կարելի է բաժանել երեք փուլի: Առաջին փուլում Վրաստանն իր հետաքրքրությունն էր ցուցաբերում խնդրի լուծման նկատմամբ ժողովրդավար և մարդու իրավունքների պաշտպանության հետաքրքրված երկրի կերպար ստեղծելու և եվրոպական միջազգային կառույցներին անդամակցելիս՝ պոտենցիալ բարդությունը նպաստավոր գործոնի վերափոխելու համար:

Երկրորդ փուլում, երբ պետք է ընդունվեին և իրականացվեին մեսիսթեթի թուրքերի հայրենադարձությանը նպաստող որոշումներ, Վրաստանի քայլերն աչքի ընկան դանդաղությամբ և մեծ ինտերցիայով: Արդյունքում Վրաստան վերադառնալու նպատակով գրանցվեցին և ստեղծափոխվեցին սահմանափակ թվով մեսիսթեթի թուրքեր:

Երրորդ փուլում, որը դեռ իրագործման ընթացքում է, Վրաստանին հաջողվեց միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների օրակարգում մեսխեթցի թուրքերի հայրենադարձության խնդիրը փոխարինել վերադարձի ցանկություն հայտնած մի քանի հազար մեսխեթցի թուրքերի ադապտացիայի հարցով: Հատկանշական է, որ Եվրամիության հետ 2014 թ. կնքված Ասոցացման պայմանագրում մեսխեթցի թուրքերի խնդրին անդրադարձչկա:

Ինչ վերաբերվում է ստանձնած պարտավորություններին և հիմնախնդրի նկատմամբ ներքին քաղաքականությանը, ապա այն ընդամենը արտաքին քաղաքականության արձագանքն էր և գործնականում որևէ էական նշանակություն չունեցավ հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից:

3.2 ՄԵՍԽԵԹՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՐԵՎԱՆԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրը թեև Վրաստանի ներքին խնդիրներից է, միևնույն ժամանակ, այն որոշակիորեն առնչվում է Վրաստանի հարևան երկրների աշխարհաքաղաքական շահերի հետ:

Մեսխեթցի թուրքերի հայրենադարձման հարցով առավել շահագրգիռ երկրներից են Թուրքիան և Ադրբեյջանը: Այդ մասին է վկայում նաև այն, որ հիմնախնդիրը միջազգային ատյանների ու շահագրգիռ կենտրոնում հայտնվել է հենց Թուրքիայի շնորհիվ: Հատկանշական է, որ մեսխեթցի թուրքերի վերադարձի հարցը ԵԱՀԽ-ում բարձրացվեց Թուրքիայի և Լատվիայի

պատգամավորները համատեղ ջանքերով⁴⁵³: Լատվիան
ուղղակի շահ չունի մեսխեթցի թուրքերի
վերադարձի հարցում, սակայն հարկ է նշել, որ
Լատվիացիները շատ զգայուն են ստալինյան
տարիներին տեղի ունեցած բռնաճնշումների հարցի
նկատմամբ, քանի որ հազարավոր Լատվիացիներ
նույնպես աքսորվել էին երկրից: Բարձրացնելով
հիմնախնդիրը միջազգային ատյաններում, Լատվիան
ևս մեկ անգամ ցույց էր տալիս ԽՍՀՄ
իշխանություններին ամբողջատիրական ռեժիմի
անօրինականությունները: Թերևս Թուրքիան
կարող էր օգտագործել այդ տրամադրություններն
իր քաղաքական շահերի օգտին:

Թուրքիայի աջակցությունը վայելում է ն
մեսխեթցի թուրքերի այն կազմակերպությունները,
որոնք արտահայտվում են Թուրքիա տեղափոխվելու
օգտին կամ պահանջում են Վրաստանի
իշխանություններից թույլ տալ իրենց
վերադառնալ Սամցխե-Ջավախեթի:

Դեռ 1992 թ. հունիսին Թուրքիայում ընդունվեց
օրենք, որը նպաստում էր նախկին խորհրդային
հանրապետություններից մեսխեթցի թուրքերի
ներգաղթին⁴⁵⁴: Չնայած Թուրքիայի
կառավարությունը պատրաստ էր \$ի նանսավորել 500
ընտանիքի, սակայն այդ նախաձեռնությունը մեծ
հաջողություն չունեցավ և 1993-1994 թթ. ընթացքում
Թուրքիա տեղափոխվեց միայն 179 ընտանիք, որոնց
կեսը ստացան քաղաքացիություն⁴⁵⁵: Նրանց մեծ մասը
բնակեցվեց ժամանակակից Թուրքիայի արևելյան
շրջաններում՝ պատմական Արևմտյան Հայաստանի
տարածքում: Հետագա տարիներին Թուրքիա

⁴⁵³ Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-месхетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

⁴⁵⁴ Zeyrek Y., Ahıska ve Ahıska Türkleri meselmeniz - <http://www.ahıska.org.tr/wp-content/uploads/YENİ-TÜRKİYE.pdf> (24.02.2019).

⁴⁵⁵ Шакарян А., указ. соч. с. 78; Aydingün A., Aydingün İ., Ahıska Türkleri ulusötesi bir topluluk - ulusötesi aileler, s. 89-90.

ն եր գ աղ թ ե ց ի ն ա վ ե լ ի մ ե ծ թ վ ո վ մ ե ս խ ե թ ց ի թ ու ը ք ե ը :
Վ եր ջ ի ն շ ը ջ ա ն ու մ Թ ու ը ք ի ա տ ե ղ ա փ ո խ վ ա ծ մ ե ս խ ե թ ց ի
թ ու ը ք ե ը ը հ ի մ ն ա կ ա ն ու մ Ու կր ա ի ն ա յ ի
հ ա կ ա մ ա թ ու ը թ յ ա ն գ ո տ ու մ գ տ ն վ ո ղ տ ա թ ա ծ ք ն եր ի ց ե ն ,
ո թ ո ն ց ն ու յ ն ա տ ս Թ ու ը ք ի ա յ ի ի շ խ ա ն ու թ յ ու ն ն եր ը
փ ո թ ճ ու մ ե ն ք ն ա կ ե ց ն ե լ ա թ ե լ յ ա ն շ ը ջ ա ն ն եր ու մ ⁴⁵⁶:
Ա յ ն ու ա մ ե ն ա յ ն ի վ , մ ե ս խ ե թ ց ի թ ու ը ք եր ի ց շ ա տ եր ն
ա ն տ ե ս ու մ ե ն Թ ու ը ք ի ա յ ի ի շ խ ա ն ու թ յ ու ն ն եր ի
ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ը և տ ե ղ ա փ ո խ վ ու մ եր կ թ ի
ա թ ե մ տ յ ա ն շ ը ջ ա ն ն եր ՝ կ ե ն տ թ ո ն ա ն ա լ ո վ Բ ու ը ս ա ,
Ս տ ա մ ք ու լ և Ա ն թ ա լ ի ա ք ա ղ ա ք ն եր ու մ :

Թեև Թուրքիան ընդունում է մեսսիսթցի
թուրքերին, սակայն նրա համար կարևոր է նաև
Սամցխեում թուրքերի ստվար բնակչություն
ունենալը: Չկարողանալով մեսսիսթցի թուրքերին
բնակեցնել արևելյան շրջաններում, Թուրքիայի
կառավարությունը 1990-ական թվականների երկրորդ
կեսին սկսեց ավելի ակտիվ աջակցել Սամցխե-
Ջավախեթի վերադառնալու պահանջով հանդես եկող
կազմակերպություններին: Թուրքիան նաև փորձեց
քայլեր ձեռնարկել իրարից անկախ
կազմակերպություններին համախմբելու և նրանց
գործունեությունն ավելի արդյունավետ
դարձնելու ուղղությամբ: Այդ նպատակով 2003 թ.
օգոստոսին Թուրքիայում գործող մեսսիսթցի
թուրքերի շուրջ 20 կազմակերպություններից ինը
ձևավորեցին «Ահըսկա թուրքերի
կազմակերպությունների միությունը»⁴⁵⁷:

Թուրքիան ակտիվ մասնակցություն է ունեցել
միջազգային առյաններում հիմնախնդրի
քննարկումներին, ինչպես նաև բազմիցս
բարձրացրել է այդ հարցը Վրաստանի հետ

⁴⁵⁶ Ukrayna'daki çatışmalardan kaçan Ahıska Türkleri Erzincan'a getirildi - <https://tr.euronews.com/2015/12/26/ukrayna-daki-catismalardan-kaçan-ahıska-turkleri-erzincan-a-getirildi> (24.01.2019); Ukrayna'dan Van Gölü kıyısına: Yeni Ahıska Ahlat - <http://www.hurriyet.com.tr/gundem/ukraynadan-van-golu-kiyısına-yeni-ahıska-ahlat-40116688> (24.01.2019).

⁴⁵⁷ Pentikäinen O., Trier T., op. cit., p. 29.

հարաբերություններում՝ ԵԱՀԿ հետ համատեղ ճնշում գործադրելով պաշտոնական Թբիլիսիի վրա⁴⁵⁸:

Հաջորդ տարիներին՝ Թուրքիայի նախաձեռնություններում պարբերաբար տեղի էին ունենում տարբեր ձևաչափերով հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում էին մեխսեթցի թուրքերի հայրենադարձման հարցը: Քննարկումների ընթացքում վրացական կողմի՝ Վրաստանի տարբեր շրջաններում բնակվելու առաջարկը հանդիպումներ կտրուկ քննադատության: Այսպես, «Մեսխեթցի թուրքերի կազմակերպություններին դաշնության» նախագահ Օսման Չելիկը, Ադրբեջանում «Վաթան»-ի ներկայացուցչության նախագահ Իբրահիմ Բուրխանովը և մեսխեթցի թուրքերի միջաբայ կազմակերպություններին ու համայնքների ներկայացուցիչները պնդում էին, որ իրենք ցանկանում են վերադառնալ հենց Ախալցխայի շրջան և այլ տարածքներ չեն գնա, ինչպես նաև Վրաստանի իշխանություններին կոչ էին անում հակադարձել տեղի հայ բնակչության դիրքորոշմանը⁴⁵⁹:

Վերջին շրջանում Թուրքիայի կառավարության և մեսխեթցի թուրքերի կազմակերպություններին ներկայացուցիչների միջև շփումները կրկին ակտիվացել են: 2018 թ. մարտամսին «DATÜB» Ահըսկա թուրքերի համաշխարհային միության նախագահ Չիյաթդին Կասանովը Բաքվում հանդիպեց Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մուլլու Չավուշօղլուին հետ: Հանդիպման ընթացքում քննարկված հարցերի թվում էր նաև մեսխեթցի թուրքերի հայրենադարձման հարցը և Վրաստանի

⁴⁵⁸ Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-мехетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019).

⁴⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

կողմից հարուցվող խոչընդոտները ⁴⁶⁰: Նույն տարվա հունիսին՝ Անթալիայում նույն ձևաչափով տեղի ունեցած հանդիպմանը Թուրքիայում կայանալիք նախագահական ընտրություններից անմիջապես առաջ Չիյաթդին Կասանովը հայտարարեց, որ մեսխեթցի թուրքերն աջակցում են Ռեջեփ Թայիփ Էրդողանին ⁴⁶¹: Ըստ Եռթյան, այդ հանդիպումների նպատակը Թուրքիայի կառավարության համար ընտրությունների նախապատրաստվելն էր: Միևնույն ժամանակ, մեսխեթցի թուրքերի համայնքի պատրաստակամությունը խոսում է այն մասին, որ վերջիններս կառավարությունից իրենց խնդիրները և և ծեղու սպասելիքներ ունեն: Թեև նա ձևով կաջակցի կառավարությունն այդ խնդիրների և և ծմանը, այս պահին դեռ պարզ է:

Նշենք, որ վերջին տարիներին թուրք պաշտոնյաները շարունակում են միջազգային հարթակներում բարձրացնել մեսխեթցի թուրքերի հարցը: 2016 թ. Թուրքիայի վարչապետ Ահմեդ Դավութօղլուն ԵսկևՎլիագումարնիստի ժամանակ իրելույթում նշեց, որ նա ակնկալում է Վրաստանի իշխանություններից ստանձնած պարտավորությունների իրականացում, ինչպես նաև կոչ արեց ընդգրկել հիմնախնդիրը Վրաստանի համար նախատեսված Եսկևրծողությունների ծրագրում ⁴⁶²:

Թուրքիան դիտարկում է Վրաստանը և հատկապես Սամցխե-Ջավախեթին որպես իր համար նազմավարական նշանակություն ունեցող տարածքներ ⁴⁶³: Նա ձգտում է մրցակցել տարածաշրջանում աշխարհաքաղաքական

⁴⁶⁰ İbrahimoglu M., DATÜB, Dışişleri Bakanı Mevlüt Çavuşoğlu ile Bakü'de görüştü - <https://www.ahiska.net/haber/637/datub-disisleri-bakani-mevlut-cavusoglu-ile-baku-de-gorustu> (19.02.2019).

⁴⁶¹ İbrahimoglu M., Dünya Ahıska Türkleri Birliği'nden ERDOĞAN'a destek - <https://www.ahiska.net/haber/638/dunya-ahiska-turkleri-birligi-nden-erdogan-a-destek> (19.02.2019).

⁴⁶² თურქეთი საქართველოსგან თურქი მესხების რეპატრაციის შესახებ შეთანხმების შესრულებას ელოდება - <http://www.ghn.ge/news/152055> (10.03.2019).

⁴⁶³ **Կար ապետյան Ռ.**, Թուրքիա-Վրաստան -Ադրբեջան համագործակցությունը և Յայաստանի անվտանգության հիմնախնդիրը - http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=15566 (16.02.2019).

շահեր հետապնդող Ռուսաստանի հետևյալ դիտարկում
 ավելի է աճում Սամցխե-Ջավախեթի
 նշանակությունը⁴⁶⁴: Երկրամասը կարևորվում է
 ինչպես տնտեսության, այնպես էլ քաղաքականության
 տեսանկյունից: Այս տարածքով են անցնում
 Թուրքիայի և Ադրբեջանի համար կարևոր
 նշանակություն ունեցող նավթատար և գազատար
 խողովակաշարերը, ինչպես նաև Թուրքիան
 Ադրբեջանի և միջինասիական պետությունների հետ
 կապող տարանցիկ ճանապարհներն ու երկաթուղին:
 Ընդ որում, այդ երթուղու վրա Սամցխե-Ջավախեթին
 միակշռան է, որտեղ չկա մեծաթիվ թյուրքալեզու
 բնակչություն և, փաստորեն, տարանջատում է
 թուրքերին ադրբեջանցիներից: Բացի այդ,
 մեսխեթցի թուրքերի Սամցխե-Ջավախեթի վերադարձի
 դեպքում Ադրբեջանը և Թուրքիան կարող են նրանց
 օգտագործել որպես Հայաստանի շրջափակման իրենց
 քաղաքականության ավելի արդյունավետ
 իրականացնելու գործոն և ավելի մեծ ճնշում
 գործադրել Արցախի հիմնախնդիրն իրենց օգտին
 լուծելու համար⁴⁶⁵: Ըստ էության, Թուրքիայի և
 Ադրբեջանի շահերը մեսխեթցի թուրքերի Վրաստան
 վերադարձնելու հարցում համընկնում են: Չպետք է
 նաև մոռանալ, որ Վրաստանի սահմանամերձ
 շրջաններում մեծաթիվ թուրքական համայնքը շատ
 հարցերում կունենա թուրքամետ դիրքորոշում,
 ինչն էլ թույլ կտա Թուրքիային լրացուցիչ
 լծակներ ստանալ և անհրաժեշտության դեպքում
 ճնշում գործադրել Վրաստանի իշխանությունների
 վրա՝ ի աջակցություն տարածաշրջանում

⁴⁶⁴ Üren M., Çıkar ve Güç Dengesi Kıskaçındaki Ahıska Türkleri Sorunu, s. 25-26; **Շաքարյան Ա.**, Թուրք
 մեսխեթցիները՝ տարածաշրջանային գործոն -
http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=539 (16.02.2019).

⁴⁶⁵ Kurt S., Ahıska'nın Türkiye İçin Jeopolitik Önemi, s. 208-212; Aydingün A., Ahıska (Meskhetian) Turks: Source of Conflict in the
 Caucasus?, p. 61.

թուրքական քաղաքականության : Ավելին ,
Թուրքիայի սահմանին բնակվող մեսխեթցի
թուրքերը կարող են անհրաժեշտության դեպքում
օգտագործվել Անկարայի կամ որևէ այլ շահագրգիռ
արտաքին ուժի կողմից՝ Վրաստանում նոր
անջատողական շարժում սկսելու համար :

Ադրբեջանը մեսխեթցի թուրքերին իր
հակահայկական քաղաքականության մեջ փորձեց
օգտագործել դեռևս 1990-ական թվականների սկզբին ,
երբ Ֆերգանայի դեպքերից հետո Ադրբեջան եկած
փախստականների մի մասին փորձեց բնակեցնել ԼՂԻՄ
տարածքում՝ ձգտելով փոխել մարզի էթնիկ կազմը ⁴⁶⁶:

Ադրբեջանի շահագրգռվածությունը մեսխեթցի
թուրքերի հայրենդարձության հարցում երևում է
նաև այն փաստից , որ այդ նպատակով Վրաստանի
դեսպանատներում ստացած հայրենադարձի
կարգավիճակ ստանալու նպատակով 5841 դիմումներից
5389-ը միայն Ադրբեջանից էին ⁴⁶⁷: Չաշվի առնելով
դիմումների ներկայացման գործում առկա
բարդությունները , պնդայտ է դառնում , որ
Ադրբեջանում բնակվող մեսխեթցի թուրքերին
դիմումների ներկայացման գործում ուղղորդել են
և աջակցել , ինչը կարող էին անել Ադրբեջանի
իշխանությունները :

Մեսխեթցի թուրքերին Սամցխե-Ջավախեթիում
բնակեցնելու Ադրբեջանի և Թուրքիայի շահերը
հակասում են Չայաստանի և Արցախի շահերին և
ուղղակիորեն սպառնում նրանց անվտանգությանը :
Թեև պաշտոնական երևանը մեսխեթցի թուրքերի
հայրենադարձության դեմ հանդես չի գալիս ,

⁴⁶⁶ Khazanov A. M., op. cit., p. 11; Карабахские депутаты: Ходжалу стал жертвой политических интриг и борьбы за власть в Азербайджане - <https://regnum.ru/news/962004.html> (25.01.2019); Арис Казинян: Грузия и американо-турецкий проект по возвращению турок-мехетинцев: история и реальность - <https://regnum.ru/news/671851.html> (10.01.2019);
Չարունըյունյան Դ., Թուրք-մեսխեթցիներ կամ դանդաղ
գործողությունների ակալան - <http://national-idea.am/articles.php?id=113> (13.01.2019).

⁴⁶⁷ Trier T., Tarkhan-Mouravi G., Kilimnik F., op. cit., p. 44.

այդուհանդերձ այս հարցը մտահոգություն պատճառ է հանդիսանում:

Սամցխե-Ջավախեթին Հայաստանի համար նույնպես ռազմավարական նշանակություն ունի, քանի որ այն Հայաստանին հարակից միակ շրջանն է, որտեղ չկա թյուրքալեզու բնակչություն և հանդիսանում է միակ ապահովող ղղիս դեպի Եվրոպա և Ռուսաստան: Եթե այնտեղ վերադառնան մեսխեթցի թուրքերը, ապա Հայաստանը կհայտնվի լիակատար թուրք-ադրբեջանական օղակի մեջ, քանի որ Իրանի հյուսիսային շրջաններն ու Վրաստանի Քվեմո Քարթլիի շրջանը նույնպես գերազանցապես բնակեցված են ադրբեջանցիներով, ինչն անկասկած կօգտագործվի Հայաստանի դեմ ռազմական գործողությունների վերսկսման դեպքում: Դրավառ օրինակը 1990-ական թվականներին մեծաթիվ ադրբեջանական բնակչություն ունեցող Մառնեուլիի շրջանում Ռուսաստանից Հայաստան մուտք գործող միակ գազատարի պարբերական պայթեցումներն են: Բացի այդ, մեսխեթցի թուրքերի Սամցխե-Ջավախեթի վերադարձը կարող է ուղեկցվել շրջանի հայաթափմամբ կամ առաջացնել լարված հարաբերություններ շրջանի հայերի և վրացիների հետ: Այս պարագայում ևս գոյություն ունի պատմական նախադեպ, երբ 1918 թ. Սամցխեի մահմեդական բնակչությունը քրիստոնյա հայերի և վրացիների դեմ հանդես եկավ:

Մեսխեթցի թուրքերի հիմնախնդրով հետաքրքրված է նաև Ռուսաստանի Դաշնությունը: Դեռ 1991 թվականից սկսած իշխանություններն ընդունեցին մի շարք իրավական ակտեր, որոնցով քննադատվում էր Խորհրդային Միության բռնի տեղահանումների քաղաքականությունը և նախատեսվում էր տուժածների իրավունքների

վերականգնում⁴⁶⁸: Սկզբնական շրջանում մեսխեթցի թուրքերն անհատականորեն ճանաչվում էին որպես բռնաճնշումների ենթարկված անձինք, սակայն որպես հավաքական խումբ՝ ոչ, քանի որ նրանք արտքասվել էին ոչ թե Ռուսաստանի, այլ Վրաստանի տարածքից: Այս երկակի իրավիճակը երկար չշարունակվեց և հետագայում դադարեցին մեսխեթցի թուրքերին տրամադրել համապատասխան փաստաթղթեր նաև անհատական դիմումների հիման վրա⁴⁶⁹: 1994 թ. ՌԴ նախագահի հրամանագրով մեսխեթցի թուրքերի խնդիրների լուծման համար ստեղծվեց դաշնային կառավարական հանձնաժողովը, որը բնական թյուրումն էր վարում Վրաստանի իշխանությունների հետ մեսխեթցի թուրքերին Վրաստան վերադարձնելու նպատակով⁴⁷⁰, նաև, որոշ հետագոտողների գնահատմամբ, հարցը դիտարկում էր գոտորպես երկրի անվտանգության և միջազգային հարաբերությունների, այլ ոչ թե սոցիալական ինտեգրման և մարդու իրավունքների պաշտպանության հարթակում⁴⁷¹:

Մեսխեթցի թուրքերի նկատմամբ Ռուսաստանի պաշտոնական դիրքորոշումը հստակ արտահայտվեց 1999 թ. մարտին Վիեննայում կայացած ոչ պաշտոնական խորհրդակցությունում Կրասնոդարի երկրամասում մեսխեթցի թուրքերի կարգավիճակը քննարկելու ժամանակ: Ռուսաստանի Դաշնության ազգային քաղաքականության առաջին փոխնախարար Կ.Մ. Տագոլովը հայտնեց, որ մեսխեթցի թուրքերի խնդիրը միայն նրանց Վրաստանում վերաբնակեցնելու պայմանների բացակայության մեջ է: Նա նաև հայտարարեց, որ մեսխեթցի թուրքերը

⁴⁶⁸ Закон РСФСР о реабилитации репрессированных народов - http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&link_id=15&nd=102011245 (20.03.2019); Закон РФ «О реабилитации жертв политических репрессий» - <http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&nd=102012774> (20.03.2019).

⁴⁶⁹ **Усманов А. О.**, указ. соч., с. 161.

⁴⁷⁰ **Aydingün A.**, Ahiska (Meskhetian) Turks: Source of Conflict in the Caucasus?, p. 58.

⁴⁷¹ Տե՛ս նաև յնտեղում, էջ 161-162.

Ռուսաստանի Դաշնության նախագահի Ժամանակակից քաղաքականության և առանձին ներքին հակամարտության ներքին համակարգային բնույթը չեն կրում ու նրանց իրավունքների խախտում չեն համարվում⁴⁷²: ՌԴ իշխանության այս դիրքորոշումը շարունակեց պահպանել նաև հետագա տարիներին, իսկ մեսխեթցի թուրքերին ՌԴ քաղաքացիության շնորհման հարցում երկրի քաղաքականությանը փոփոխություն չկրեց:

Միաժամանակ, ՌԴ ներկայացուցիչները հանդես գալով մեսխեթցի թուրքերի Վրաստան վերադարձի օգտին, փորձում են ճնշում գործադրել Վրաստանի իշխանության նկատմբ: Այդ ճնշումը զգալիորեն մեծացավ 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո: 2008 թ. հոկտեմբերին ՌԴ Պետական Դոմայում ընդունված հայտարարության մեջ նշվում էր, որ մեսխեթցի թուրքերի հայրենադարձության մասին օրենքը կրում էր հռչակագրի բնույթ և նպատակն էր ստեղծել խնդրի լուծման պատրանք: Բացի այդ, ռուս քաղաքական գործիչները ԵԽԽՎ-ին և միջազգային հանրությանը կոչ արեցին ճնշում գործադրել Վրաստանի վրա և ստիպել նրանց կատարել մեսխեթցի թուրքերի հայրենադարձության վերաբերյալ ստանձնած պարտավորությունները⁴⁷³: Յետագա տարիներին Ռուսաստանի այդ դիրքորոշումը մնաց անփոփոխ: Մեսխեթցի թուրքերի՝ Վրաստան վերադարձի հարցում Ռուսաստան, ի տարբերություն Թուրքիայի և Ադրբեյջանի, առաջ չի քաշում նրանց Սամցխե-Ջավախեթի ու մեծագույն ելու պահանջը, ինչը Վրաստանի իշխանության ներքին համար համեմատաբար ավելի ընդունելի է:

⁴⁷² Симоненко В. А., указ. соч., с. 133.

⁴⁷³ ГД призвала надавить на Грузию в вопросе репатриации турок-мехетинцев - <https://ria.ru/20081017/153397643.html> (17.01.2019).

Վրացական կողմը շտապեց մեղադրել ռուսական իշխանություններին մեսխեթցի թուրքերի իրավունքների խախտման և նրանց հանդեպ խտրականության համար: Վրաստանում ամրապնդվեց դեռևս 1990-ականներին ձևավորված կարծիքը, որ պաշտոնական Մոսկվան հաճախ օգտագործում է մեսխեթցի թուրքերի գործոնն ի վնաս վրաց ժողովրդի շահերի⁴⁷⁴: Վրաստանում նաև պնդում էին, որ պաշտոնական Թբիլիսին դրսևորել է քարի կամք՝ համաձայնելով ընդունել մեսխեթցի թուրքերին, չնայած որ ներգրավված չի եղել վերջիններիս տեղահանման գործում և մեղադրում են ԽՍՀՄ իշխանություններին, հետևաբար, նրանց իրավահաջորդ ՌԴ-ն պետք է որոշակի պարտավորություններ ստանձնի մեսխեթցի թուրքերի վերադարձի ֆինանսավորման հարցում⁴⁷⁵:

Կողմերի նման դիրքորոշումն ընդհանուր առմամբ պահպանվեց նաև հետագա տարիներին: Այդ մասին է վկայում ՌԴ-ում գործող մեսխեթցի թուրքերի «Վաթան» կազմակերպության երկայնացողի չնեթի ՌԴ նախագահ Վ. Պուտինին ուղղված իրենց իրավունքների վերականգնման որոշում ստորագրելու դիմումի⁴⁷⁶ արձագանքը: Նախագահի աշխատակազմից ստացած պատասխանում նշվում էր, որ մեսխեթցի թուրքերը բռնաճնշումների են ենթարկվել «Վրաստանի ԽՍՀ իշխանություններին համապատասխան որոշումներով և Վրաստանի ԽՍՀ տարածքում», ուստի ՌԴ ներքին գործերի մարմինները չունեն համապատասխան իրավական հիմք՝ տրամադրել

⁴⁷⁴ Мамулия Г., указ. соч., - https://www.ca-c.org/journal/cac-02-1999/st_19_mamulija.shtml (22.12.2018).

⁴⁷⁵ ԳՅՊՅԱՐՏԵՅ Թ., ճան. համ., թ. 161; Թուրք-մեսխեթցիները պայքարում են Վրաստանում իրենց տեղը գտնելու համար - <http://www.slaq.am/arm/news/61354/> (13.01.2019).

⁴⁷⁶ Хизриева Г. А., Турки – мекхетинцы просят президента Путина о реабилитации - <https://riss.ru/analitycs/9354/> (22.03.2019); Мамедов А., С реабилитацией ахыска восторжествует историческая справедливость: взгляд из Баку - <http://www.kavkazoved.info/news/2015/02/19/s-reabilitaciej-ahyska-vostorzhestvuet-istoricheskaja-spravedlivost-vzglyad-iz-baku.html> (22.03.2019).

իրավունքները վերականգնող փաստաթղթեր և խորհուրդ էր տրվում դիմել Վրաստանի իշխանությանը՝⁴⁷⁷ Միայն Վրաստանի խորհրդային կառավարությանը մեղադրելը, տվյալ պարագայում, կարելի է համարել անհիմն, քանի որ դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող էին միույն կողմից հանրապետության կառավարության ներկայացուցիչները նման մասշտաբային ծրագիրն ինքնուրույն իրականացնել և Մոսկվայի հետ կապ չունենալ:

Ռուսաստանում մեսխեթցի թուրքերը, որպես կանոն, իրենց արտաքսման յուրաքանչյուր տարեդարձը նշում են հանրահավաքներով, որոնցում վրաց իշխանությանը պահանջում են կազմակերպել զանգվածային հայրենադարձություն և Վրաստան⁴⁷⁸: ՌԴ իշխանությանը նախապես նման քայլերին և Վրաստանի հետ հարաբերություններին նոր սրման պարագայում կրկին կարող են ավելի ակտիվ օգտագործել մեսխեթցի թուրքերի հարցը: ՌԴ նման դիրքորոշման նպատակը կարող է լինել Վրաստանում ներքին քաղաքական վիճակի ապակայունացման ձգտումը⁴⁷⁹, և արվածություն առաջացնելով մեսխեթցի թուրքերի հավաք բնակության վայրերում, սակայն հարկ է նկատել, որ նրանց վերադարձը տարածաշրջանում կամրապնդի Թուրքիայի և ՆԱՏՕ-ի դիրքերը, ինչը ցանկալի է Ռուսաստանի համար: Նրա հետագա դիրքորոշումն այս հարցում մեծապես կապված է Վրաստանի և Թուրքիայի հետ իր ունեցած հարաբերություններին:

⁴⁷⁷ Усманов А. О., указ. соч., с. 164.

⁴⁷⁸ Турки-месхетинцы в годовщину депортации потребовали реабилитации своего народа - <https://www.kavkaz-uzel.eu/articles/312488/> (13.01.2019); Турки-месхетинцы на юге России отметили 72-ю годовщину депортации - <https://www.kavkaz-uzel.eu/articles/292637/> (13.01.2019).

⁴⁷⁹ Aydingün A., Ahiska (Meskhethian) Turks: Source of Conflict in the Caucasus?, p. 58.

Այս պիսոյի, կարող ենք եզրակացնել, որ Թուրքիան մեսխեթցի թուրքերի հիմնախնդիրն օգտագործում է իր աշխարհաքաղաքական շահերին ծառայեցնելու նպատակով: Թուրքիա տեղափոխվող մեսխեթցի թուրքերին Անկարան փորձում է օգտագործել քրդաբնակ շրջաններում՝ իր համար ցանկալի դեմոգրաֆիական փոփոխություններ հրականացնելու համար: Թուրքիայի կառավարությունը մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի նկատմամբ անտարբեր չլինելով, ստանում է նրանց աջակցությունը ներքաղաքական պայքարում, իսկ Սամցխե-Ջավախեթիում վերաբնակեցնելով՝ Անկարան ձգտում է Վրաստանում իր ազդեցությունը մեծացնելու և անտարածաշրջանում իր գերիշխանությունն ամրապնդելու: Միաժամանակ, այդ քայլով շահեկան դրություն մեջ կհայտնվի նաև Ադրբեջանը, որը կձգտի օգտագործել ստեղծված իրավիճակը և բարելավել իր դիրքերը Արցախյան հիմնախնդիրն իր օգտին լուծելու հարցում: Ըստ էության, հիմնախնդիրն այս երկու երկրների համար իրենց աշխարհաքաղաքական շահերի իրականացման գործիք է: Թեև ներկա փուլում այս ուղու շարժումը Թուրքիան և Ադրբեջանը Վրաստանի հետ հարաբերություններում չեն արժարժում հայրենադարձություն հարցը, ինչը պայմանավորված է սերտ տնտեսական և ռազմական գործընկերությամբ⁴⁸⁰, սակայն անտարածաշրջանում ուժերի դասավորվածություն փոփոխությունը կամ այլ փոփոխությունները կարող են կրկին Թբիլիսիի հետ բանակցությունների օրակարգ վերադարձնել այս հարցը:

⁴⁸⁰ Бахуридзе З. З., Внешняя политика Грузии в контексте развития международных отношений на постсоветском пространстве, Автореф. дис. док. пол. наук., Санкт-Петербургский государственный университет, Санкт-Петербург, 2016, с. 29.

Ռուսաստանի համար հիմնախնդիրն ունի երկու հարթակ՝ ներքին և արտաքին քաղաքականության մակարդակներում: Առաջինը կապված է երկրում մեսիտեթցի թուրքերի կացության և կարգավիճակի հետ: Ինչ վերաբերվում է արտաքին քաղաքականությանը, ապա Վրաստանի հետ հարաբերություններում պաշտոնական Մոսկվան խնդիրն օգտագործում է գերազանցապես վերջինիս վրա ճնշում գործադրելու նպատակով: Միևնույն ժամանակ, գործնական քայլեր այդ ուղղությամբ չի իրականացնում, ինչը կարելի է բացատրել մեսիտեթցի թուրքերի վերադարձի դեպքում Յարավայիս Կովկասում Թուրքիայի դերի մեծացմամբ: Ռուսաստանի և Վրաստանի իշխանությաններին մոտեցումը հիմնախնդիրն այս հարցում նման է: Երկուսն էլ փորձում են այն օգտագործել արտաքին քաղաքական շահերից ելնելով, սակայն իրենց երկրում մեսիտեթցի թուրքերի նկատմամբ վարած քաղաքականությանը լրիվ հակառակ պատկերն ունի:

Ելնելով վերոնշյալից՝ մեսիտեթցի թուրքերի հայրենադարձությանը պոտենցիալ սպառնալիք է Յայաստանի և Արցախի անվտանգության համար: Այս հարցի նկատմամբ աչալուրջ լինելու դեպքում, խնդրի առաջ գալուն գուցահեռ ՅՅ իշխանությանները կարող են ընդունել համապատասխան դիրքորոշում վերը նշված բացասական երևույթներից խուսափելու համար: Յաշվի առնելով Վրաստանի դիրքորոշումն ու վարած քաղաքականությանը, պաշտոնական Երևանը նույնիսկ կարող է աջակցել Թբիլիսիին այս հարցում, ինչն անկասկած կնպաստի նրանց միջև հարաբերություններին ամրապնդմանը:

Հայ տնի է նաև, որ 2. Գամսախուլը դիայի կարգադրություններ, թուրքական ինքնուրույնությունները մեսխեթցի թուրքերին գյուղերից հավաքում և ավտոբուսներով տանում էին դեպի Ադրբեյջանի կամ Ռուսաստանի սահման՝ երկրից վտարելու նպատակով⁴⁸⁴: 1990 թ. խորականություններն ավելի մեծ թափը նդուները: Նման քաղաքականություն և վերաբերմունքի, ինչպես նաև ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում Վրաստանում բնակվող մեսխեթցի թուրքերի մեծ մասը 1990-1992 թթ. ընթացքում ստիպված էր քեցերկրի տարածքը:

Ուշագրավ է նաև Ֆերգանայից Վրաստան տեղափոխված և քարելի շրջանի Բերթա գյուղում հաստատված Դվալիձե ազգանվամբ 10 ընտանիքների դեպքը: Համաձայն տեղեկությունների՝ նրանք տիրապետում էին վրացերենին, դժգոհություններն էին հայտնում: Տեղի բնակիչները պահանջեցին նրանցից ընդունել քրիստոնեություն, սակայն նրանք մերժեցին և գյուղացիները \$իզիկական ուժի կիրառմամբ վռնդեցին նրանց բնակավայրից: Իշխանությունները որևէ քայլ չձեռնարկեցին այս միջադեպը կարգավորելու և տուժածների օգնությունները վերականգնելու ուղղությամբ⁴⁸⁵:

Խորհրդային Միության փլուզումից հետո Վրաստան վերադարձաների թիվը կտրուկ նվազեց: Որոշ տվյալներով՝ 1999 թ. Վրաստանում մնացել էր ընդամենը 643 մեսխեթցի թուրք: Հիմնականում նրանք կենտրոնացած էին Նասակիրալի և Իանեթի գյուղերում (Արևմտյան Վրաստան) և Թբիլիսիում, իսկ 2005 թ. նրանց թիվը հասել էր 755-ի⁴⁸⁶: Այսինքն՝ հայրենադարձության պարտավորությունը ստանձնելուց 6 տարի անց պաշտոնական Թբիլիսի

⁴⁸⁴ Swerdlov S., Reflections on Transitional Minorities and Human Rights, p. 11-12.
⁴⁸⁵ Թուրքերի վերադարձը, ԵՊՀ, ԵՊՀ, 113-114.
⁴⁸⁶ Keskin S., Anaç Ö., Ahıska Türklerinin 1944 sürgününden günümüze Gürcistan'a geri dönüş mücadelesi ve 2007 yılına kadar dönenlerin durumu, s. 289.

ստանալ), ավանդույթները (մասնավորապես՝ ավանդական ընտանիքներում իգական սեռի ներկայացուցիչներին չեն թույլատրում ստանալ կրթություն կամ աշխատել, նույնիսկ, եթե դրա հնարավորությունը կա), ինչպես նաև որոշ մեսիսթեցի թուրքերի կողմից ինտեգրումը որպես ինքնուրույն փոփոխությունը նկատելի է ⁴⁹⁰:

Վրաստան վերադարձած մեսիսթեցի թուրքերից մեկը հարցազրույցի ժամանակ իրենց համար գլխավոր խնդիրն է համարել վրացերեն սովորելը, իսկ վրացիների համար՝ իրենց կրոնը ⁴⁹¹: Այդ խնդիրը լուծելու նպատակով 2013 թ. սկսած Վրաստանի Կրթության նախարարությունը հայրենադարձված մեծահասակ և նախադպրոցական տարիքի մեսիսթեցի թուրքերի համար կազմակերպեց լեզվի կարճատև դասընթացներ Ախալցխա, Իանեթի, Նասակիրալի և Աբասթուան բնակավայրերում ⁴⁹²: Սակայն հաշվի առնելով այն, որ լեզվի իմացության խնդիրը մինչ այժմ կա, այդ դասընթացներն այնքան էլ արդյունավետ չեն եղել: Միաժամանակ, վրացական գիտական շրջանակներում տարածված է այն միտքը, որ հայրենադարձները պարտադիր պետք է տիրապետեն վրացերենին և ծանոթանան իրենց պատմությանը: Չաճախ բարձրացվում է նաև Վրաստանի տարածքում չլուծված տարածքային հակամարտությունների խնդիրը, և որպես հայրենադարձության նախապայման՝ առաջ քաշվում այդ հակամարտությունների կարգավորումը ⁴⁹³:

Թուրք հեղինակներից մեկի կարծիքով՝ ինտեգրման խնդիրը հնարավոր էր լուծել, եթե իշխանությունները իսկզբանե մշակած լինեին սոցիալական ծրագրեր: Նա նաև

⁴⁹⁰ Tetradze M., op. cit., p. 133.

⁴⁹¹ Georgia: Meskhetians search for cultural identity (Part I) - <https://www.rferl.org/a/1096532.html> (27.02.2019).

⁴⁹² Tetradze M., op. cit., p. 133.

⁴⁹³ ფეդკარაძე ტ., დას. ნაშ., 160-166.

հայրենադարձության խոչընդոտների թվին է դասուում տնտեսական բնույթի հարցերը, մասնավորապես, մեսխեթցի թուրքերի համար աշխատանք գտնելը: Նրանց մեծ մասը չունի մշտական աշխատանք: Լեզվի չիմացության հարցը նույնպես բացասական ազդեցություն ունի հասարակությանն ինտեգրվելու գործում: Բացի այդ, Վրաստան տեղափոխված մեսխեթցի թուրքերը չեն կարող օգտվել առողջապահական և սոցիալական ծրագրերից, որոնք առկա են երկրում քանի դեռ չունեն քաղաքացիություն: Նաևան խոչընդոտ է համարում մեսխեթցի թուրքերի նկատմամբ երկրում ձևավորված բացասական հասարակական կարծիքը⁴⁹⁴: Ըստ էության, ինտեգրման խոչընդոտները կապվում են նաև հայրենադարձությանը արգելակող հանգամանքների հետ:

Մեկ այլ թուրք հեղինակի կարծիքով մեսխեթցի թուրքերի վերադարձին խոչընդոտում է նաև խնդրում ներառված կողմերի՝ Վրաստանի ու մեսխեթցի թուրքերի ուժերի ասիմետրիկ դասավորվածությունը, ինչի հետևանքով վերջիններս հնարավորություն չունեն ուղղակի ազդել պաշտոնական թբիլիսիի քաղաքականության վրա⁴⁹⁵: Մինչդեռ իրականում, Վրաստանում մեսխեթցի թուրքերի հիմնախնդրի առաջխաղացման ուղղությամբ, ինչպես արդեն նշվել է, Անկարան բավականին մեծ աշխատանք է կատարել:

Ըստ հետազոտող Գ. Եմելյանովայի, մեսխեթցի թուրքերի վերադարձին խոչընդոտում է նաև նրանց թույլ կազմակերպվածության աստիճանը, ինչն ընդգծված մարտավարական մտածողություն ունեցող առաջնորդների բացակայության, կազմակերպություններին փոքր թվով մարդկանց

⁴⁹⁴ Keskin S., Ahıska Türklerinin Gürcistan'a geri dönüşü: 2007 geri dönüş yasası ve uygulamadaki sorunlar, s. 405.

⁴⁹⁵ Üren M., Çıkar ve Güç Dengesi Kıskaçındaki Ahıska Türkleri Sorunu, s. 29-30.

անդամակցության, կայուն ֆինանսավորման և ծրագրված քարոզիքացակայության հետևանք է: Նախնայնդնդոտներին թվին է դասուում նաև հնարավոր էթնիկ հակամարտության վտանգը և Սամցխե-Ջավախեթի ռազմավարական նշանակությունը տարածաշրջանի երկրներին աշխարհաքաղաքական շահերի համար ⁴⁹⁶:

Վրացի հեղինակներինց մեկի կարծիքով՝ մեսխեթցի թուրքերի վերադարձը Վրաստան անհնար է դարձել երկրում եղած ներքին երկպառակտության ներքին, քաղաքական քառսի, տնտեսության անկման և ռուս-վրացական պատերազմի պատճառով ⁴⁹⁷: Խոչընդոտներին թվում են դիտարկվում նաև հողերի անբավարարությունը, Թուրքիայի ազդեցության մեծացումը և էթնիկ խմբերի միջև լարվածության հնարավորությունը ⁴⁹⁸: Իսկ Վ. Յոզյանի կարծիքով, բացի վերոնշյալից, հայրենադարձված մեսխեթցի թուրքերի փոքր թիվը պայմանավորված է նաև միջինասիական երկրներում, Ադրբեջանում և Թուրքիայում նրանց համարավելի լավ պայմանների առկայությամբ և մասնակի ուժացմամբ ⁴⁹⁹:

Թուրք հեղինակները խնդիրներին շարքում դիտարկում են նաև Սամցխե-Ջավախեթի ու մհայկական բնակչության մեծամասնություն կազմելը: Նրանք նշում են, թե իբր «մեծ թվով հայ պաշտոնյաների» գործունեությունը նպաստեց երկրամասում մեսխեթցի թուրքերի նկատմամբ բացասական վերաբերմունքի ձևավորմանը, ինչպես նաև առաջ են քաշում նրանց շրջանում «անջատողական տրամադրությունների առկայությունը»:

⁴⁹⁶ **Yemelyanova G.**, Georgia's European Quest: The Challenge of the Meskhetian Turks, - Caucasus International, 2005, Vol. 5, № 3, p. 81-85.

⁴⁹⁷ **Тухашвили М.**, Беженцы и вынужденно перемещенные лица в Грузии, - КАРИМ-Восток – Консорциум прикладных исследований по международной миграции (Пояснительная записка 13/104), 2013, с. 4 - http://www.carim-east.eu/media/exno/Explanatory%20Note_2013-104.pdf (07.03.2019).

⁴⁹⁸ **Новикова Г. В., Дашко В. И.**, указ. соч., с. 249-252.

⁴⁹⁹ **Յոզյան Վ.**, Թուրք-մեսխեթցիների Վրաստան վերադարձի խնդիրի շուրջ, - http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=460 (02.03.2019):

Մե ս խ ե թ ց ի թ ու ը ք ե ռ ի վ ե ռ ա դ ա ղ ր ղ դ ի տ ա ղ կ ու մ ե ն ո ղ ր ա չ ե ս « հ ա յ ե ռ ի ա զ դ ե ց ու թ յ ու ն ը » թ ու լ ա ց ն ե լ ու տ ա ղ ք ե ռ ա կ ⁵⁰⁰: Յ ա ղ ց ի ն կ ա տ մ ա մ ք ն մ ա ն մ ո ղ տ ե ց ու մ կ ա ղ ո ղ է ձ ն ա վ ո ղ ղ ե լ մ ի ա յ ն ե ղ կ ու ո ղ ե ա ք ու մ` ե թ ե հ ե ղ ի ն ա կ ը ք ա վ ա կ ա ն ա չ ա փ ծ ա ն ո թ չ է շ ղ ջ ա ն ի ա ջ ա շ տ ո ն յ ա ն ե ղ ի ա զ գ ա յ ի ն կ ա զ մ ի ն ⁵⁰¹, կ ա մ ի ն չ -ի ն չ ա ղ ա տ ճ ա ղ ն ե ղ ո վ ց ա ն կ ա ն ու մ է խ ե ղ ա թ յ ու ղ ղ ե լ ի ղ ա կ ա ն ու թ յ ու ն ը և « ք ա ղ ո ղ ե լ մ ե ղ ք ը հ ա յ ե ղ ի վ ղ ա »: Ա յ դ մ ա ս ի ն ե ն վ կ ա յ ու մ թ ու ը ք և ա դ ղ ք ե ջ ա ն ց ի հ ե ղ ի ն ա կ ն ե ղ ի կ ո ղ մ ի ց ի ղ ե ն ց հ ո ղ վ ա ծ ն ե ղ ու մ շ ղ ջ ա ն ի « ա ն ջ ա տ ո ղ ա կ ա ն շ ա ղ ժ մ ա ն ը » ն վ ի ղ վ ա ծ ք ա վ ա կ ա ն ի ն ը ն դ հ ա ղ ձ ա կ ա ն դ ղ ա դ ա ղ ե ղ ը ⁵⁰²:

Վ ղ ա ս տ ա ն ի հ ա ս ա ղ ա կ ու թ յ ա ն , ա յ դ թ վ ու մ ջ ա վ ա խ ա հ ա յ ու թ յ ա ն դ ե ղ ը մ ե ս խ ե թ ց ի թ ու ը ք ե ղ ի վ ե ղ ա դ ա ղ ր ղ ն ա ղ գ ե լ ե լ ու գ ո ղ ծ ու մ ա վ ե լ ի լ ա վ ա ղ ա տ կ ե ղ ա ց ն ե լ ու հ ա մ ա ղ ա ն հ ղ ա ժ ե շ տ է ու ս ու մ ն ա ս ի ղ ե լ և վ ե ղ ու ծ ե լ ա յ դ հ ա ղ ց ի վ ե ղ ա ք ե ղ յ ա լ հ ա ս ա ղ ա կ ու թ յ ա ն կ ա ղ ծ ի ք ը : Ա յ դ ն ա ղ ա տ ա կ ո վ 2009 թ վ ա կ ա ն ի ն Ս ա մ ց խ ե -Չ ա վ ա խ ե թ ի ու մ ա ն ց կ ա ց վ ե լ է ս ո ց ի ա լ ա կ ա ն հ ա ղ ց ու մ : Յ ա ղ ց մ ա ն ը մ ա ս ն ա կ ց ե լ ե ն Ա խ ա լ ց խ ա յ ի և Ա դ ի գ ե ն ի շ ղ ջ ա ն ի գ յ ու ղ ե ղ ի (Ա ք ա ս թ ու մ ա ն , Ու ո ղ , Ճ ն ի ս ի) 18-ի ց ք ա ղ ղ տ ա ղ ի ք ի ք ն ա կ ի չ ն ե ղ ը : Յ ա ղ ց վ ա ծ ն ե ղ ի 87%-ը դ ե մ է ա ղ տ ա հ ա յ տ վ ե լ մ ե ս խ ե թ ց ի թ ու ը ք ե ղ ի հ ա յ ղ ե ն ա դ ա ղ ձ ու թ յ ա ն ը , 3%-ը` կ ո ղ մ , ի ս կ 10%-ը դ ժ վ ա ղ ա ց ե լ է ա ղ ա տ ա խ ա ն ե լ : Յ ա ղ ց վ ա ծ ն ե ղ ի մ ե ջ ք ո լ ո ղ հ ա յ ե ղ ը և վ ղ ա ց ի ն ե ղ ի ճ ն շ ո ղ մ ե ժ ա մ ա ս ն ու թ յ ու ն ը դ ե մ ե ն ա ղ տ ա հ ա յ տ վ ե լ , հ ի մ ն ա վ ո ղ ե լ ո վ ի ղ ե ն ց դ ի ղ ք ո ղ ղ շ ու մ ը Ա ղ ա ջ ի ն հ ա մ ա շ խ ա ղ հ ա յ ի ն ա ղ ա տ ե ղ ա զ մ ի տ ա ղ ի ն ե ղ ի ն կ ա տ ա ղ վ ա ծ

⁵⁰⁰ Kurt S., Ahıska'nın Türkiye İçin Jeopolitik Önemi, s. 208-212.

⁵⁰¹ Խ ո ս ք ը ն ա խ և ա ղ ա ջ Ա խ ա լ ց խ ա յ ի , Ա դ ի գ ե ն ի և Ա ս ա ի ն ձ ա յ ի շ ղ ջ ա ն ն ե ղ ի մ ա ս ի ն , ո ղ տ ե ղ ի ց է լ ա ք ս ո ղ ղ ե լ է մ ե ս խ ե թ ց ի թ ու ը ք ե ղ ի ճ ն շ ո ղ մ ե ժ ա մ ա ս ն ու թ յ ու ն ը : Ա յ դ շ ղ ջ ա ն ն ե ղ ղ ու մ ա ղ տ ա կ ա ն ա ղ ա ղ ա տ ի ա շ խ ա տ ո ղ ն ե ղ ի մ ե ժ մ ա ս ը , հ ա տ կ ա ղ ե ս ա ղ ա վ ե լ ա ղ ա տ ա խ ա ն ա տ ու ա ջ ա շ տ ո ն ն ե ղ գ ք ա ղ ե ց ն ո ղ ն ե ղ ը , վ ղ ա ց ի ե ն : Տ ե ' ս ս ի ա լ լ ց ի ո ղ մ ը ն ի ղ ղ ղ ղ ղ ղ ղ ղ - <https://www.akhaltsikhe.gov.ge/ge/samxedro-sakme> (15.02.2019).

⁵⁰² Гаджиев А., указ. соч., с. 8-9, 12-13; Kurt S., Ahıska'nın Türkiye İçin Jeopolitik Önemi, s. 208-210.

իրադարձություններով և հնարավոր անցանկալի ժողովրդագրական փոփոխություններով: Կողմ են արտահայտվել միայն այն վրացիները, ովքեր եկամտական կապեր ունեն արտաքսվածների հետ, սակայն այն վերապահումով, որ հայրենադարձվածները պետք է վերաբնակեցվեն ոչ միայն Սամցխե-Չավախեթիում⁵⁰³:

Եթե այս հարցման արդյունքները համեմատենք 1999 թ. անցկացված հարցման արդյունքների հետ, ապա պարզ է դառնում, որ 10 տարվա ընթացքում հասարակական կարծիքը գրեթե նույնն է, չնայած, որ նախորդ անգամ մասնակցել է Թբիլիսիի բնակչունը: 1999 թ. հարցվածների 46,6%-ը կտրականապես դեմ է եղել մեսխեթցի թուրքերի վերադարձին, 44%-ը ընդունելի է համարել միայն վրացական ինքնուրույն ունեցողների հայրենադարձությունը, և միայն 6,6%-ն է արտահայտվել կողմ⁵⁰⁴: Այլ ուսումնասիրությունները ևս փաստում են Վրաստանում մեսխեթցի թուրքերի հայրենադարձության նկատմամբ հանրության բացասական վերաբերմունքի մասին⁵⁰⁵:

Վրացիների բացասական վերաբերմունքը մեսխեթցի թուրքերի նկատմամբ արտահայտվեց դեռևս 1990 թվականին, երբ վրացիները երկրում բնակվող հայերի ու աբխազների⁵⁰⁶ հետմիասին կտրուկ քայլեր ձեռնարկեցին մեսխեթցի թուրքերի, այսպես կոչված, «դեպի հայրենիք արշավի» դեմ⁵⁰⁷: Հայտնի են նաև դեպքեր, երբ հայրենադարձված մեսխեթցի

⁵⁰³ ԹոգոժաժոՅ., Վան. ԵՅՄ., թ. 181-185:

⁵⁰⁴ Sumbadze N., op. cit., - <http://www.policy.hu/sumbadze/Nana--Meskhetians5.html> (03.03.2019); Nodia G., op. cit., p. 55.

⁵⁰⁵ Бадурашвили И., Цуладзе Г., Анчабадзе Г., указ. соч. - https://www.ca-c.org/journal/2000/journal_rus/cac07_2000/21.badurashv.shtml (20.02.2019).

⁵⁰⁶ Հնայած վրացիների և աբխազների միջև արդեն առկա լարվածությունը, մեսխեթցի թուրքերի վերադարձի շուրջ նրանց դիրքորոշումը համընկավ և միասին հանդես եկան այս հարցի շուրջ:

⁵⁰⁷ Энох Р., «Турки-месхетинцы» - «поход на родину» - 1990г., - «Центральная Азия», 1997, № 10 - https://www.ca-c.org/journal/10-1997/st_15_enoh.shtml (20.01.2019).

թուրքերին ազգութայամբ վրացի գյուղացիները
թույլ չէին տալ իսբնակվել իրենց գյուղում ⁵⁰⁸:

Փաստորեն, ինչպե՛ս նախկինում, այնպե՛ս էլ
ներկայումս մեսխեթցի թուրքերի վերադարձին դեմ
ենան վրացիների ճնշող մեծամասնություները, ինչն,
անկասկած, շատ ավելի մեծ խոչընդոտ է, քան
ջավախահայության դեմ լինելը: Այս հարցումների
արդյունքներն ավելորդ անգամ ապացուցում են
Վրաստանի իշխանությունների կողմից «հայկական
գործոնի» դերի չափազանցման և իրականության ոչ
ամբողջական ներկայացման հնարքը: Հաշվի
առնելով այս ամենը՝ մեսխեթցի թուրքերի
վերադարձը Սամցխե-Ջավախեթի կարող է առաջացնել
լարված հարաբերություններ տեղացի վրացիների և
հայերի հետ:

Վերջին մի քանի տարիների ընթացքում
Ջավախքում թուրքական գործոնի ակտիվացման
հետևանքով նման խնդիրներ արդեն արձանագրվել են
շրջանում բնակություն հաստատող թուրքերի ⁵⁰⁹ և
տեղաբնակ հայերի միջև ⁵¹⁰: Ընդամենն, հաճախակի են
դարձել թուրքերի կողմից սահմանային հայկական
գյուղերում ավազակային հարձակումների մասին
տեղեկությունները ⁵¹¹: Բացի այդ, վրացիները
մտավախություն ունեն, որ հավաք (կոմպակտ)
բնակված մեսխեթցի թուրքերը կարող են
ինքնավարություն պահանջել, ինչը Վրաստանում

⁵⁰⁸ დეპორტირებული მესხები: ფერგანამდე და უკან - <http://www.tabula.ge/ge/story/54490-deportirebuli-mesxebi-ferganamde-da-ukan> (12.01.2019).

⁵⁰⁹ **Մակարյան Վ.**, Հայաթափվող Ջավախքում այսօր արդեն թուրքերն ու ադրբեջանցիցներն են տնավորվում - <https://hraparak.am/post/591fa742e3d84d0d37fd05ed> (22.01.2019).

⁵¹⁰ Ծեծկռտուք Ջավախքում՝ հայերի և թուրքերի միջև - <http://araratnews.am/tcetckrtukh-javaxkhum`-hayeri-ev-thurkheri-mijev/> (22.01.2019).

⁵¹¹ Թուրքերը Կարծախ գյուղից գողացել են 33 անասուն - <http://javakhkmedia.com/թուրքերը-հատելով-վրաստանի-սահմանը-կա/> (16.01.2019); Թուրքերը գիսված մտել են Ջավախքի Կարծախ գյուղ, դա-
ան ծեծի ենթարկել պահակին և գողացել 32 անասուն - <https://infocom.am/?p=5279&l=am> (22.05.2019).

մի անշանակ բացասական է ընկալվում՝ ելնելով Աբխազիայի և Յարավայի ն Օսիայի փորձից:

Նշենք, որ բացի այնպիսի սուբյեկտիվ պատճառներից, ինչպիսիք են՝ հասարակական բացասական կարծիքը, ինտեգրման ծրագրերի բացակայությունը, հայրենադարձություն մասին օրենքի բարդությունը, կան նաև օբյեկտիվ արգելքներ՝ սոցիալ-տնտեսական բարդությունները, իրավական և նյութական բնույթի բազմաթիվ խնդիրները, որոնք կարող են առաջանալ արտաքսվածների և նրանց նախկին բնակավայրերում բնակեցված վրացիների միջև, մեսխեթցի թուրքերի ներկա սերնդի շրջանում Սամցխեի նկատմամբ կապվածություն թուլացումը, իրենց բնակություն վայրերում հարմարվելու և կրկին տեղափոխվել չցանկանալը:

Ինչ վերաբերվում է արդեն Վրաստան վերադարձած մեսխեթցի թուրքերին, ապա վրացական հասարակությունում նրանց ինտեգրման արգելքները մասամբ համընկնում են նշված խնդիրների հետ, այն է՝ ինտեգրման ծրագրերի բացակայությունը, հասարակության բացասական կարծիքը, մշակութային տարբերությունները, ինչի հետևանքով վրացիներն ընդունում են նորեկներին որպես օտարներ:

Այսպիսով, մեսխեթցի թուրքերի դրությունը Վրաստանում այնքան էլ բարվոք չէ, իսկ հասարակության մեջ ինտեգրման մակարդակը շատ ցածր է: Ինտեգրման գործընթացի գլխավոր խոչընդոտներին է վրացերեն և եզրի չիմացությունը, որի հետևանքով դժվար է սովորել և աշխատել: Այս ամենն, անկասկած, էականորեն նվազեցնում է Վրաստան վերադառնալ ցանկացող մեսխեթցի թուրքերի թիվը:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով մեսիտեթցի թուրքերի կազմավորման վրացական և թյուրքական վարկածները, XVII-XX դարերում Սամցխեում և Ջավախքում ընթացող ժողովրդագրական գործընթացների արդյունքում տվյալ հանրույթի կազմավորումը, նրանց արտաքսումը միջինասիական հանրապետություններ, հայրենադարձության շարժման սկզբնավորումը և զարգացումը, նշված էթնոկրոնական խմբի կացությունը տարբերելիներում, հիմնահարցի դերը Վրաստանի վարած արտաքին և ներքին քաղաքականության մեջ, նրա

դրսևորումը տարածաշրջանի երկրներին
աշխարհաքաղաքական նպատակներում և մեսիսթեթի
թուրքերի նախկին բնակություն վայրեր
վերադառնալու արգելակող հանգամանքները՝
եկելենքհետևյալ եզրահանգումներին:

• Մեսիսթեթի թուրքերի կազմավորման
թյուրքական վարկածի կողմնակից հեղինակների
աշխատանքներն Ադրբեջանում և Թուրքիայում
տարածված պատմական ռևիզիոնիզմի
քաղաքականություն տրամաբանությամբ
խեղաթյուրում են տարածաշրջանի պատմությունը:
Այս հեղինակները թյուրքական ցեղերի
արշավանքները հիմնականում ներկայացնում են
որպես մեծաթիվ թյուրքախոս բնակչության
ներհոսք, մինչդեռ այդ մասին վկայող հիմնավոր
փաստեր չկան: XI դարից սկսած թյուրքական որոշ
բնակչություն կարող էր հաստատվել Սամցխեում,
սակայն հաշվի առնելով ավելի ուշ շրջանի
բնակչության կազմի մասին աղբյուրների
տեղեկությունները, կա՛մ նրանց թիվն աննշան էր,
կա՛մ էլ ժամանակի ընթացքում նրանք ինչ-ինչ
պատճառներով լքել են նշված շրջանը: Տեղի
բնակչության մահմեդականացման և թրքացման
վարկածն ավելի լավ է մշակված և ընդհանուր
առմամբ հենվում է բավականին մեծ թվով
աղբյուրների վրա: Սակայն սույն տեսակետի
գլխավոր թերությունը պարզեցված մոտեցումների
մեջ է՝ բացառվում է թյուրքական ազդեցությունը
մինչ XVI դարի վերջը, ինչպես նաև անտեսվում են
օսմանյան շրջանում հնարավոր ժողովրդագրական
տեղաշարժերն ու թուրքերի ներհոսքը: Երկու
տեսությունների կողմնակիցներն էլ հաճախ
անտեսում են մեսիսթեթի թուրքերի կազմավորման
գործընթացում այլ էթնոսների մասնակցության
հնարավորությունը, մինչդեռ աղբյուրներն

ուղղակի կամ անուղղակի կերպով վկայում են այդ մասին:

